«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍԿ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2020թ.

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է Կոնսերվատորիայի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 3 տեղացի և 2 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից: Այս զեկույցը պարունակում է ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 22

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 22

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 26

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 29

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 32

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 37

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 42

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 55

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 69

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 79

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 85

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 86

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խմբի կողմից հաշվի է առնվել, որ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (ԵՊԿ) երաժշտական մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական հաստատություն է: ԵՊԿ-ն բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում երաժշտական կրթություն ապահովող միակ պետական բուհն է ՀՀ-ում և միտված է ապահովել գիտելիքի և մասնագիտական հմտությունների ձևավորումը, կատարելագործումը, փոխանցումը և հանրահռչակումը՝ ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից:

Կոնսերվատորիայի ներկայիս Ռազմավարական ծրագիրը հաստատվել է 2018թ. դեկտեմբերի 14-ին և ընդգրկում է ԵՊԿ-ի առաքելությունը, 2019-2024 թվականների համար նախատեսված նպատակները, խնդիրները և դրանց իրագործման գործողությունները: Սակայն նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների պլանում բացակայում է՝ ժամանակացույցը, սահմանված չեն պատասխանատուները և գնահատման ցուցիչները (KPI), ինչը դժվարեցնում է ռազմավարական ծրագրի իրականացման կազմակերպումը: Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար մեխանիզմ են համարվում ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք սակայն չեն կազմվում ըստ ռազմավարական նպատակների, ինչը իր հերթին դժվարացնում է առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման մշտադիտարկումը և գնահատումը, բարելավման համար անհրաժեշտ մեխանիզմներ և ընթացակարգեր դեռևս չկան:

ԵՊԿ-ի կառուցվածքն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը: Դրական է նաև էթիկայի մշտական հանձնաժողովի ձևավորումը և գործունեությունը: Առկա նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն մոտ ապագայում Կոնսերվատորիայում իրականացվող ուսումնական գործընթացների կայունությունը ապահովելու համար: Կոնսերվատորիայի յուրահատկություններից ելնելով կատարողական մասնագիտությունների ուղղությամբ ուսումնական պրոցեսը լիարժեք կազմակերպելու համար՝ պահանջվում է պատշաճ վիճակում գտնվող երաժշտական բազմաթիվ գործիքների առկայություն: Երաժշտական գործիքների բարձր արժեքը, Կոնսերվատորիայի ձեռնարկատիրական գործունեության, ինչպես նաև պետության կողմից այս նպատակների համար զգալի ֆինանսավորման բացակայությունը լուրջ մարտահրավեր է ԵՊԿ-ի համար: Երաժշտական գործիքների սակավությունը և նոր գործիքներ ձեռք բերելու ֆինանսական ռեսուրսների բացակայությունը վտանգում են ԵՊԿ-ի ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Կոնսերվատորիան իրականացնում է երկարաժամկետ պլանավորում, սակայն բացակայում է միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը, ինչը կասկածի տակ է դնում Կոնսերվատորիայի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը «նպատակներին համապատասխանության» տեսակետից: Ստորաբաժանումների գործունեությունը չի մշտադիտարկվում և չի գնահատվում, համապատասխան մեխանիզմները բացակայում են: Որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) դեռևս ներդրված չէ, ինչը վտանգում է Կոնսերվատորիայի արդյունավետ գործունեությունը: Կոնսերվատորիայի գործընթացների արդյունավետությունը, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության

հրապարակումները գնահատող մեխանիզմները բացակայում են, ինչը խոչընդոտում է Կոնսերվատորիայի գործունեության թափանցիկության ապահովումը:

ԵՊԿ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները համապատասխանում են ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին, Կոնսերվատորիայի առաքելությանը և մշակված են ըստ ուսումնառության արդյունքների: ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը բացակայում է, ՄԿԾ-ները ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցման (alignment) կարիք ունեն: ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն և մեխանիզմներ սահմանված չեն: Կոնսերվատորիան դեռևս չի սահմանել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ և ընթացակարգեր, ինչը հավանական է դարձնում ուսումնական և հետազոտական գործունեության սահմաններում գրագողության երևույթների առկայությունը: Մասնագիտական (կատարողական, ստեղծագործական) դասընթացներում առկա են ուսանողակենտրոն մոտեցումներ: Դա ուսումնական գործընթացը անհատական պարապմունքների միջոցով կազմակերպելու արդյունք է: Նշված դասընթացների ընթացքում դասախոսը անրադառնում է յուրաքանչյուր ուսանողի կատարողականությանը՝ շեշտադրելով և շտկելով յուրաքանչյուր դիտվող խնդիրը:

ԵՊԿ-ում գործում են ուսանողների հավաքագրման մեխանիզմներ: Բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում ընդունելությունն իրականացվում է ըստ կառավարության կողմից հաստատված պետական կարգերի, որոնք սակայն ԵՊԿ-ի ներբուհական մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգը չեն ներառում: ԵՊԿ-ում մասնագիտական կատարողական դասընթացները իրականացվում են անհատական պարապմունքների միջոցով, ինչը արդյունավետ ուսուցումից բացի հնարավորություն է տալիս ուսանողներին բարձրացնել իրենց ուսումնական զարգացմանը վերաբերող խնդիրները: Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության նպատակով անցկացվում են նաև հարցումներ, որոնք սակայն ընդհանրական են և սահմանված պարբերականություն չունեն: Կարևոր է, որ Կոնսերվատորիան վերջին տարում ուսանողների և դասախոսների կարիքների վերհանման նոր մեխանիզմ է ներդրել՝ «ռեկտորի հանդիպումներ ուսանողների և դասախոսների հետ»: Հանդիպումների ընթացքում մի շարք խնդիրներ են դուրս բերվել, որոնց մի մասը արդեն լուծում է ստացել, իսկ մի մասը գտնվում է ռեկտորի ուշադրության կենտրոնում: Ուսանողները ներգրավված են Կոնսերվատորիայի կառավարման խորհուրդներում, սակայն կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների և Կոնսերվատորիայի ուսանողական համայնքի կապը չի ապահովվում, արդյունքում կառավարման մարմիններում ներգրավված ուսանողները կարող են բարձրաձայնել միայն սեփական կարիքները և ուսանողական համայնքը չեն ներկայացնում: ԵՊԿ-ում գործում է «բաց դռների» ոչ ֆորմալ քաղաքականություն, որի արդյունքում ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել ուսումնական և վարչական ստորաբաժանումների աշխատակիցներին: Ուսանողների իրավունքների պաշտպանությունը ապահովում են ուսանողական խորհուրդը և էթիկայի հանձնաժողովը:

ԵՊԿ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: ԵՊԿ-ում աշխատում են վաստակաշատ երաժիշտ մասնագետներ, որոնց զգալի մասը արվեստի վաստակավոր գործիչներ և միջազգային մրցույթների դափնեկիրներ են: Միևնույն ժամանակ ԵՊԿ-ն դեռ չունի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գնահատման քաղաքականություն և թափանցիկ մեխանիզմներ, չի մշակվել պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների համապատասխան մասնագիտական վերապատրաստման ծրագիր, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման, ընտրության և առաջխաղացման կանոնակարգային հենքը բարելավման կարիք ունի:

ԵՊԿ-ն կարևորում է գիտական գործունեությունը և իրեն դիրքավորում է որպես արվեստի ոլորտում հետազոտական հաստատություն, ինչը արտահայտված է ՌԾ-ում որպես նպատակ: Միևնույն ժամանակ, գործողությունների պլանում նկարագրված չէ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը, նշված չեն գնահատման առանցքային ցուցանիշները, ինչի արդյունքում նպատակի իրականացումը վտանգվում է: ԵՊԿ-ում գիտական հետազոտությունների համար կարևոր նշանակություն ունի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» լաբորատորիան: Սակայն այս միակ գիտական լաբորատորիայի առկայությունը բավական չէ կոնսերվատորիայում գիտական գործունեության ծավալման համար: Թեպետ երաժշտագիտություն մասնագիտության շրջանակներում ևս իրականացվում են առանձին գիտական ուսումնասիրություններ, այնուամենայնիվ ԵՊԿ-ի առաջնահերթ գիտական ուղղությունները սահմանված չեն, Կոնսերվատորիան իր դասախոսների հետազոտական գործունեությունը չի ուղղորդում: ԵՊԿ-ում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվող գիտական հրապարակումների վերաբերյալ տեղեկատվություն չի հավաքագրվում: Կոնսերվատորիայի տեսական և կատարողական երաժշտական ուղղվածություններից բխող հետազոտական ոլորտի ժամանակակից միջազգային փորձը ուսումնասիրված չէ: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումը չի իրականացվում և չի կարևորվում:

ԵՊԿ-ն ապահովված է ուսումնական և հետազոտական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ տարածքով Երևանում և Գյումրիում, որը ներառում է՝ լսարաններ, լաբորատորիաներ, ստուդիաներ, ձայնադարան, գրադարաններ: ԵՊԿ-ն զգալի խնդիրներ ունի կապված առկա երաժշտական գործիքների քանակի և վիճակի հետ: Անհրաժեշտ քանակի և որակի գործիքների բացակայությունը ռիսկի տակ է դնում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման շարունակականության ապահովումը: ԵՊԿ-ում բյուջեի բաշխում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների չի իրականացվում, իսկ ծախսերի հիմնական հոդվածը աշխատավարձն է: Առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ԵՊԿ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր, սակայն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքները հաշվի չեն առնվում:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման ձևավորված ավանդույթների միջոցով ԵՊԿ-ն նշանակալի ներդրում ունի հանրության լայն շերտերում ազգային, հոգևոր, դասական և ժամանակակից երաժշտության ոլորտներում գիտելիքի և ճաշակի զարգացման, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանում ազգային երաժշտական արվեստի պահպանման, զարգացման և տարածման գործում:

Կոնսերվատորիան կարևորում է միջազգայնացումը և, մասնավորապես, եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական, գիտական ոլորտներում համագործակցությունը, ինչպես նաև օտարերկրյա ուսանողների համակազմի մեծացումը: Սակայն միջազգային համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է վարպետաց դասերի կազմակերպմամբ: Ուսանողների և դասախոսների շարժունության մակարդակը ցածր է, չնայած վերջին երկու տարիների ընթացքում դիտվում է ուսանողների և դասախոսների շարժունության զգալի աճ: ԵՊԿ-ի միջազգայնացման գործընթացների կանոնակարգման համար կարևոր դեր ունեցավ ERASMUS+ BOOST ծրագրը, որի շրջանակներում մշակվել է միջազգայնացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի նախագծեր: ԵՊԿ-ն անդամակցում է նաև Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիային (AEC), սակայն այդ անդամակցության հնարավորությունները չեն օգտագործվում: Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության արդյունավետության գնահատման մեխանիզմները բացակայում չեն:

Թեպետ ԵՊԿ-ի կրթության որակի ներքին ապահովման բաժինը ստեղծվել է 2012 թվականին, սակայն որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորված չէ:

Կոնսերվատորիայի որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպված չէ, սահմանված չեն որակի ներքին ապահովման մեխանիզմները և գործիքակազմը: Որակի ապահովման համակարգի կողմից արտաքին գնահատման համար ստեղծված հիմքերն անբավարար են: Որակի ապահովման ներքին համակարգը ԵՊԿ-ի գործունեության որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն չի տրամադրում և չի ապահովում այդ ոլորտում Կոնսերվատորիայի գործունեության թափանցիկությունը:

Կարևոր է նշել ԵՊԿ-ի կառավարման կազմում տեղի ունեցած փոփոխությունները: 2018 թվականի վերջին ռեկտորի պաշտոնակատար նշանակվեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը, ով ԵՊԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի մայիսի 14-ի նիստում ընտրվեց ԵՊԿ ռեկտոր: Նոր ռեկտորի նշանակումը մեծ կադրային փոփոխությունների հանգեցրեց: Վերջին մեկ տարվա ընթացքում փոփոխվել են ԵՊԿ-ի պրոռեկտորները, դեկանները և ամբիոնների վարիչները: ԵՊԿ-ի կառավարման նոր թիմը արդյունավետ բարեփոխումներ կատարելու մեծ մոտիվացվածություն են արտահայտում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ԵՊԿ-ն ունի լավ ձևակերպված առաքելություն, ընդորում Գյումրիի մասնաճյուղի առաքելությունը ձևակերպված է առանձին և նպատակաուղղված է մարզի կարիքներին:
2. ԵՊԿ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները լիովին համապատասխանում են Կոնսերվատորիայի առաքելությանը:
3. ԵՊԿ-ի կատարողական մասնագիտությունների մասնագիտական դասընթացները իրականացվում են անհատական պարապմունքների միջոցով, որոնց ընթացքում դասախոսը անդրադառնում է յուրաքանչյուր ուսանողի կատարողականությանը՝ շեշտադրելով և շտկելով յուրաքանչյուր դիտվող խնդիրը, ինչը նպաստում է ուսանողակենտրոն մոտեցմամբ ուսուցմանը:
4. ԵՊԿ-ն իր ուսանողների համար ստեղծում է լրացուցիչ ինքնությունն պարապմունքների անցկացման հնարավորություններ Կոնսերվատորիայի տարածքում:
5. ԵՊԿ-ում դասավանդում են ոլորտի վաստակաշատ մասնագետներ, որոնցից շատերը հանդիսանում են միջազգային ճանաչված միջոցառումների դափնեկիրներ: Ունեն ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ՀՀ Ժողովրդական և Վաստակավոր արտիստի և այլ կոչումներ:
6. ԵՊԿ-ն զգալի ներդրում ունի Հայաստանում և դրա սահմաններից դուրս Կոնսերվատորիայի ուսանողների, շրջանավարտների և դասախոսների բազմաթիվ համերգների միջոցով ՀՀ հասարակության շրջանում երաժշտական ճաշակի զարգացման և արտասահմանում հայկական մշակույթի տարածման ուղղությամբ:
7. ԵՊԿ-ն համագործակցում է մեծ թվով կրթական և մասնագիտական հաստատությունների հետ, ինչպես նաև Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի անդամ է:
8. ԵՊԿ-ում կազմակերպվում են բազմաթիվ վարպետության դասեր հայաստանցի և արտասահմանցի մասնագետների ներգրավմամբ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ԵՊԿ-ի ռազմավարական ծրագրում սահմանված չեն գնահատման առանցքային ցուցանիշները (KPI): Բացակայում է նաև Կոնսերվատորիայի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը:
2. ԵՊԿ-ն իր գործունեությանը վերաբերող տեղեկատվություն հավաքագրելու քաղաքականություն չունի, իրականացվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն (բացառությամբ ուսումնական գործընթացի հիմնական տեղեկատվության) հիմնականում չի հավաքագրվում: Դրա արդյունքում կայացվող

որոշումների համար իրավիճակի լիարժեք վերլուծության իրականացումը գրեթե հնարավոր չէ:

3. Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում որակի կառավարման սկզբունքը ԵՊԿ-ում ներդրված չէ:
4. ԵՊԿ-ի ՄԿԾ-ները ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցման (alignment) կարիք ունեն:
5. ԵՊԿ-ն չունի մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականություն:
6. ԵՊԿ-ն չունի հետազոտական գործունեության զարգացմանը միտված քաղաքականություն. սահմանված չեն գերակա հետազոտական ուղղությունները, բացակայում են հետազոտության միջազգայնացմանն ուղղված գործողությունները:
7. ԵՊԿ-ի երաժշտական գործիքների բազան հնացած է:
8. Փոքր են հետազոտական գործունեության և ռեսուրսային բազայի բարելավմանն (մասնավորապես երաժշտական գործիքների ձեռքբերմանն) ուղղված ֆինանսական հատկացումները:
9. ԵՊԿ-ի գործընթացների որակի ապահովմանն ուղղված քաղաքականությունը, որակի ապահովման ներքին համակարգը՝ գործընթացները, մեխանիզմները և գործիքները բացակայում են:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Կանոնակարգել ռազմավարական ծրագրի մշակման, հաստատման, գործընթացները, հստակ սահմանելով ռազմավարական ծրագրի մշակման և քննարկումների փուլերը, պատասխանատուներին, շահակիցներին ու դրանց ներգրավման մեխանիզմները և ընթացակարգը: Արդյունքում ստացված փաստաթուղթը դնել կիրառության մեջ:
2. Մշակել ռազմավարական ծրագրի գործողությունների ժամանակացույց սահմանելով նպատակներին հասնելու համար անհրաժեշտ քայլերը, հստակ նշելով դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուներին, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և կատարողականի ցուցիչները (KPI):
3. Ռեկտորի տարեկան հաշվետվությունները կազմել ըստ ռազմավարական ծրագրի նպատակների, առավել թափանցիկ դարձնելով Կոնսերվատորիայի գործունեության արդյունավետությունը:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Մշակել և ներդնել Կոնսերվատորիայի ռազմավարական ծրագրից բխող ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման և հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ և գործիքներ:
5. Ակտիվ գործողություններ ձեռնարկել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը ԵՊԿ-ում ներդրման ուղղությամբ:
6. Կոնսերվատորիայի ֆինանսական պլանավորումն իրականացնել համապատասխան ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման համար նախատեսված քայլերի: Դա հետագայում նաև կդյուրացնի ըստ նպատակների իրականացված ծախսերի արդյունավետության գնահատումը:
7. Մշակել Կոնսերվատորիայի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության ընթացակարգեր և գործիքներ:

8. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ ու գործիքակազմ:
9. Իրականացնել վարչական կազմի վերապատրաստումներ բուհական համակարգերի կառավարման արդի սկզբունքների և մոտեցումների վերաբերյալ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Վերանայել «ԵՊԿ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ» փաստաթուղթը և կիրառության մեջ դնել փաստաթուղթ, որը կներառի.
    - ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը ապահովող ՄԿԾ-ների մշակման/վերանայման մանրամասն ընթացակարգը,
    - ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման մեթոդաբանությունը և գործիքները,
    - ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի մակարդակներում ուսումնառության արդյունքների մշակման մեթոդաբանությունը (Դուբլինյան նկարագրիչներ, Բլումի տաքսոնոմիա և այլն),
    - ՄԿԾ-ների ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցման (alignment) մեթոդաբանությունը և գործիքները:

11. Իրականացնել վերապատրաստումներ (կամ վերապատրաստվելու հնարավորություններ ընձեռել) ուղղված՝ ուսումնառության վերջնարդյունքների, դրանց նշանակության, դասավանդման, ուսումնառության և գնահատման հետ փոխկապակցվածության վերաբերյալ ուսումնական գործընթացներում ներգրավված անձնակազմի (վարչական անձնակազմ, դեկաններ, ամբիոնների վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմ) տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

12. ՄԿԾ-ի մասնագրերում ներառել դասավանդման, ուսումնառության, գնահատման և ակադեմիական ազնվության, ինչպես նաև ներառական կրթության ապահովման քաղաքականությունները:
    Առարկայական ծրագրերում ներառել դասավանդման և ուսումնառության մեթոդաբանությունը, իսկ մեկից ավելի կիսամյակ տևողությամբ առարկայական ծրագրերում սահմանել նաև յուրաքանչյուր կիսամյակում ուսանողի կողմից ձեռք բերվող ուսումնառության արդյունքները:

13. Քայլեր ձեռնարկել ընդհանուր-հումանիտար և տեսական դասընթացներն ուսանողակենտրոն մոտեցումներով կազմակերպելու, ինչպես նաև մոդուլային դարձնելու ուղղությամբ:
14. Քայլեր ձեռնարկել միջազգայնացման և Եվրոպական ուսումնական հաստատությունների հետ ուսանողների և դասախոսների շարժունության զարգացման ուղղությամբ օգտվելով ԵՊԿ-ին որպես AEC-ի անդամ ընձեռված հնարավորություններից:

Ուսանողները

15. Մշակել և ներդնել ԵՊԿ-ի մասնագիտական առանձնահատկությունները նկարագրող և ներբուհական ընթացակարգը սահմանող բակալավրեատի և մագիստրատուրայի ընդունելության ներբուհական կարգեր:
16. Մշակել և ներդնել ուսանողների կողմնորոշման հստակ գործողություններ և դրանց իրականացման ժամանակացույցը ու պատասխանատուներին:

17. Բարելավել և փաստաթղթավորել ուսանողների (ներառյալ օտարերկրյա ուսանողներին) կրթական կարիքների վերհանման գործող մեխանիզմները:
18. Ընդլայնել լրացուցիչ պարապմունքների և մասնագիտական խորհրդատվության տրամադրման հնարավորությունները, դրանց շրջանակներու ներառելով նաև տեսական մասնագիտությունները և դասընթացները:
19. Ապահովել ուսանողների կարիերայի զարգացմանն ու Կոնսերվատորիա-գործատու կապի ամրապնդմանն ուղղված կանոնակարգված գործողություններ, սահմանելով դրանց համար պատասխանատու մարմին(ներ)ը:
20. Սահմանել ԵՊԿ-ում իրականացվող հետազոտություններում ուսանողների ներգրավման և ուսումնական գործընթացում հետազոտությունների արդյունքների ներդրմանն ուղղված քաղաքականություն, հիմնվելով միջազգային և մասնավորապես Եվրոպական Կոնսերվատորիաների դրական փորձի վրա:
21. Լրամշակել և ներդնել ուսանողների մասնագիտական կողմնորոշման, ընդունելության, կրթական գործընթացի կազմակերպման, խորհրդատվության տրամադրման և ուսանողներին մատուցվող այլ ծառայությունների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

22. Բարելավել ՊԴ կազմի ընտրության ընթացակարգը և մշակել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, ինչը ապագայում կնպաստի նաև դասախոսների մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների գնահատմանը,
23. Մշակել և ներդնել ՊԴ կազմի գնահատման գործիքակազմ՝ խթանելով դասախոսների մասնագիտական կատարելագործումը,
24. Մշակել և ներդնել ՊԴ կազմի համակարգված վերապատրաստման ծրագիր, որը կբխի ԵՊԿ-ի ռազմավարական խնդիրներից և հիմնված կլինի ՊԴ կազմի մասնագիտական կարիքների գնահատման վրա
25. Մշակել և ներդնել ՊԴ կազմի մասնագիտական առաջխաղացման և խրախուսման հստակ և կանոնակարգված մեխանիզմներ,
26. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման հստակ քաղաքականություն՝ ուղղված ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի թվի օպտիմալացմանը և երիտասարդացմանը:

Հետազոտությունը և զարգացումը

27. Մշակել և ներդնել ԵՊԿ-ի հետազոտական գործունեության վերաբերյալ քաղաքականություն, որում կարտացոլվեն գերակա գիտական ուղղությունները, հավակնություններն ու հետաքրքրությունները,
28. Բարելավել ԵՊԿ-ի հետազոտական գործունեության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման գործընթացը՝ ապահովելով քայլերի տրամաբանվածությունը,
29. Մեծացնել հետազոտական գործունեության ֆինանսական հատկացումները՝ նախընտրություն տալով ԵՊԿ-ի կողմից սահմանված գերակա ուղղություններին, ինչպես նաև բազմազանեցնել հետազոտական ուսումնասիրությունները կիրառական և միջառարկայական բնույթի հետազոտություններով,
30. Խրախուսել միջառարկայական ուսումնասիրությունների զարգացումը միջամբիոնային, միջֆակուլտետային, ինչպես նաև միջհամալսարանական համագործակցության միջոցով,

31. Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն՝ ընդլայնելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունները,
32. Ներդնել մեխանիզմներ միտված գիտահետազոտական գործունեության և ուսումնառության գործընթացի փոխկապակցման ապահովմանը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

33. Առաջնային համարել ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված ֆինանսական միջոցների հայթայթումը և ակտիվ գործունեություն ծավալել ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման ուղղությամբ:
34. Կոնսերվատորիայի տարեկան բյուջեն կազմել ըստ ՌԾ-ի յուրաքանչյուր նպատակի իրականացման համար տվյալ տարում նախատեսված գործողությունների համար անհրաժեշտ ծախսերի:
35. Մշակել տեղեկատվության կառավարման ընթացակարգ և ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:
36. Հաջորդ տարիների բյուջեում հնարավորության սահմաններում նախատեսել հատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար համապատասխան միջավայր ձևավորելու աշխատանքներ (հաշմանդամների համար հարմարեցված աստիճանավանդակներ և զուգարան):
37. Մշակել և հստակ պարբերականությամբ կիրառել ենթակառուցվածքների և ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ ու գործիքներ:
38. Ապահովել ԵՊԿ-ի գրադարանի հասանելիությունը միջազգային գիտական օնլայն հարթակներին:

Հասարակական պատասխանատվությունը

39. Մշակել և ներդնել Կոնսերվատորիայի ստորաբաժանումների հաշվետվողականության մեխանիզմներ և ձևաչափեր: Ռեկտորի տարեկան հաշվետվությունը առավել ինֆորմատիվ դարձնել, ներառելով մանրամասն (նաև վիճակագրական) տեղեկատվություն ուսումնական, գիտական, ստեղծագործական և այլ գործունեության ոլորտներում Կոնսերվատորիայի առաջխաղացման վերաբերյալ:
40. Հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել ԵՊԿ-ի պաշտոնական կայքէջի բնականոն գործունեությունը: Կայքէջում ներառել տեղեկատվություն Կոնսերվատորիայի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ, ներառյալ ներքին գործընթացները կարգավորող փաստաթղթերը (կարգեր, ընթացակարգեր, հայեցակարգեր և այլն), ինչպես նաև գործունեության հաշվետվությունները ու որակի ապահովման վերլուծությունները:
41. Մշակել և կիրառության մեջ դնել Կոնսերվատորիայի ներքին փաստաթղթաշրջանառության կարգ ներառելով՝ էլեկտրոնային միջոցներով ստացվող հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:
42. Ներդնել հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումների պլանավորման գործընթաց:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

43. Մշակել միջազգայնացմանն ուղղված ռազմավարական ծրագրի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ:

44. Կազմակերպել իրազեկման միջոցառումներ կամ վերապատրաստումներ ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի համար ՄԿԾ-երի և գիտական գործունեության միջազգայնացման վերաբերյալ:
45. Միջազգային համագործակցությունն իրականացնել ՊԻԳԲ սկզբունքներին համապատասխան:
46. Իրականացնել միջոցառումներ ԵՊԿ ներքին շահակիցների օտար լեզի իմացության մակարդակը բարելավելու համար:
47. Բարելավմանն ուղղված քայլեր ձեռնարկել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում օտար լեզվի առկա դասընթացների ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգը

48. Կառավարման և որակի ներքին ապահովման համակարգերի բարելավումը, փոխկապակցումը և ներդրումը համարել առաջնահերդություն:
49. Մշակել որակի ապահովման ձեռնարկ, որում ընդգրկված կլինեն՝ որակի ներքին ապահովման քաղաքականությունը, նպատակները և ուղղությունները, հիմնական շահառուները, ՈԱ մեխանիզմները և դրանցում դասախոսների և ուսանողների ներգրավումը, միջոցառումների ժամանակացույցը և գործիքակազմը:
50. Որակի ապահովման ձեռնարկի ներդրման միջոցով ապահովել Կոնսերվատորիայի կառավարման համակարգի արդյունավետությունը և ԵՊԿ-ում իրականացվող գործընթացների շարունակական բարելավումը:
51. Վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների համար կազմակերպել որակի ապահովման գծով վերապատրաստումներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (ԵՊԿ) ՀՀ-ում միակ բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունն է: Այն կայացած հաստատություն է և ունի շուրջ 100 տարվա պատմություն: ՀՀ-ի շատ երաժիշտներ, դիրիժորներ, կոմպոզիտորներ և երաժշտագետներ ուսանել են ԵՊԿ-ում: ԵՊԿ-ի բազմաթիվ շրջանավարտներ ստացել են միջազգային ճանաչում և նրանցից ոմանք հանդես են գալիս կարևոր բեմերում՝ ամբողջ աշխարհում:

ԵՊԿ-ի հիմնական ուղղվածությունը եվրոպական դասական երաժշտությունն է, սակայն դասավանդվում է նաև ջազային երաժշտություն: Հատուկ կարևորություն է տրվում Հայաստանի ազգային երաժշտությանը՝ ՀՀ կոմպոզիտորների ստեղծագործություններին, ինչպես նաև հայկական ավանդական, հոգևոր և ժողովրդական երաժշտությանը: ԵՊԿ-ի Գյումրիի մասնաճյուղը իրականացնում է տարածաշրջանային կարևոր առաքելություն Հայաստանի հյուսիսային հատվածում: Այսպիսով, դժվար է գերագնահատել ԵՊԿ-ի դերը հայկական երաժշտության ավանդույթների պահպանման և զարգացման ու երկրի ապագա երաժշտական մշակույթի ձևավորման գործում: Իր պատմության ընթացքում ԵՊԿ-ն ունեցել է ամուր կապեր Մոսկվայի կոնսերվատորիայի, ինչպես նաև ՌԴ նմանատիպ այլ հաստատությունների հետ: Վերջին տասնամյակների ընթացքում ԵՊԿ-ն ընդլայնել է իր միջազգային համագործակցությունների շրջանակը և իր հետագա զարգացումը տեսնում է ազգային ավանդույթների և աշխարհի մշակութային փորձի համահունչ միահյուսման և սինթեզի գործընթացներում (ինքնավերլուծություն, էջ 6): ԵՊԿ-ն հանդիսանում է Կոնսերվատորիաների եվրոպական ասոցիացիայի անդամ և ներգրավված է մի շարք միջազգային ծրագրերում և գործընթացներում:

Դժբախտաբար, ԵՊԿ-ն ստիպված է գործել դժվար պայմաններում և ոչ բավարար ռեսուրսներով: Սա նկատելի է գրեթե ամենուր ԵՊԿ-ում՝ մասնաշենքերը վերանորոգման կարիք ունեն, երաժշտական գործիքները չափազանց հին են և ցածր որակի, տեխնիկական սարքավորումները հին են, և այլն: Սակայն, հարկավոր է նշել, որ դասախոսական կազմի և ուսանողների մեծամասնությունը պահպանել է ընտրված մասնագիտության նկատմամբ բարձր մոտիվացիան և ձգտումը, որն այնքան կարևոր է արվեստի ոլորտում:

Ընդհանուր առմամբ ինստիտուցիոնալ հավատարմագրման բոլոր չափանիշների ուղղությամբ առկա է որակի ապահովման մեխանիզմների և ընթացակարգերի կանոնավոր կիրառման պակաս, որը հնարավորություն կտար գնահատել ԵՊԿ-ի քաղաքականությունն ու գործընթացները կրթության կազմակերպման տեսանկյունից, նույնիսկ այն ոլորտներում, որոնք հանդիսանում են ուժեղ կողմ, օրինակ առաքելությունն ու նպատակները, կրթական ծրագրերը, ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, հասարակական պատասխանատվությունը և արտաքին կապերն ու միջազգայնացումը:

Սույն զեկույցը հիմնված է ԵՊԿ ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի, ինքնավերլուծությանը կից այլ փաստաթղթերի, և ամենակարևորը՝ 2019թ. դեկտեմբերի 9-13-ը տեղի ունեցած փորձագիտական այցի և դրա ընթացքում արձանագրված փաստերի հիման վրա:

Առաքելություն և նպատակներ. ԵՊԿ-ն ունի լավ ձևակերպված առաքելություն և պաշտոնապես հաստատված Ռազմավարական ծրագիր 2019-2024թթ համար, որտեղ նշվում

են հաստատության 4 հիմնական նպատակները: Հատկանշական է, որ Գյումրիի մասնաճյուղի հատուկ առաքելությունը ձևակերպված է առանձին: Այդուհանդերձ, ներկայացված չեն փաստեր, ըստ որոնց նախկին՝ 2012-2017թթ. Ռազմավարական ծրագրի և 2015թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման համապարփակ վերլուծությունները հիմք են հանդիսացել ներկա Ռազմավարական ծրագրի մշակման համար:

Ռազմավարական ծրագրում ներկայացված են ապագա ձեռքբերումներին ուղղված հիմնական նպատակներն ու պլանավորված գործողությունները, սակայն շատ դեպքերում այս նպատակները չափելի չեն: Այդ պատճառով դժվար կլինի գնահատել նպատակներին հասնելու համար արձանագրված ձեռքբերումները և պլանավորել հետագա քայլերը: Խորհուրդ է տրվում սահմանել չափելի ցուցիչներ ռազմավարական յուրաքանչյուր նպատակի համար և մշակել ընթացակարգեր՝ այդ նպատակների իրականացման գործընթացի պարբերաբար գնահատման համար: Ներկայումս, Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկումը բավականին հստակ սահմանված չէ՝ չնայած այն փաստին, որ, ըստ ինքնավերլուծության զեկույցի, ԵՊԿ-ում սահմանվել է ներքևից վերև հաշվետվության համակարգը: Տպավորությունն այն է, որ հաշվետվության համակարգը (ներառյալ ԵՊԿ տարեկան հաշվետվությունները) և Ռազմավարական ծրագիրը լավ փոխկապակցված չեն և բացակայում է կոնկրետ վիճակագրական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը: Ներկայիս ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով ԵՊԿ-ի կողմից կազմված ինքնավերլուծությունը հստակորեն ներկայացնում է այս բացթողումը: Պահանջվող աղյուսակներից շատերը դատարկ են, և ինչպես բացատրեցին ԵՊԿ-ի ներկայացուցիչները, հաստատությունը չունի բավարար տվյալներ դրանք լրացնելու համար: Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը տեխնիկական գործընթաց չէ, այն օգնում է բացահայտել խնդիրները, կայացնել առավել արդյունավետ որոշումներ, բաշխել ռեսուրսները և այլն: Այդ իսկ պատճառով, սա պետք է դիտարկվի որպես ռազմավարական պլանավորման և որակի ապահովման գործընթացների կարևորագույն մաս:

Կառավարում և վարչարարություն. ԵՊԿ-ի կառավարումն իրականացվում է երկու կառավարման մարմինների (մեկը ներառում է նաև արտաքին շահակիցներ), ռեկտորի և ռեկտորատի (ներառյալ երեք պրոռեկտորները) կողմից: Ակադեմիական հատվածը բաղկացած է երկու մակարդակից՝ ֆակուլտետներ (ղեկավարվում են դեկանների կողմից) և ամբիոններ (ղեկավարվում են ամբիոնների վարիչների կողմից): Ընդհանուր առմամբ, ԵՊԿ-ի կազմակերպական կառուցվածքը և պատասխանատվությունների բաշխումը հստակ է: Վերջերս մի քանի բաժիններ են միացվել՝ գործառույթների անհարկի կրկնություններից խուսափելու համար: Մյուս կողմից, ստեղծվել է նոր՝ Կամերային երաժշտության ֆակուլտետ՝ տարբեր համույթներում երաժշտության կարևորությունը բարձրացնելու նպատակով: Ուսանող-ներկայացուցիչները ներգրավված են որոշումների կայացման գործընթացներում տարբեր մակարդակներում:

ԵՊԿ-ի ներկայիս ղեկավար կազմը բավականին նոր է՝ Ռետորը սկսել է պաշտոնավարել փորձագիտական այցից 7 ամիս առաջ, պրոռեկտորներից երկուսը նշանակվել են հենց այդ ժամանակ, իսկ Գյումրիի մասնաճյուղի տնօրենը պաշտոնապես ավելի վերջերս է նշանակվել: Հանդիպումների ժամանակ ԵՊԿ-ի բազմաթիվ ներկայացուցիչներ դրական են գնահատել ղեկավարության այս վերջին փոփոխությունները: Նրանք նշեցին աշխատավարձերի բարձրացման մասին, աշատանքի առավել արդյունավետ կազմակերպման, ավելի բաց ու լավ մթնոլորտի մասին: Ուսանողներն ու անձնակազմը վստահում են ԵՊԿ-ի ներկայիս ղեկավարությանը և ցանկանում են, որ նրանք

հաստատությունը ավելի առաջ տանեն, աշխատանքային պայմաններն ու ընդհանուր ակադեմիայի կերպարը դարձնեն ավելի ժամանակակից:

ԵՊԿ-ի ներկայիս ղեկավարության համար հրատապ խնդիր է ԵՊԿ-ի կառավարման բոլոր մակարդակներում ներդնել որակի ապահովման ժամանակակից սկզբունքներ: Սա ներառում է տվյալների հավաքագրում և վերլուծություն, որը նշվել է նաև վերևում, ինչպես նաև կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ մշտադիտարկման և իրականացման մեխանիզմների հետ համատեղ:

Ուսանողներն ու մասնագիտության կրթական ծրագրերը. Դեռևս սովետական ժամանակներից սկսած Հայաստանն ունի երաժշտական դպրոցների և ուսումնարանների զարգացած ազգային համակարգ, որոնք պատրաստում են որակյալ ուսանող-դիմորդներ ԵՊԿ-ի համար: Չնայած դրան, վերջին տարիներին ուսանողների թվաքանակը նվազել է, որը կարող է պայմանավորված լինել արվեստագետի աշխատանքի ցածր համբավի հետ հասարակության շրջանում, ինչպես նաև ՀՀ երաժշտական ոլորտում ցածր աշխատավարձերի հետ: Մյուս կողմից, աճել է միջազգային ուսանողների թվաքնակը, որը կարող է գնահատվել որպես դրական միտում: Միջազգային ուսանողներից շատերը հարևան երկրներից ժամանած հայեր են, որոնք կարողանում են սովորել հայերենով: Դաշնամուրի ու դասական վոկալի դասընթացներն ամենատարածված են, որը հավանաբար պայմանավորված է որոշ հայ դաշնակահարների և օպերայի երգիչների միջազգային բարձր համբավով: Սա լավ հիմք է ԵՊԿ-ի միջազգային համբավը ավելի բարձրացնելու և սփյուռքից ու Հայաստանից դուրս գտնվող մոտիվացված ուսանողներին գրավելու համար:

Փորձագիտական հանդիպումների ընթացնում պազ դարձավ, որ նախկինում ընդունելության չափանիշները և ընդունելության գործընթացը միշտ չէ, որ թափանցիկ ու ազնիվ է եղել, իսկ 2019թ. ընդունելության գործընթացը բավականին փոփոխություններ է կրել: Նման փոփոխությունները խիստ խրախուսելի են և պետք է շարունակական լինեն: Ընդունելության համակարգի թափանցիկությունն ու յուրաքանչյուր դիմորդի որակը խիստ գնահատելը էական են ուսումնառության որակի և ընդհանուր առմամբ հաստատության համբավի համար:

ԵՊԿ-ն ունի մեծ թվով գերազանց ուսանողներ, ովքեր մասնակցում են միջազգային մրցույթների և հանդես են գալիս հանրության առջև: Փորձագիտական խումբը հնարավորություն ունեցավ լսելու ուսանողների որոշ խմբերի կատարումներ, որոնք բարձր մակարդակի վրա էին (հատկապես կամերային երաժշտության համույթը, երգչառումբը և սիմֆոնիկ նվագախումբը): Միևնույն ժամանակ ուսանող-ներկայացուցիչները քննադատում էին նոր ընդունված ուսանողներին՝ ուսման նկատմամբ իրենց ցածր մոտիվացիայի պատճառով: Այդ իսկ պատճառով, խորհուրդ է տրվում համոզվել, որ միևնույն պահանջներն ու գնահատման չափանիշները, որոնք կիրառվում են բոլոր ուսանողների համար միտված լինեն ուսման որակի ընդհանուր բարձրացմանը և բոլոր ավարտողների ապահովեն մասնագիտական բարձր որակ: ՈՒսանողները նշեցին, որ նրանք կարող են ազատ ներկայացնել իրենց ցանկություններն ու խնդիրները, և ընդհանուր առմամբ նրանց առաջարկությունները հաշվի են առնվում ԵՊԿ-ում: Նրանց կարծիքը վեր է հանվում նաև հարցումների միջոցով, սակայն հարցերը հիմնականում շատ ընդհանրական են: ԵՊԿ-ն ունի ակտիվ ուսանողական խորհուրդ, որի նպատակն է ուսանողների համար ամուր կառույց ստեղծելը և ուսանողների ու կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղված աշխանքներ կատարելը: Դժբախտաբար, նախկին ՈՒԽ-ի համբավը ուսանողների շրջանում շատ ցածր էր, սակայն ներկայիս ՈՒԽ-ն փորձում է փոխել այդ կարծիքը:

Ընդհանուր առմամբ ԵՊԿ-ի կրթական ծրագրերը լավ ձևավորված են և նրանց բովանդակությունը համադրելի է եվրոպական նմանատիպ հաստատությունների կրթական ծրագրերի հետ: Նախաձեռնվել է իրականացնել ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի վերանայում, որը կարող է գնահատվել որպես դրական նախաձեռնություն/միտում: Այդ գործընթացի իրականացման ժամանակ խորհուրդ է տրվում ապահովել ավելի արդյունավետ համահունչություն կրթական ծրագրի վերջնարդյունքների, առարկայական նկարագրերի և դասավանդման մեթոդների միջև: Կարևոր է նաև բարձրացնել կրթական ծրագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության վերաբերյալ դասախոսական կազմի ընդհանուր տեղեկացվածության աստիճանը:

ՈՒսանողները հիմնականում շատ գոհ են իրենց հիմնական/մասնագիտական դասընթացներից: Ինչ վերաբերում է ոչ մասնագիտական/օժանդակ դասընթացներին, գոհունակությունը ավելի քիչ է, քանի որ դասավանդման արդյունավետության մակարդակները տարբերվում են և որոշ առարկաների դեպքում ուսանողներին հասկանալի չէ տվյալ առարկայի անհրաժեշտությունը: Ինչևէ, հիմնական մտավախությունը ուսումնական գործընթացի կազմակերպումն է: Չնայած, որ ԵՊԿ-ում առկա է բավարար ուսումնաօժանդակ կազմ, ուսանողները ցանկություն են հայտնում տեսնելու բարելավումներ ուսումնական գործընթացի կազմակերպման առումով՝ տեղեկատվության տրամադրում, էլեկտրոնային ռեսուրսների կիրառում և այլն:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ. ԵՊԿ-ն ունի բավարար քանակության բարձրորակ և փորձառու դասախոսական կազմ, ինչպես նաև անհրաժեշտ ուսումնաօժանդակ կազմ: Դասախոսներից շատերը ականավոր արվեստի գործիչներ են կամ ունեն հետազոտական ոլորտում բավականին մեծ փորձ: Սովորաբար հայտնի դասախոսների լավագույն ուսանողները որոշակի ժամանակահատված հետո նաև դասավանդում են, որն ապահովում է դասավանդման մեթոդաբանության շարունակականությունն ու օգնում է պահպանել բարձր մասնագիտական չափանիշները: Ինչևէ, այս համակարգը նաև վտանգ է պարունակում: Եթե ԵՊԿ-ն ցանկանում է գաղափարների փոխանակում իրականացնել, ավելի դինամիկ փոփոխություններ և բազմազանություն ներմուծել դասավանդման գործընթացում, այն պետք է փորձի ներգրավել նաև այնպիսի դասախոսների, ովքեր ունեն մասնագիտական բազմազան ու տարբերվող փորձառություն: Ճիշտ է, որ ԵՊԿ-ն տարեկան իրականացնում է մոտ 60 տարբեր վարպետության դասեր, որը ակնհայտորեն նպաստում է գաղափարների փոխանակմանն ու նոր ազդակներ է հաղորդում ուսանողներին, սակայն կարճաժամկետ հրավիրյալ մասնագետները չունեն այնքան ուժեղ ազդեցություն դասավանդման որակի վրա, որքան ԵՊԿ-ի հիմնական դասախոսական կազմը:

Փորձագիտական խումբը նկատեց, որ որոշ ամբիոններում դասախոսական կազմի միջին տարիքը ավելի բարձր է և որ երիտասարդ կադրերի համար դժվար է համապատասխան ժամաքանակ ապահովելը: Երկար տարիներ 5-ամյա աշխատանքային պայմանագրերը, որոնք այդքան տարածված են Հայաստանում, մեխանիկորեն վերակնքվել են՝ առանց հանրային մրցույթի իրականացման: ԵՊԿ-ի նոր ղեկարությունը որոշել է փոխել այս փորձը և կազմակերպել ու իրականացնել հանրային մրցույթներ դասախոսների բոլոր թափուր հաստիքների համար: Այս փոփոխությունը միանգամայն խրախուսելի է: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր հաստիքի համար ներկայացվեն հստակ պահանջներ և բոլոր թեկնածուների գնահատումը լինի թափանցիկ ու արդար:

Խորհուրդ է տրվում մշակել քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի կատարողականի պարբերաբար գնահատման համար և գտնել ռեսուրսներ

դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ապահովման համար (ներառյալ միջազգային շարժունություն):

Դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ ակտիվ հետազոտողներ են, աշխատում են մեծ մասամբ երաժշտագիտության բնագավառում: ԵՊԿ-ն իրականացնում է գիտաժողովներ, հետազոտություններ գյուղերում՝ ժողովրդական երաժշտության ուսումնասիրության համար (ներգրավված են թե՛ հետազոտողները, թե՛ ուսանողները), տպագրում է երաժշտական ամսագրեր, ինչպես նաև ժողովրդական և հոգևոր երաժշտության հավաքածուներ: Սրանք կարևոր գործողություններ են, որոնք պետք է շարունակվեն իրականացվել: Այդուհանդերձ, ԵՊԿ-ում հետազոտական գործունեությունը առանձնացված է և ունի ռազմավարական պլանավորման կարիք: Առաջնահերթություն պետք է տրվի հետազոտական տեղեկատվության և նոր հետազոտական արդյունքների փոխանակմանն ու տարածմանը միջազգային մակարդակում, ինչպես նաև պետք է կարևորվի միջազգային գիտական համագործակցություններում ԵՊԿ-ի մասնակցությունը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. Ինչպես նշվել է վերևում, ԵՊԿ-ն ստիպված է գործունեություն ծավալել դժվար պայմաններում և սահմանափակ ռեսուրսներով: Հիմնական խնդիրներն են՝

- լսարանների ու դասասենյակների վատ պայմաններ (բացառությամբ մի քանիսի, օրինակ կամերային երաժշտության դահլիճն ու ակուստիկ լաբորատորիան),
- շատ վատ ձայնամեկուսացում ամբողջ շենքում,
- դասասենյակների մեծ մասում դաշնամուրները չափազանց հին են և վատ որակի (իրավիճակը ավելի լավ է մասնագիտական դաշնամուրի դասասենյակներում և կամերային երաժշտության դահլիճում, որոնք կահավորված են Կավայի (Kawai) մեծ դաշնամուրներով),
- գրադարանը ֆինանսական ռեսուրսներ չունի նոր գրքեր, տպագրված նոտաներ գնելու, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանների լիցենզիայի դիմաց վճարելու համար,
- ձայնագրման և ձայնի արտադրության համար նախատեսված սարքավորումները հին են (ձայնագրման գրադարանում, ժողովրդական երաժշտության լաբորատորիայում) և երգահանները չունեն բավարար հասանելիություն էլեկտրական-ձայնային ձայնագրումների ժամանակակից միջոցներին:

Ակնհայտ է, որ ԵՊԿ-ի ղեկավարությունը ի զորու չէ միանգամից լուծել այս բոլոր խնդիրները: Խորհուրդ է տրվում մշակել երկարաժամկետ պլան առ այն, թե ինչպես կարելի է քայլ առ քայլ բարելավել առկա իրավիճակը և ապահովել հաստատության կայուն գործունեությունը: Փորձագիտական խումբը տեղեկացավ, որ մասնաշենքի վերանորոգումը արդեն որոշվել է կառավարման մակարդակով և գրեթե հստակ է, թե որտեղից է լինելու ֆինանսավորումը: Հույս ունեմ, որ վերանորոգումը ավարտված կլինի մոտ ապագայում և թե՛ ուսանողները, թե՛ դասախոսական կազմը կկարողանան սովորել և աշխատել այնպիսի պայմաններում, որոնց արժանի են: Որպես բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություն, կարևոր է ուսանողներին ապահովել անհատական աշխատանք (գործնական պարապմունք) իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Այս առումով վիճակը ԵՊԿ-ում վատ չէ: Այդուհանդերձ, խորհուրդ է տրվում ապահովել անհատական/ինքնուրույն գործնական պարապմունքների/մարզումների հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը բոլոր ուսանողներին (ներառյալ միջազգային և առաջին կուրսի ուսանողներին): ԱՆհրաժեշտ է

տեղեկացնել նաև, որ մասնաշենքը բաց է բոլոր ուսանողների պարապմունքների համար նույնիսկ հանգստյան օրերին:

Խորհրդատվությունները կարող են օգնել ԵՊԿ-ին միջազգային համագործակցությունների և հաղորդակցությունների տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, կարևոր է, որ գրադարանը թվային հավաքածուները հասանելի դարձնի արտասահմանցի ուսանողների համար, ինչպես նաև ապահովի միջազգային թվային շտեմարանների ու հետազոտական գրականության հասանելություն տեղացի ուսանողների համար: Կարևոր է պահպանել հայկական մշակույթն ու ինքնությունը այս միջազգային չափանիշներին զուգահեռ: Հպարտ է պետք լինել ազգայինով և կապակցել այն միջազգային չափանիշների հետ: Այս դեպքում որակի ապահովման ոլորտում կապահովվեն նաև նորարարությունները: Դասավանդման և ուսուցման պայմանները կարող են պարբերաբար բարելավվել, որը կարևոր է դասախոսական կազմի և ուսանողների համար:

Հասարակական պատասխանատվություն. ԵՊԿ-ն իր գործունեության վերաբերյալ տեղեկավությունն ապահովում է հանրությանը տարեկան հաշվետվությունների, կայքի, էլ. այլ աղբյուրների, ինչպես նաև հանրային գեղարվեստական միջոցառումների միջոցով: Ինչևէ, այս բոլոր միջոցներն ու հնարավորությունները կարող են օգտագործվել առավել արդյունավետ և նորարարական ձևերով: Օրինակ, ներկա պահին ԵՊԿ-ի կայքը շատ տեղեկատվական չէ և լավ չի գործարկվում: Օրինակ ԵՊԿ-ի օպերայի դահլիճում արդեն մի քանի տարի է, ինչ չեն իրականացվում հանրային միջոցառումներ, այն վերականգնել է իր աշխատանքը միայն վերջերս: Սակայն կան նաև որոշ դրական օրինակներ. թե՛ Երևանի, թե՛ Գյումրիի մասնաճյուղի ուսանողները պարբերաբար համերգներով են հանդես գալիս ԵՊԿ-ից դուրս՝ հիմնականում երաժշտական դպրոցներում: Որպես երաժշտության և արվեստի ոլորտի ուսումնական հաստատություն՝ ԵՊԿ-ն ունի մեծ ներուժ հանրության շրջանում ճանաչում և գնահատանք վաստակելու համար: Խորհուրդ է տրվում օգտվել այս առավելությունից և կիրառել ԵՊԿ-ի ներուժն ամբողջությամբ՝ հանրության շրջանում առավել տեսանելի դառնալու համար:

Արտաքին կապեր և միջազգայնացում. Համաձայն ռազմավարական ծրագրի՝ ԵՊԿ-ն նպատակ ունի լինել մրցունակ միջազգային ասպարեզում, բարձրացնել միջազգային ուսանողների թվաքանակը ու աշխարհագրական տարածումը, ինչպես նաև խթանել միջազգային համագործակցությունը: Այս ձգտումը գովելի է և պետք է առավելագույնս խրախուսվի: Այդուհանդերձ, ներկայումս ԵՊԿ-ն չունի հստակ քաղաքականություն, թե ինչպես պետք է իրականացվել ռազմավարական այս նպատակները: Կան առանձին գործողությունները, որոնցից շատերը հաջողված են (վարպետության դասեր, մրցույթներ), սակայն խորհուրդ է տրվում ստեղծել միջազգայնացման համար առավել կայուն շրջանակ և գտնել այնպիսի հաստատություններ, որոնց հետ կարելի է զարգացնել առավել մտերմիկ ռազմավարական համագործակցություն:

Ինչպես արդեն նշվել է, ԵՊԿ-ն հանդիսանում է Կոնսերվատորիաների եվրոպական ասոցիացիայի անդամ: Խորհուրդ է տրվում առավել ակտիվ լինել եվրոպական այս կազմակերպությունում՝ մասնակցել հանդիպումների, հանդես գալ աշխատանքային խմբերում, կիրառել ուղենիշներն ու ձեռնարկները, որոնք ասոցիացիան մշակել է երկար տարիների ընթացքում:

Համաշխարհայնացման արդյունքում միջազգայնացումը կարևոր դեր է խաղում մասնագիտական գործունեություն ծավալելիս: ԵՊԿ-ն պետք է մշակի իր միջազգայնացման հստակ տեսլականն ու ռազմավարությունը՝ ուսանողներին միջազգային ասպարեզում

հանդես գալու համար անհրաժեշտ գիտելիքով ու կարողություններով ապահովելու համար: Այս տեսլականն ու ռազմավարությունը կնպաստեն կրթության և հետազոտության որակի բարձրացմանն ու մասնագիտական որակների զարգացմանը:

Միջազգայնացումը վերաբերում է ոչ միայն միջազգային ուսանողների և դասախոսական կազմի ներգրավմանը, այլ նաև միջազգային չափումների/չափանիշների ներդրմանը դասավանդման և հետազոտությունների իրականացման գործընթացներում: Միջազգայնացումը ինքնին ոչ թե նպատակ է, այլ ռազմավարական նպատակների ձեռքբերման/իրականացման խթան:

· Միջազգայնացմանն ուղղված գործողություններն իրականանում են ԵՊԿ-ի ռազմավարական նպատակների և հնարավորությունների սահմաններում:

· Միջազգային համագործակցությունները հանդիսանում են կրթության և հետազոտության միջազգայնացման ռազմավարական նպատակների իրականացման նախապայման:

· Ուսանողների, դասախոսների ու հետազոտողների շարժունությունը բարձրանում է, երբ իրականացվում են միջազգային միտում ունեցող ծրագրեր: Շարժունությունը հնարավորություն է տալիս ամրապնդելու առկա համագործակցություններն ու ընլայնելու դրանք:

Այս երեք տարրերը՝ ծրագրերը, շարժունությունն ու համագործակցությունը, փոխկապակցված են և նախադրյալներ են ստեղծում բարձրագույն երաժշտական կրթության և հետազոտության միջազգայնացման համար:

ԵՊԿ-ն պետք է ընտրի, թե ստորև ներկայացված ցանկից որ բաղադրիչներն են ավելի կարևոր: Յուրաքանչյուր բաղադրիչի համար պետք է նշվի, թե ինչպես է հնարավոր հասնել դրան և ով է պատասխանատու: Անհրաժեշտության դեպքում ջնջել, ավելացնել և մշակել:

· գործողություններ, որոնք նպաստում են կրթության և հետազոտության որակի ապահովմանը

o Օրինակ՝ ուսումնական պլանի միջազգայնացում

- Լինել միջազգային մակարդակի կոնսերվատորիա
- Հետևել աշխատաշուկայի պահանջներին (միջազգային ասպարեզում)
- Երաժիշտների մասնագիտական պրոֆիլի կապակցում կրթական վերջնարդյունքների, կրթական ծրագրերի, դասընթացների և գնահատման հետ
- Միջազգայնացումը ներառվում է ուսումնական պլանում՝ ուսանողներին միջազգային մասնագիտական երաժշտությանը պատրաստելու նպատակով,

o Օրինակ՝ հետազոտության միջազգայնացում

- Հետազոտության ոլորտում միջազգային համբավի ստեղծում
- Կառուցողական միջազգային համագործակցություն
- Միջազգային դրամաշնորհի ձեռքբերում
- Եվրոպայի/Ասիայի տարածքում և դրանցից դուրս կրթության ու հետազոտության ուղղությամբ ռազմավարական համագործակցություններին մասնակցություն

· Գործողություններ, որոնք նպաստում են մասնագիտության և մասնագետների զարգացմանը

- Միջազգային և միջմշակութային կարողությունների զարգացում
- Դասախոսական կազմի և ուսանողների շարժունության խթանում
- Միջազգային շարժունության բարձրացում
- Գործընկեր հաստատությունների հետ համագործակցություն
- Համատեղ ծրագրերին մասնակցություն
- Միջազգային բենչմարքինգ
- Միջազգային լսարանի ձևավորում
- Ավելի շատ ուշադրություն ուսանողների և դասախոսների միջազգային և միջմշակութային հմտությունների զարգացմանը
- Լեզվական դասընթացներ

· Գործողություններ, որոնք նպաստում են տարածաշրջանային և միջազգային զարգացումների, օրինակ՝

- Միջազգային ուսանողների համալրում

· Օժանդակ պայմաններ և ենթակառուցվածք կրթություն և հետազոտություն իրականացնելու համար, օրինակ՝

- Բարելավել անգլերեն լեզվով տեղեկավական ծառայությունները, օրինակ կայքէջի անգլերեն տարբերակի կիրառում
- Տեղեկատվության և վարչարարության թափանցիկություն ու ուղղորդում
- Տրամադրել դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն՝ Բոլոնիայի գործընթացի շրջանակներում մշակված Եվրոպական ուղենիշներին ու չափանիշներին համապատասխան

- Տրամադրել դիպլոմի հավելված բոլոր շրջանավարտներին
- Ամբողջապես իրականացնել Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը
- Տրամադրել տեղեկատվություն և օժանդակություն կրթություն ստանալու համար միջազգային դրամաշնորհներին դիմելու կարգերի վերաբերյալ
- Աջակցել միջազգային ծրագրերի իրականացմանը

ԵՊԿ-ն պետք է նաև նկարագրի, թե ինչպես են մշտադիտարկվում միջազգայնացմանն ուղղված գործընթացները որակի ապահովման համակարգում:

Որակի ապահովում/կառավարում. Որակի ապահովման նպատակը կրթական ծրագրերի շարունակական բարելավումն է՝ ներառյալ համապատասխան շահակիցներին: ԵՊԿ-ում որակի ապահովման համար պատասխանատու է Որակի ապահովման բաժինը:

ԵՊԿ-ի որակի ներքին ապահովման համակարգը ներկայումս չի ներառում բոլոր կարևոր բաղադրիչները: Այն ավելի ամբողջական ու թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է մշակել որակի ապահովման հստակ պլան, որը կներառի ԵՊԿ-ի որակի ապահովման բաղադրիչները, թերացումները և բարելավումները: ԵՊԿ-ն պետք է համապատասխան շահակիցների հետ քննարկի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ որո՞նք են ԵՊԿ-ի որակի ապահովման նպատակները, ո՞վ է պատասխանատու դրա իրականացման համար, ե՞րբ կարելի է իրականացնել որակի ներքին ապահովման համակարգի գնահատում և ինչպե՞ս, ի՞նչ փաստաթղթեր և մասնակիցներ են անհրաժեշտ, ի՞նչ է պետք անել գնահատման արդյունքների հետ:

ՊԻԳԲ շրջափուլը նս պետք է իրականացվի: Որակի ապահովման հիմնական տարրերն են՝ ԵՊԿ-ի նպատակների սահմանում, արդյունքների չափում և նպատակների ու արդյունքների համադրում ՊԻԳԲ շրջափուլով: Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես է աշխատում ՊԻԳԲ շրջափուլը՝

- պլանավորել, թե ինչ է անհրաժեշտ անել
- հետո իրականացնել այդ գործողությունը
- հետո ստուգել, թե արդյոք իրականացվել է պլանավորված գործողությունը և արդյոք այն հանգեցրել է լավ արդյունքների,
- հաշվի առնել ստուգման/գնահատման արդյունքներն ու մշակել հետագա գործողությունները
- հետո սկսել կրկին՝ պլանավորել - իրականացնել - ստուգել - հարմարացնել/ադապտացնել

Որակի ապահովման համակարգի զարգացման նպատակով ես առաջարկում եմ հետևել այս քայլերին՝

- սահմանել որակի ապահովման նպատակները (վերցնել ինքնավերլուծության զեկույցից): Նպատակները կարելի է դուրս բերել առաքելություն և նպատակներ, որոշումների կայացման գործընթաց (կառավարում), կրթական ծրագրեր (ապահովել կրթական վերջնարդյունքների, կրթական ծրագրերի նպատակների, բովանդակության և գնահատման համահունչությունը՝ որպես որակի ապահովման գործընթաց), ուսանողներ, դասախոսական կազմ, հետազոտություն և զարգացում, ենթակառուցվածք և ռեսուրսներ, միջազգայնացում և որակի ներքին ապահովման համակարգ չափանիշներից,
- սահմանել կատարողականի գնահատման ցուցիչներ և արտաքին պահանջներ,
- մշակել հետադարձ կապի ապահովման գործիքներ (հարցումներ) ուսանողներից, դասախոսական կազմից և համապատասխան շահակիցներից կարծիքներ և տվյալներ հավաքագրելու համար,
- թիրախային արդյունքները դարձնել հնարավորինս հստակ,
- մշակել իրականացման ծրագիր,
- իրականացնել այն,
- պարբերաբար վերանայել համակարգը:

Համացանցում կան որակի ապահովման ձեռնարկների, որակի ապահովման համակարգի, երաժշտության գծով բարձրագույն կրթության կրթական ծրագրերի բազմաթիվ օրինակներ: Կոնսերվատորիաների եվրոպական ասոցիացիան նս պարունակում է շատ տեղեկատվություն և փորձ այս ուղղությամբ: Խնդրում ենք օգտագործել դա նս՝ ստանալու ավելի շատ տեղեկատվություն, թե ինչպես կարելի է զարգացնել ԵՊԿ-ի որակի ապահովման համակարգը:

Մկրտիչ Այվազյան

09 մարտի 2020թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Փորձագիտական խմբի ղեկավար՝

- **Մկրտիչ Այվազյան** - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ
- **Նարինե Խաչատրյան** - Երևանի պետական համալսարան, անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ
- **Յան Ռադեմակերս** - Մաստրիխտի երաժշտության ակադեմիայի նախկին ռեկտոր, Նիդերլանդներ
- **Մարգուս Պաերտլաս** - Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիայի պրոֆեսոր, Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիայի գիտական գործերի և հետազոտությունների գծով պրոռեկտոր, Էստոնիա
- **Անահիտ Տերտերյան** - Երևանի պետական համալսարան, կրթության կազմակերպում մասնագիտության ուսանողուհի

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է Գայանե Անանյանը:

Փորձագիտական այցի ընթացքում թարգմանությունը կատարել է՝ Մարիամ Հարությունյանը:

Նախնական զեկույցի թարգմանությունը կատարել է՝ Անի Մազմանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո (05.03.2019) ՈԱԱԿ-ի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է հինգ վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի «Փորձաքննության իրականացման ձեռնարկով»՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ինքնավերլուծությունը

Համալսարանը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 19.07.2019թ. ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծության զեկույցը հիմնականում պարունակում էր ընդհանրական և նկարագրական տեղեկատվություն, որպես հիմքեր ներկայացված փաստաթղթերի մեծ մասը հաստատված չէին, չնայած որ պարունակում էին տեղեկատվություն հաստատման ժամկետների և հաստատող անձի կամ կառույցի մասին, քիչ էր հավաքագրված քանակական տեղեկատվությունը և դրա վերլուծությունները:

Նախապատրաստական այց

Հաշվի առնելով հաստատության հեռավորությունը՝ նախապատրաստական այցը փոխարինվել է փորձագիտական խմբի ղեկավարի և գործընթացի համակարգողի մասնակցությամբ այցից երկու շաբաթ առաջ տեղի ունեցած Skype-հանդիպումով

Կոնսերվատորիայի կոնտակտային անձի հետ: Ներկայացվել են փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Նկարագրվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակներին ներկայացվող պահանջները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. դեկտեմբերի 9-ից 13-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական խմբի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ՝ այցից մեկ օր առաջ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և սովորող մասնակիցները, ֆակուլտետների դեկանները և ամբիոնների վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացի բաց հանդիպումից, որին ոչ ոք չէր գրանցվել: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **անբավարար և բավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար

կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրսբերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման առանձին կարծիք: Փաստաթուղթը թարգմանվել և տրամադրվել է փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն ԵՊԿ-ն ուղարկել է ՈԱԱԿ 14.02.2020թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների ամփոփ տարբերակը թարգմանվել և քննարկվել է միջազգային փորձագետի հետ: Դիտողությունների վերաբերյալ 2020թ. մարտի 4-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 09.03.2020թ.:

Գայանե Անանյան

09 մարտի, 2020թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան հիմնադրվել է 1921թ., սկզբում որպես երաժշտական ստուդիա, իսկ երկու տարի անց, 1923-ին, դարձել բարձրագույն երաժշտական կրթական հաստատություն՝ կոնսերվատորիա: Սա առաջին նման կրթօջախն էր Հայաստանում, որի ստեղծման համար առկա էին բոլոր նախադրյալները:

Այսօր բուհի գլխամասի կազմում գործում են 3 ֆակուլտետ և 19 ամբիոն: Բուհը իրականացնում է եռաստիճան բարձրագույն մասնագիտական կրթություն՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհմամբ: ԵՊԿ-ն առաջարկում է նաև լրացուցիչ կրթական ծրագիր «Երաժշտական կատարողական արվեստ» մասնագիտության համար:

Այսօր ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է լավագույն մասնագետներով՝ կոմպոզիտորներով, երաժշտագետներով, կատարողներով: Նրանցից շատերը միջազգային ճանաչում ունեցող արվեստագետներ են: Շուրջ 150 պրոֆեսոր (նրանց թվում արվեստագիտության դոկտորներ, թեկնածուներ), դոցենտներ, դասախոսներ և ասիստենտներ, որոնցից շատերը տարբեր միջազգային մրցույթների դափնեկիրներ են:

Ներկայումս Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի 3 ֆակուլտետներում և Գյումրու մասնաճյուղում ուսանում է ավելի քան 900 ուսանող: ԵՊԿ-ում ուսում են ստանում շուրջ 130 օտարերկրյա ուսանողներ:

Կրթություն. ԵՊԿ-ում գործող «Երաժշտական արվեստ» մասնագիտությունը ներառում էր կատարող, երաժշտագետ և ստեղծագործող մասնագիտությունները, Կոնսերվատորիան ընդլայնեց մասնագիտությունների ցանկը և սկսած 2016-/17 ուսումնական տարվանից, իրականացնում է արդեն իսկ 3 բակալավրի և 3 մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագիր՝ Երաժշտության պատմություն և տեսություն (երաժշտագետներ), Երաժշտական արվեստ (կոմպոզիցիա), Երաժշտական կատարողական արվեստ (բոլոր մասնագիտացումների կատարողներ): Հետևյալ մասնագիտությունները կազմակերպվում է ԵՊԿ գործող երեք՝ Վոկալ-տեսական, Դաշնամուրային և Նվագախմբային ֆակուլտետների կողմից: ԵՊԿ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերը բխում են և համահունչ են բուհի առաքելությանը, սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների: Կոնսերվատորիայի ՄԿԾ-ները ձևավորված են ելքային կրթական արդյունքներով, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-ին:

Կրթական ծրագրեր. Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են ՀՀ երաժշտական մշակութային կարիքներին, նպաստում են մշակույթի զարգացմանը, ազգային հոգևոր մշակութային արժեքների պահպանմանը: ՄԿԾ-ները միտված են առաքելության իրականացմանը և ամրագրված է Ռազմավարական ծրագրում:

ՄԿԾ-ների շարունակական զարգացումն ու արդի պահանջներին համապատասխանեցման ապահովումը ԵՊԿ-ի կարևորագույն նպատակներից է (ԵՊԿ 2019-2024 թթ. Ռազմավարական ծրագիր, նպատակ 1) :

Վերջին 3 տարիների ընթացքում ԵՊԿ-ն իրականացրել է մի շարք գործընթացներ մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման, ուսումնառության

վերջնարդյունքների սահմանման և Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիության ապահովման վերաբերյալ:
Դասախոսական կազմ ԵՊԿ-ի գործունեության հաջողության հիմնական գրավականը նրա գիտամանկավարժական կազմն է:
ԵՊԿ-ում կրթական գործընթացն իրականացվում է անհրաժեշտ որակավորում ունեցող բավարար թվով պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, որն ապահովում է կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխանող մասնագետների պատրաստումը:
ԵՊԿ–ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգ: ԵՊԿ-ի ուսումնառության իրականացման կարևոր ուղղություններից է երիտասարդ դասախոսների ներգրավումը կրթական գործընթացում:
ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմը ձևավորված է Կոնսերվատորիայի շրջանավարտներից: Գիտամանկավարժական կադրերի որակավորումները լիովին համապատասխանում են անհրաժեշտ պահանջներին: Դասախոսական կազմի ձևավորման սկզբունքներն են պրոֆեսիոնալիզմը, սերունդների ժառանգականությունը և փորձը:
Դասավանդում-ուսումնառություն. ԵՊԿ-ում ընդհանուր մասնագիտական դասընթացները հիմնականում անց են կացվում փոքր խմբերում, իսկ մասնագիտականները՝ անհատապես (դասախոս-ուսանող սկզբունքով): Կոնսերվատորիայի դասավանդման մեթոդների առանձնահատկությունները հանգեցնում են ուսանողակենտրոն ուսուցման՝ յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով անհատական մոտեցում:
Կրթական միջավայր. ԵՊԿ-ն, համաձայն Ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների, հետևողականորեն իրականացնում է նպատակային միջոցառումներ՝ ուղղված մասնագիտացումների կրթական ծրագրերի կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանը, դրանց շարունակական համալրմանն ու որակական բարելավմանը:
Հետազոտություն. Գիտական և հետազոտական ոլորտը Կոնսերվատորիայի երաժշտական արվեստի բազմազան գործունեության կարևոր ճյուղերից մեկն է: Դրանով զբաղված է հիմնականում «Երաժշտագիտություն» մասնագիտությունը, իր հիմնորոշ ուղղություններով՝ տեսություն, պատմություն, ֆոլկլորագիտություն, միջնադարագիտություն, ժամանակակից տեխնոլոգիաներ:
ԵՊԿ–ում հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները սահմանվում են բուհի 2012–2017 և 2019-2024 թթ. Ռազմավարական ծրագրերի հիման վրա:
ԵՊԿ–ում որպես հետազոտական արդյունքների հաստատման մեխանիզմ դիտվում են պատմա-տեսական (Երաժշտության պատմության, Երաժշտության տեսության, Կատարողական արվեստի պատմության և Ֆոլկլորագիտության) ամբիոնների նիստերը, ապա ԵՊԿ–ի գիտական խորհրդի նիստերը:
Միջազգայնացում. Կոնսերվատորիայի արտաքին կապերի համակողմանի զարգացման և միջազգայնացման ուղղությունները արտահայտված են բուհի 2012-2017 և 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրերում: Վերջին 3 տարիների ընթացքում միջազգայնացման ուղղությամբ բուհը կազմակերպել է ազգային և միջազգային մշակութային միջոցառումներ, մասնակցել է վարպետության դասերի օտարերկրյա և հանրապետությունում ճանաչված երաժիշտների մասնակցությամբ, մասնակցել է միջազգային ստեղծագործական նախագծերի: Կոնսերվատորիան կնքել է գործող պայմանագրեր եվրոպական՝ Պորտուգալիայի, Իտալիայի, Ավստրիայի, Հոլանդիայի, Ֆինլանդիայի, ինպես նաև Շոտլանդիայի երաժշտական բուհերի

հետ ուսանողների և դասախոսների շարժունության վերաբերյալ, ակտիվացնելով միջազգայնացման տվյալ ոլորտը:

Որակի ապահովում. Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի որակի ապահովման քաղաքականությունն արտացոլված է բուհի Ռազմավարական ծրագրում և ուղղված է Առաքելության և նպատակների իրագործմանը, որակի զարգացմանն ու բարելավմանը: ԵՊԿ-ի որակի ապահովման ռազմավարությունը և քաղաքականությունը ամրագրված են՝ Ռազմավարական ծրագրում, որն հաստատված է Կոնսերվատորիայի Կառավարման խորհրդի կողմից: Դրանց իրականացման ընթացքի վերահսկումը կատարվում է Գիտական խորհրդի և Ռեկտորատի կողմից:

Աղբյուր. վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն)

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

2019-2024թթ. ռազմավարական ծրագրի համաձայն ԵՊԿ-ի առաքելությունն է.

«Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիան ազգային դերակատարությամբ երաժշտական մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական հաստատություն է: ԵՊԿ-ի հիմնական Առաքելությունը բարձրագույն կրթության բոլոր մակարդակներով երաժշտական կրթություն ապահովելն է՝ գիտելիքի և մասնագիտական հմտությունների ձևավորումը, կատարելագործումը, փոխանցումը և հանրահռչակումը՝ ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից:

Լինելով հանրապետությունում երաժշտական բարձրագույն կրթության միակ հաստատություն՝ Կոնսերվատորիան միտված է կրթել ժամանակի պահանջներին համապատասխան բարձրակարգ երաժիշտ-մասնագետներ, ովքեր կունենան ժամանակի մշակութային պահանջներին համահունչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Կոնսերվատորիան շարունակելու է բարձրացնել իր հեղինակությունը՝ որպես միջազգային հարթակում պրոֆեսիոնալ բարձրագույն չափանիշեր ունեցող երաժշտական կրթության դարբնոց:

ԵՊԿ Գյումրու մասնաճյուղը, որպես Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի երաժշտական կրթական կենտրոն, հնարավորություն է ընձեռում ստանալ մասնագիտական բարձրագույն կրթություն, տարածաշրջանում իրականացնելով լուսավորչական և սոցիալ–մշակութային ծրագրեր»:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրում սահմանված են նաև Կոնսերվատորիայի նպատակները և խնդիրները:

Նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից կատարված խորհրդատվության համաձայն 2012-2017թթ. ռազմավարական ծրագրի համեմատ 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրում Կոնսերվատորիայի առաքելությունը զգալիորեն ավելի հստակ է ձևակերպված, սահմանված է նաև ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի առաքելությունը:

ՀՊԿ 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրի հիմնական նպատակներն են.

- Բարձրագույն կրթություն
- Բարձրագույն հետազոտություններ և նորարարություն
- Հանրային ներգրավում և ծառայություններ
- Զարգացնել ֆինանսական ներդրումը կոնսերվատորիայի բյուջե:

Նշված նպատակներին հասնելու համար Կոնսերվատորիան սահմանել է 24 խնդիր:

ԵՊԿ-ն երաժշտական կրթական ծրագրեր է իրականացնում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում, ինչը համապատասխանում է ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին և ծածկում է բարձրագույն կրթության բոլոր աստիճանները:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ինքնավերլուծության համաձայն ներքին և արտաքին շահակիցների կարիքները հաշվի են առնվել 2019-2024թթ. Ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում ներքին շահակիցների ներգրավման և ներքին ու արտաքին շահակիցների հետ քննարկումների անցկացման միջոցով: Այցի ընթացքում պարզվեց, որ խնդիրներ են դուրս բերվել նաև ուսանողների և անձնակազմի հետ իրականացվող նորընտիր ռեկտորի հանդիպումների ընթացքում:

2019-2024թթ. Ռազմավարական ծրագիրը նախքան կառավարման խորհրդում քննարկվելն ու հաստատվելը ներկայացվել է նաև Կոնսերվատորիայի գիտական խորհրդին: ԵՊԿ-ի կառավարման խորհուրդը կազմված է 24 անդամներից, որոնցից 12-ը ներքին շահակիցներ են (6 պրոֆեսորադասախոսական կազմի և 6 ուսանողության ներկայացուցիչներ), իսկ 12-ը հիմնադրի և լիազոր մարմնի կողմից առաջադրված արտաքին շահակիցներ: ԵՊԿ-ի գիտական խորհուրդը կազմված է 60 անդամներից, որոնցից 45-ը (75%) Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական և վարչարարական աշխատակիցներ են՝ ներառյալ դեկաններին, ամբիոնների վարիչներին և հիմնական վարչական ստորաբաժանումների ղեկավարներին, իսկ 15-ը (25%) ուսանողության ներկայացուցիչներ են: Խորհուրդներում տեղի ունեցած քննարկումների ընթացքում Կոնսերվատորիայի արտաքին և ներքին շահակիցների կողմից ձևակերպումներ փոփոխելու բնույթ ունեցող մի շարք փոփոխություններ են առաջարկվել և կատարվել:

Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացը և մասնավորապես ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակների կարիքների վերհանումը նկարագրող հաստատված ընթացակարգը բացակայում է:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՊԿ-ի ինքնավերլուծության համաձայն 2019-2024 թվականների ռազմավարական ծրագիրը մշակելիս Կոնսերվատորիան հիմնվել է նախորդ ռազմավարական ծրագրի վերլուծության վրա: Սակայն այցի ժամանակ պարզվեց, որ նախորդ ՌԾ-ի իրականացման մանրամասն վերլուծություն չի իրականացվել: Իսկ ԵՊԿ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմ են հանդիսանում Կոնսերվատորիայի գործունության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք կազմվում են Կոնսերվատորիայի պրոռեկտորների հաշվետվությունների հիման վրա: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները ներկայացվում են կառավարման խորհրդի քննարկմանն ու գնահատմանը: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները կազմված չեն ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և վերջինիս իրականացումը ուղղակիորեն չեն արտահայտում:

2019-2024թթ. ռազմավարական ծրագրում բացակայում է նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը՝ նշված չեն գործողությունների տրամաբանական հաջորդականությունը, իրականացման ժամկետները, պատասխանատուները և գնահատման ցուցիչները (KPI):

Նախորդ հավատարմագրման փորձաքննության արդյունքում չափանիշ 1-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից ԵՊԿ-ին տրամադրված և ԵՊԿ-ի բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված խորհրդատվության համաձայն Կոնսերվատորիան նախատեսել էր մինչև 2018թ. մշակել ՌԾ-ի պարբերաբար մշտադիտարկման, արդյունքների գնահատման նոր մեխանիզմներ և համապատասխան ընթացակարգեր, ինչպես նաև Կոնսերվատորիայի առաքելության և ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատման հարցաթերթիկներ: Սակայն, նախատեսված գործողությունները չեն իրականացվել:

Դատողություն

ԵՊԿ-ն ունի սահմանված և հրապարակված առաքելություն և ռազմավարական նպատակներ, որոնք, ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Սակայն 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների պլանում բացակայում են՝ ժամանակացույցը, սահմանված չեն պատասխանատուները և գնահատման ցուցիչները (KPI): Այս հանգամանքը դժվարեցնում է ռազմավարական ծրագրի իրականացման կազմակերպումը:

Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանը միտված մեխանիզմ է ռեկտորի տարեկան հաշվետվությունները: Սակայն հաշվետվությունները չեն կազմվում ըստ ռազմավարական նպատակների, ինչը դժվարացնում է առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման մշտադիտարկումը և գնահատումը, ինչպես նաև բարելավման քայլերի պլանավորումը:

ԵՊԿ-ում իրականացվում են երաժշտական կրթական ծրագրեր բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում, ինչը համապատասխանում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին և Կոնսերվատորիայի առաքելությանը:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ռազմավարական ծրագրի նպատակները բխում են առաքելությունից և ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, Կոնսերվատորիայում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ին և բխում են ԵՊԿ-ի առաքելությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԵՊԿ-ի կառավարումը իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի կողմից: Կառավարման բարձրագույն մարմինը՝ 24 անդամից կազմված ԵՊԿ-ի Խորհուրդն է, որն ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը ձևավորվում է հիմնադրի, լիազոր մարմնի, Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից: Խորհրդի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը: Խորհուրդը հաստատում է Կոնսերվատորիայի ռազմավարական ծրագիրը և բյուջեն, ընտրում ռեկտորին, գնահատում է գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվությունը: Այսինքն Խորհուրդը պատասխանատու է ռազմավարական պլանի հաստատման և դրա կատարման ընթացքի միջնաժամկետ և երկարաժամկետ մշտադիտարկման (հաշվետվությունների ընդունման) համար: Ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են գիտական խորհուրդը և ռեկտորը: ԵՊԿ-ի գիտական խորհուրդը կազմված է 60 անդամից և ձևավորվում է 5 տարի ժամկետով: Խորհրդի նախագահը ի պաշտոնե ռեկտորն է: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են նաև պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներ: Գիտական խորհրդի անդամների թվի 25%-ը ուսանողներ են: Այսպիսի կառավարման համակարգը ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը:

ԵՊԿ-ի գործունեությունը ըստ ոլորտների համակարգվում է 4 պրոռեկտորների միջոցով.

1. ուսումնական գծով,
2. գիտական գծով,
3. միջազգային համագործակցության և հասարակական կապերի գծով,
4. ֆինանսա-տնտեսական գծով:

Ուսումնական գծով պրոռեկտորի ենթակայության ներքո են՝ ուսումնական մասը, ակուստիկ լաբորատորիան, բուժկետը և 3 ֆակուլտետները նրանց կազմում ընդգրկված 19 ամբիոններով:

Գիտական գծով պրոռեկտորի ենթակայության ներքո են՝ հրատարակչական-խմբագրական բաժինը, գրադարանը, ժող. ստեղծագործական ուսումնասիրությունների լաբորատորիան:

Միջազգային համագործակցության և հասարակական կապերի գծով պրոռեկտորի ենթակայության ներքո են՝ միջազգային համագործակցության և հասարակական կապերի բաժինը:

Ֆինանսա-տնտեսական գծով պրոռեկտորի ենթակայության ներքո են՝ հաշվապահությունը, գնումների համակարգողը, պահեստը, գլխավոր ինժեները, անվտանգության գծով ինժեները, քաղ. պաշտպանության շտաբը, տնտեսական մասը և սպասարկող անձնակազմը:

ԵՊԿ-ի օպերային ստուդիան, որակի ներքին ապահովման բաժինը, գրասենյակը, կադրերի բաժինը, գլխավոր իրավախորհրդատուն, արխիվը և Գյումրու մասնաճյուղը գտնվում են ռեկտորի անմիջական ղեկավարման ներքո:

Ինքնավերլուծության համաձայն ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծացնելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով միավորվել են նույն գործառույթն ունեցող մի քանի մասնագիտական ամբիոն: Բացվել է նոր կամերային երաժշտության ֆակուլտետ:

2019 թվականի փետրվարից ԵՊԿ-ում գործում է 5 անդամներից կազմված «էթիկայի մշտական հանձնաժողով», որը առաջնորդվում է ԵՊԿ էթիկայի մշտական հանձնաժողովի աշխատակարգով: Կանոնակարգը պարունակում է հանձնաժողովի անդամների պարտականությունները և գործառույթները, քննարկման ենթակա բողոքները, հանձնաժողովին դիմելու կարգը, հանձնաժողովի գործելակերպը: Նշվում են հանձնաժողովի գործունեության սկզբունքները, սակայն աշխատակարգում դրանց սահմանումները կամ սահմանման հղումները չեն տրվում:

ԵՊԿ-ի ստորաբաժանումների կանոնակարգերը հիմնականում հնացած են կամ բացակայում են:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵՊԿ-ն լուրջ խնդիրներ ունի նյութական և ֆինանսական ռեսուրսների առումով: Գերեթե բոլոր ներքին շահակիցները և շրջանավարտները հանդիպումների ընթացքում նշեցին, որ նյութական ռեսուրսները, մասնավորապես՝ երաժշտական գործիքները Կոնսերվատորիայում իրականացվող ուսումնական գործընթացների երկարատև ապահովման համար բավարար չեն: Գործիքները հիմնականում ձեռք են բերվել դեռ ԽՍՀՄ տարիներին, շատերը բազմիցս վերանորոգվել են և չեն համապատասխանում ուսանողների կարիքներին: Ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են և գործիքային բազան թարմեցնելու հնարավորություն չեն տալիս:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ներքին շահակիցները ներգրավված են ԵՊԿ-ի բարձրագույն կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում: Մասնավորապես ԵՊԿ-ի Խորհրդում որպես պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ ներգրավված են՝ ուսումնական և գիտական գծով պրոռեկտորները, նվագախմբային ֆակուլտետի դեկանը, ժողովրդական նվագարանների և երգեցողության ամբիոնի վարիչը, կամերային անսամբլի ամբիոնի պրոֆեսորը, ինչը կազմում է Խորհրդի անդամների 25%-ը: Խորհրդի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները առաջադրվում են ԵՊԿ գիտական

խորհրդի կողմից: Խորհրդում 25%-ը կազմված է ուսանողներից, խորհրդի 6 ուսանողները առաջադրվում են ուսանողական խորհրդի կողմից:

Գիտական խորհրդի 60 անդամների թվում են՝ պրոռեկտորները, դեկանները, Գյումրու մասնաճյուղի տնօրենը, 19 ամբիոնների վարիչները (այդ թվում Գյումրու մասնաճյուղից), դոկտորի աստիճանով և պրոֆեսորի կոչումով 7 պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և 15 ուսանող (ինչը կազմում է Գիտական խորհրդի անդամների 25%-ը): Գիտական խորհրդում ներգրավված է նաև արհմիություն ներկայացուցիչը, որը իր անդամների շահերը պաշտպանում է նրանց իրավունքները ոտնահարող որոշումներից:

Այցի ընթացքում փորձագիտական խմբին ներկայացված ԵՊԿ կառավարման և գիտական խորհրդի արձանագրություններում դասախոսների և ուսանողների կողմից իրենց առնչվող որոշումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացված չեր, բացառությամբ կառավարման Խորհրդում 2014-2019թթ. ռազմավարական ծրագրի քննարկման ընթացքում Կոնսերվատորիայի պրոֆեսորներից մեկի կողմից ձևակերպումներ փոփոխելու բնույթ ունեցող առաջարկությունը:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵՊԿ-ի երկարաժամկետ պլանավորումը արտացոլված է 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի նպատակներին ու խնդիրներին հասնելու համար սահմանված գործողություններում: Սակայն չի սահմանվում գործողությունների իրականացման ժամանակացույցը, անհրաժեշտ ռեսուրսները, նշված չեն գործողությունների պատասխանատուները, բացակայում են կատարողականի ցուցիչները (KPI): Միևնույն ժամանակ ԵՊԿ-ի 2012-2017թթ. ռազմավարական ծրագիրն ուներ խնդիրների իրականացման ժամանակացույց, որում նշված են խնդիրներից բխող գործողությունները և դրանց պատասխանատուները:[1]

Միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում ԵՊԿ-ում չի իրականացվում ո՛չ վարչական ստորաբաժանումների, ո՛չ էլ ամբիոնների մակարդակներում:

Մշտադիտարկման միակ ձևը պրոռեկտորների հաշվետվությունների վրա հիմնված ռեկտորի տարեկան հաշվետվություններն են, որոնք ըստ ռազմավարական ծրագրի նպատակների չեն կազմվում: Երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը իրականացնելու և մշտադիտարկելու մեխանիզմները սահմանող փաստաթղթային և այլ հիմքերը բացակայում են:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավերլուծության իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով ԵՊԿ-ին հարցազրույցներ և հարցումներ է կազմակերպում շրջանավարտների և գործատուների շրջաններում: Սակայն բացառությամբ վերոնշյալ

[1] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

հարցումների և հարցազրույցների Կոնսերվատորիայի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն չի իրականացվում: Բացակայում են հավաստի տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման քաղաքականությունը և գործընթացը: Սահմանված չէ թե ովքեր են պատասխանատու ՀՀ-ում իրականացվող օրենսդրական փոփոխություններին, հանրության կարիքներին և միջազգային կրթական և այլ միտումներին համապատասխան Կոնսերվատորիայի վիճակի ուսումնասիրությունների համար:

Ինքնավերլուծության համաձայն որոշումներ կայացնելիս ուսումնական գործընթացի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով նախատեսվում է մշակել և ներդնել կառավարման էլեկտրոնային ամբողջական համակարգ:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԵՊԿ-ի պլանավորման գործընթացը իրականացվում է բուհական մակարդակով և արտացոլվում է կառավարման խորհրդի կողմից հաստատվող հնգամյա ռազմավարական ծրագրում և գիտական խորհրդի կողմից հաստատվող գործողություններով: Սակայն ստորաբաժանումների մակարդակում Կոնսերվատորիայի ռազմավարության իրականացմանն ուղղված գործողությունների պլանավորում չի իրականացվում: Ռազմավարական ծրագրից բխող տարեկան պլանների բացակայությունը հանգեցնում է Կոնսերվատորիայի ռազմավարական գործողությունների և ստորաբաժանումների գործունեության փոխկապակցված չլինելուն:

Ռեկտորի տարեկան հաշվետվությունները չեն կազմվում ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և դրանցից չի երևում ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն ԵՊԿ-ի որակի ներքին ապահովման բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են հարցազրույցներ և հարցումներ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ դրանք համակարգված բնույթ չեն կրում և ուղղված են փոքր թվով գործընթացների գնահատմանը: Հարցաթերթերը կրում են ընդհանրական բնույթ: Ընդհանուր առմամբ ԵՊԿ-ում իրականացվող գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմները բացակայում են:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Փորձագիտական խմբի կողմից ինքնավերլուծության ուսումնասիրության, ինչպես նաև այցի ընթացքում ԵՊԿ-ի հրապարակումների ուսումնասիրությունը սահմանափակված էր Կոնսերվատորիայի պաշտոնական կայքէջի չգործելու հետևանքով: Հնարավոր չեղավ գտնել՝ Կոնսերվատորիայում իրականացվող կրթական ծրագրերը և դրանց նկարագրությունը,

պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ տեղեկատվությունը, դիմորդներին և ուսանողներին (այդ թվում՝ օտարերկրյա) ուղղված տեղեկատվությունը, շրջանավարտների (այդ թվում՝ հանրահայտ դարձած) վերաբերյալ տեղեկատվությունը, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Բացակայում են նաև որակի ապահովման նպատակով իրականացվող ուսումնասիրությունների վերլուծությունները: Արդյունքում փորձագիտական խումբը փաստում է, որ ԵՊԿ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները բացակայում են: Հետևաբար այդ ամենի գնահատման մեխանիզմները ԵՊԿ-ում նույնպես բացակայում են:

Դատողություն

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնսերվատորիան ունի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ ու համապատասխան որակավորումներ ունեցող անձնակազմ: Վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմը կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար հիմնականում բավարար են: ԵՊԿ-ի կառուցվածքը ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը: Առաջացող վեճերը էթիկայի նորմերին համապատասխան լուծելու տեսակետից դրական է նաև էթիկայի մշտական հանձնաժողովի ձևավորումը և գործունեությունը:

Սակայն առկա նյութական և ֆինանսական ռեսուրսները Կոնսերվատորիայում իրականացվող ուսումնական գործընթացներն ապահովելու համար բավարար չեն: Դա կապված է Կոնսերվատորիայի դասընթացները հիմնականում անհատական պարապմունքների ձևով կազմակերպելու առանձնահատկության հետ: Այս մեծ արդյունավետություն ունեցող և ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող յուրահատկությունը պահանջում է պատշաճ վիճակում գտնվող երաժշտական բազմաթիվ գործիքների առկայություն: Հաշվի առնելով երաժշտական գործիքների բարձր արժեքը, Կոնսերվատորիայի ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը և պետության կողմից այս նպատակների համար զգալի ֆինանսավորման բացակայությունը սա լուրջ մարտահրավեր է ԵՊԿ-ի համար: Երաժշտական գործիքների սակավությունը և նոր գործիքներ ձեռք բերելու ֆինանսական ռեսուրսների բացակայությունը ռիսկի տակ են դնում ԵՊԿ-ի ուսումնական գործընթացը:

Կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ներքին շահակիցների ներգրավման միջոցով ԵՊԿ-ն հնարավորություն է ընձեռում ուսանողներին ու դասախոսներին մասնակցել որոշումների կայացմանը:

Կոնսերվատորիան իրականացնում է երկարաժամկետ պլանավորում, սակայն սահմանված չեն գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, ժամկետները, պատասխանատուները, կատարողականի ցուցիչները (KPI): Բացակայում են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում և մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները: Գործունեության գնահատման մեխանիզմներ մշակելու վերբերյալ խորհրդատվություն էր տրվել նաև նախորդ հավատրմագրման փորձագիտական խմբի կողմից: ԵՊԿ-ում միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման բացակայությունը

կասկածի տակ է դնում Կոնսերվատորիայի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը «նպատակներին համապատասխանության» տեսակետից:

Գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով կազմակերպվող հարցազրույցները և հարցումները համակարգված չեն: Բազմակողմանիորեն հավասարակշռված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման քաղաքականությունը և գործընթացները բացակայում են: Որակի ներքին ապահովման բաժինը, որպես ճշգրիտ որոշումներ կայացնելու համար տեղեկատվություն հավաքագրող և տրամադրող միավոր կառավարման մարմինների կողմից չի դիտարկվում:

Որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) չի գործում, ինչը վտանգում է Կոնսերվատորիայի արդյունավետ գործունեությունը:

Կոնսերվատորիայի գործընթացների արդյունավետությունը, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմները բացակայում են, ինչը խոչընդոտում է Կոնսերվատորիայի գործունեության թափանցիկության ապահովմանը: Այս առումով ԵՊԿ-ի կողմից հաշվի չի առնվել նաև նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունը՝ տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցներ գտնելու վերաբերյալ:

Բացասական է նաև այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրման արդյունքում չափանիշ 2-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից ԵՊԿ-ին տրամադրված և ԵՊԿ-ի բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված խորհրդատվության 3 կետերից ոչ մեկը չի կատարվել:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ առկա չէ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման և ռեսուրսները ըստ ռազմավարական նպատակների բաշխելու պրակտիկան, ինչպես նաև կառավարումը չի իրականացվում համաձայն որակի կառավարման շրջափուլի (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), հետևաբար վտանգվում է ԵՊԿ առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացումը, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԵՊԿ-ում իրականացվում են «Երաժշտական արվեստ», «Գործիքային կատարողականություն», «Դիրիժորություն», «Վոկալ արվեստ» և «Երաժշտագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերը բակալավրեատի և մագիստրատուրայի մակարդակներում, ինչը համապատասխանում է Կոնսերվատորիայի առաքելությանը:

2015 թվականին հաստատվել է «ԵՊԿ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ» փաստաթուղթը, որում նկարագրվում է ՄԿԾ-ներին ներկայացվող պահանջների նկարագիրը ներառյալ՝ ՄԿԾ-ների նպատակների սահմանումը, ուսումնառության արդյունքների սահմանումը ամբողջ կրթական ծրագրի և դասընթացների մակարդակներում, ուսումնառության նյութական և մարդկային ռեսուրսների սահմանումը, ինչպես նաև ՄԿԾ-ների փաստաթղթավորման պահանջները ներառյալ՝ ՄԿԾ-ի մասնագրի և առարկայական ծրագրերի կառուցվածքները:

ՄԿԾ-ները մշակված են ըստ Կոնսերվատորիայի կողմից սահմանված ուսումնառության արդյունքներ պարունակող ձևաչափերի, որոնք մշակվել են ԵՊԿ-ում գործող Կրթական ծրագրերի մշակման, բարելավման ու գնահատման աշխատանքային խմբի կողմից միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում: Սակայն ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱՇ-ին կամ Դուբլինյան նկարագրիչներին չափելի չէ: ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի համապատասխանությունն արտացոլող գործիքները և հիմքերը բացակայում են: ՄԿԾ-ի նկարագրերը ներառում են վերջնարդյունքների և դասընթացների համեմատական մատրիցը, սակայն պարզ չեն մատրիցի լրացման սկզբունքները, ի՞նչպես են հաշվի առնվում դասընթացների ուսումնառության արդյունքները: Միևնույն ժամանակ կան ուսումնառության արդյունքներ, որոնց ձևավորմանը նպաստում է միայն մեկ դասընթաց (2 կրեդիտ ծավալով):

Այնուամենայնիվ, ուսումնական պլաններում ներկայացված դասընթացները ապահովում են ՄԿԾ-ների բովանդակության հաջորդականությունը և փոխկապակցվածությունը:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասընթացների ծրագրերը ներառում են դասընթացների ուսումնառության վերջնարդյունքները ըստ՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդները բացակայում են: Արդյունքում դասընթացի մակարդակում ուսումնառության արդյունքների և դասավանդման ու ուսումնառության մեթոդների համաձայնեցվածության աստիճանը (հորիզոնական համաձայնեցում /horizontal alignment) գնահատելի չէ: Դասավանդման և ուսումնառության քաղաքականությունը բացակայում է նաև ՄԿԾ-ների նկարագրերում:

ՄԿԾ-ներում կան դասընթացներ, որոնք շարունակվում են մեկից ավելի կիսամյակներ, սակայն առարկայական ծրագրերում դրանց ուսումնառության արդյունքները ըստ

կիսամյակների սահմանված չեն: Այդպիսին է օրինակ՝ «Կոմպոզիցիա» առարկան: Դա կարող է խոչընդոտել ECTS կրեդիտների փախանակմամբ ուսանողների շարժունությանը:

Ուսանողակենտրոն ուսուցմանը մեծապես նպաստում է մասնագիտական դասընթացները անհատական պարապմունքների ձևով կազմակերպելը, սակայն ընդհանուր-հումանիտար և տեսական դասընթացներինը ուսանողակենտրոն չեն:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

2013 թվականից ԵՊԿ-ում գործում է «ԵՊԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ը, որով սահմանվում է ուսանողներին ըստ ուսումնառության արդյունքների գնահատման քաղաքականությունը: 2014-2015 ուսումնական տարվանից Կոնսերվատորիայում փորձարկվել է բազմաբաղադրյալ գնահատման համակարգ, որը 2018-2019 ուսումնական տարվանից ներդրվել է ամբողջ Կոնսերվատորիայում: Նոր համակարգը նկարագրում է գնահատականի ձևավորման բաղադրիչները և դրանց հատկացվող կշիռը: Գնահատումը իրականացվում է մասնագիտական հանձնաժողովի ներկայությամբ: Գնահատման նոր համակարգի ներդրումը միտված է գնահատման սուբյեկտիվության նվազեցմանը:

«ԵՊԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ում նկարագրվում է գնահատման փուլերը և համակարգը՝ ներառյալ ամփոփիչ ատեստավորումը, գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև ուսանողի ակադեմիական տեղեկագրին ներկայացվող պահանջները: Գնահատման համակարգը մանրամասն ներկայացված է նաև դասընթացների առարկայական ծրագրերում:

«ԵՊԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ում, ՄԿԾ-ների նկարագրիչներում և առարկայական ծրագրերում ակադեմիական ազնվության ապահովմանը վերաբերող կետերը բացակայում են:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Ինքնավերլուծությունից և այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵՊԿ-ն իր ՄԿԾ-ները մշակելիս ուսումնասիրվել են Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի, Սանկտ Պետերբուրգի Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի, Թբիլիսիի Վ. Սարաջիշվիլիի անվան պետական կոնսերվատորիայի, Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիայի և Լատվիայի Յ. Վիտոլի անվան երաժշտական ակադեմիայի ծրագրերը, այնուամենայնիվ, որպես այդպիսին, լիարժեք՝ հստակ մեթոդաբանությամբ, բենչմարքինգ չի իրականացվել:

ԵՊԿ-ն համագործակցում է 16 ԱՊՀ և 11 Եվրոպական երկրների, ինչպես նաև 2 ԱՄՆ, 1 Մեքսիկական և 1 Մոնղոլական բուհերի հետ: Վերջին 5 տարիների ընթացքում նշված բուհերից միայն 5 Եվրոպական բուհերի հետ է ուսանողների և/կամ դասախոսների շարժունություն իրականացվել:

Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ երկու նախորդ տարիների ընթացքում ուսանողների և դասախոսների շարժունությունը զգալի մեծացել է.





3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՊԿ-ի ինքնավերլուծությունից և այցի արդյունքում պարզվեց, որ Կոնսերվատորիայում գործում է Կրթական ծրագրերի մշակման, բարելավման ու գնահատման աշխատանքային խումբ, որը կրթական ծրագրերի բարելավման նպատակով նախատեսում է օգտվել հարցումների անցկացման արդյունքում ուսանողներից, շրջանավարտներից և այլ շահակիցներից ստացված արդյունքներից և աշխատաշուկայի պահանջներից: Սակայն ներքին և առավել ևս արտաքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումները սակավաթիվ են, պարբերական բնույթ չեն կրում և չեն կարող լիարժեք հիմք հանդիսանալ ծրագրերի բարելավման համար:

Որպես ծրագրերի գնահատման մեխանիզմ է դիտվում նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների արտերկրից հրավիրված նախագահների հաշվետվությունները, սակայն դրանք հիմնականում շատ ընդհանրական են և ծրագրերի վերանայման համար հիմք հանդիսանալ չեն կարող:

Դատողություն

ԵՊԿ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները լիովին համապատասխանում են Կոնսերվատորիայի առաքելությանը:

Գործում է «ԵՊԿ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ» փաստաթուղթը, սակայն այն բավականին ընդհանրական է: ՄԿԾ-ները մշակված են ըստ ուսումնառության արդյունքների: ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը բացակայում է: «ԵՊԿ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ը բավականին մանրամասն նկարագրում է ուսանողների ակադեմիական առաջընթացի գնահատման ընթացակարգը, սակայն նոր բազմաբաղադրյալ

համակարգի ներդրումից հետո այն վերանայման կարիք ունի: Դասընթացների գնահատումը նոր բազմաբաղադրյալ համակարգով ներկայացված է առարկայական ծրագրերում:

ՄԿԾ-ները ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցման (alignment) կարիք ունեն: Ուղղահայաց համաձայնեցումը կնպաստի ՈԱՇ-ի և ՄԿԾ-ի, ինչպես նաև ՄԿԾ-ի և դասընթացների մակարդակներում սահմանված ուսումնառության արդյունքների համապատասխանությունն արտացոլող սկզբունքների, ընթացակարգերի և գործիքների մշակմանն ու ներդրմանը: Հորիզոնական համաձայնեցումը կապահովի յուրաքանչյուր դասընթացի համար սահմանված ուսումնառության արդյունքների ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների ընտրության ընթացակարգերի և գործիքների մշակումը և ներդնումը:

Ակադեմիական ազնվությունն ապահովող ընթացակարգերը և մեխանիզմները բացակայում են: Ինչը հավանական է դարձնում ուսումնական և հետազոտական գործունեության սահմաններում գրագողության երևույթների առկայությունը:

Մասնագիտական (կատարողական, ստեղծագործական) դասընթացներում առկա են ուսանողակենտրոն մոտեցումներ: Դա ուսումնական գործընթացը անհատական պարապմունքների միջոցով կազմակերպելու արդյունք է: Նշված դասընթացների ընթացքում դասախոսը անդրադառնում է յուրաքանչյուր ուսանողի կատարողականությանը՝ շեշտադրելով և շտկելով յուրաքանչյուր դիտվող խնդիրը:

ՄԿԾ-ների ընթացիկ բարելավումների ընթացքում համեմատություններ են իրականացվել ՌԴ և Եվրոպական մի շարք բուհերի կրթական ծրագրերի հետ: Ուսանողների և դասախոսների շարժունության մակարդակը ցածր է, սակայն վերջին երկու տարիների ընթացքում դիտվում է շարժունության զգալի աճ, ինչը հիմնականում պայմանավորված է Կոնսերվատորիայի միջազգային ոլորտում դիտվող ակտիվացմամբ:

ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքակնություն և մեխանիզմներ սահմանված չեն, իսկ գործիքները բավարար չեն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում չափանիշ 3-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից ԵՊԿ-ին տրամադրված և բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված դասընթացների ուսումնառության արդյունքների մշակմանը, ԵԿԱ (AEC) անդամ կոնսերվատորիաների կրթական ծրագրերի ուսումնասիրությանը և ամբիոնների համար վերապատրաստումներ, սեմինարներ կազմակերպելուն ուղղված խորհրդատվությունների ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԵՊԿ-ում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են առաքելությանը, հանդիսանում են Կոնսերվատորիայի գործունեության պլանավորման անբաժան մասը, մշակված են ըստ ուսումնառության վերջնարդյունքների, առկա է գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵՊԿ-ի ինքնավերլուծության համաձայն բարձրագույն երաժշտական կրթության յուրահատկություն է հանդիսանում, որ կատարողական մասնագիտությունների դիմորդները երաժշտական կրթությունը սկսում են վաղ տարիքից երաժշտական դպրոցներում կամ այլ մասնագիտացված հաստատություններում: Երաժշտական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատությունների աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով ԵՊԿ-ի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվում են համերգներ, ցերեկույթներ, վարպետության դասեր, համերգ-դասախոսություններ: Մասնագիտական կողմնորոշում են իրականացնում նաև երաժշտական ուսումնական հաստատություններում դասավանդող ԵՊԿ-ի դասախոսները: ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ներգրավված են լինում նաև երաժշտական մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպվող ունկնդրումներին, դասարանական և հաշվետու համերգներին, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: Սակայն այս գործընթացները համակարգված բնույթ չեն կրում և դրանց արդյունավետությունը գնահատված չէ:

Ինքնավերլուծությունից և այցի ընթացքում պարզվեց, որ ԵՊԿ-ի ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են համաձայն ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Վերոնշյալ կարգը մանրամասն նկարագրում է դիմորդների փաստաթղթերի ընդունման փուլերը և միասնական քննությունների անցկացման կարգը, սակայն արվեստի բուհերի ներբուհական մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգը չի ներառում: Մասնագիտական առարկաների ընդունելության քննական չափանիշները մշակվում են ԵՊԿ համապատասխան ամբիոնների կողմից և ներկայացվում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը: Այնուամենայնիվ ԵՊԿ-ում իրականացվող մասնագիտությունների առանձնահատկություններից բխող ընթացակարգերը և յուրահատկությունները սահմանող ընդունելության ներքին փաստաթուղթը բացակայում է: Նույնը վերաբերում է նաև մագիստրոսական կրթական ծրագրերին, որոնց համար ներբուհական ընդունելության կարգը նույնպես բացակայում է:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ընդունելության քննությունները թափանցիկ անցկացնելու նպատակով 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության քննությունների վերջում, աշխատանքը հանձնելուց առաջ, ուսանողներին տրամադրվել են իրենց աշխատանքների պատճենները, քանի որ մասնագիտությունների յուրահատկություններից ելնելով՝ աշխատանքները գրվում են մատիտով:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊԿ-ի ինքնավերլուծության համաձայն ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված Կոնսերվատորիայում գործում են հետևյալ մեխանիզմները՝

1. ուսանողների պարտադիր ներգրավվածությունը կառավարման մարմիններում և խորհուրդներում,
2. անհատական պարապմունքների ժամանակ ուսանողների և դասախոսների անմիջական շփման ընթացքում ուսանողներին հուզող հարցերի բարձրաձայնում և քննարկում,
3. ուսանողների շրջանում անցկացվող անկետային հարցումները դասավանդման որակի և ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ,
4. ուսանողների հանդիպումները ռեկտորի հետ:

Ինքնավերլուծությունում նույպես նշվում է, որ ուսանողների շրջանում իրականացվող հարցումների վերլուծության արդյունքները համադրվում են ռեկտորի հետ ուսանողների հանդիպումների ընթացքում արձանագրված խնդիրների հետ, մշակվում այդ խնդիրների լուծման մեխանիզմները և կայացվում համապատասխան որոշումներ:

Սակայն այցի ընթացքում պարզվեց, որ կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների և Կոնսերվատորիայի ուսանողական համայնքի կապը բացակայում է: Կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների միջոցով ուսանողական համայնքի խնդիրները բարձրաձայնելու մեխանիզմները բացակայում են: Ուսանողության լայն շերտերը կառավարման մարմիններում ներգրավված ուսանողներին չեն ճանաչում կամ չեն վստահում նրանց, խորհուրդներում ընդգրկված ուսանողների միջոցով խնդիրների բարձրաձայնման հնարավորությունը չի գիտակցվում մի կողմից և չի բարձրաձայնվում միյուս կողմից:

Անհատական պարապմունքների ընթացքում ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ կարևոր է նշել, որ դրանք իրականացվում են միայն կիրառական, կատարողական մասնագիտությունների սահմաններում, և նույնիսկ այդ դեպքում իրականացվում են ոչ բոլոր դասընթացների սահմաններում: Անհատական պարապմունքների ժամանակ ուսանողի և դասախոսի համատեղ աշխատանքը և ուսանողի մոտ առաջացող հարցերը սահմանափակվում է տվյալ դասընթացով՝ դրա դասավանդման մեթոդներով, ռեսուրսներով և այլն: Այդ պարապմունքների ընթացքում ուսանողները այլ դասընթացների և մասնավորապես տեսական կամ հումանիտար դասընթացների վերաբերյալ խնդիրներ բարձրաձայնելու հնարավորություն չունեն:

Ուսանողների շրջանում անցկացվող անկետային հարցումները իրականացվում են մեկ միասնական հարցաթերթիկի միջոցով, հստակ պարբերականությամբ չեն իրականացվում, նպատակաուղղված չեն յուրաքանչյուր դասընթացին և բավականին ընդհանրական են:

Ռեկտորի հետ ուսանողների հանդիպումները ըստ այցի ընթացքում ուսանողներից ստացված արձագանքի բավականին արդյունավետ են և մեծ ոգևորություն են առաջացրել ուսանողության շրջանում: Ուսանողները նշում էին, որ նրանց ձայնը այդ հանդիպումների միջոցով լսելի է դառել ղեկավարության կողմից, հանդիպումների ընթացքում բարձրաձայնված խնդիրներից շատերը լուծում են ստացել: Սակայն այս մեխանիզմը ԵՊԿ-ի

նոր ղեկավարության նախաձեռնությունն է, որևէ փաստաթղթով հաստատված չէ և հետևաբար պարբերական բնույթ կրող մեխանիզմ դեռ չի դառցել:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ինքնավերլուծության համաձայն 2019 թվականից դիմորդների համար Կոնսերվատորիայում մեկնարկել են նախապատրաստական դասընթացներ, որոնցում ներգրավված են նաև միջազգային դիմորդները:

ԵՊԿ-ում կատարողական մասնագիտություններով ուսուցումը իրականացվում է հիմնականում անհատական պարապմունքների միջոցով, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողին դասախոսի հետ անմիջական շփման միջոցով ստանալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն: Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները հաստատեցին այդ փաստը, նշելով՝ որ այդ դասընթացների ուղղությամբ լրացուցիչ խորհրդատվության կարիք չի առաջանում: Սակայն ոչ կատարողական մասնագիտությունների և տեսական ու հումանիտար դասընթացների սահմաններում լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տրամադրում Կոնսերվատորիան չի նախատեսում: Միջազգային ուսանողները մեծամասնությամբ ռուսաստանի քաղաքացիներ են և խնդիր այնքան էլ չունեն լեզվի հետ կապված, քանի որ, իրենց համար դասընթացները ռուսերենով են կազմակերպվում, սակայն խնդիրների առկայության մասին նշեց նույն կուրսում սովորող մերձավոր արևելքից եկած ազգությամբ հայ ուսանողը, ով ռուսերենի չի տիրապետում:

Այցի ընթացքում պարզվեց, որ կատարողական մասնագիտությունների յուրահատկություններից ելնելով, այդ մասնագիտությունների ուսանողները տան պայմաններում (ձայնամեկուսացման բացակայության հետևանքով) պարապել չեն կարող: Այդ խնդրի լուծման նպատակով ԵՊԿ-ն ուսանողներին հնարավորություն է ընդձեռում լրացուցիչ պարապմունքներ կազմակերպել Կոնսերվատորիայի լսարաններում: Լսարանները լրացուցիչ պարապմունքների համար հասանելի են առավոտյան ժամը 7^{00}-ից մինչև դասացուցակային դասերի սկիզբը և դրանց ավարտից հետո մինչև ժամը 23^{00}-ն: Շաբաթ կիրակի օրերին ուսանողները նույնպես ԵՊԿ-ում պարապելու հնարավորություն ունեն, սակայն դար համար նախապես թույլտվություն պետք է ստանալ ռեկտորից: Ուսումնական դասաժամերից դուրս լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու հետ կապված դժվարությունների մասին նշեցին միայն ցածր կուրսերի արտասահմանցի ուսանողները:

ԵՊԿ-ում իրականացնում է նաև «Կատարողական և ստեղծագործական բարձրագույն վարպետության» դասընթացը: Փորձագիտական խմբի հետ հանդիպմանը ներկա էին շրջանավարտներ, ովքեր մասնակցել էին դասընթացին և այն օգտակար էին համարում:

Ինքնավերլուծության համաձայն ԵՊԿ-ն մասնագիտական խորհրդատվական ծառայություններ են դիտարկում նաև հայաստանցի և օտարերկրյա հրավիրյալ երաժիշտների մասնակցությամբ վարպետության դասերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարպետության դասերը նախապես չեն պլանավորվում ՄՈՒՀ-ի կողմից, այլ իրականացվում են հնարավորության ընդձեռման պարագայում:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու առանձին հստակ կանոնակարգ ԵՊԿ-ում մշակված չէ, սակայն դրա փոխարեն Կոնսերվատորիայում ոչ ֆորմալ գործում է վարչական կազմի «բաց դռների» քաղաքականություն: ԵՊԿ-ի յուրաքանչյուր ուսանող ցանկացած պահի կարող է դիմել վարչական աշխատակազմի ցանկացած աշխատակցի ընթուպ մինչև ռեկտոր: Այցի ընթացքում սրա մասին փաստեցին նաև ուսանողները: Ուսանողները օժանդակության նպատակով հիմնականում դիմում են ամբիոնների վարիչներին և դեկաններին, իսկ միջազգային ուսանողների ուղղորդումը իրականացնում է միջազգային կապերի բաժինը: Ուսանողները ազատ դիմում են նաև ուսումնական մասին և պրոռեկտորներին: Սակայն այս գործընթացի վերաբերյալ Կոնսերվատորիան վիճակագրական տվյալներ չի հավաքագրում և նշել թե՝

- ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին,
- ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից և,
- ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից,

ԵՊԿ-ն չի կարող:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերային նպաստող հատուկ ինստիտուցիոնալ ծառայություններ ԵՊԿ-ում չեն գործում, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չէ մարմին, որը կզբաղվի ուսանողների հետագա աշխատանքի ընդունվելու հարցերով, Կոնսերվատորիան չունի շրջանավարտների բազա, որտեղ կլինեն տեղեկություններ, թե որտեղ են աշխատում իրենց շրջանավարտները, ինչ պաշտոն են զբաղեցնում նրանք և այլն: Այս աշխատանքները ներկայումս վստահվել են Միջազգային և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին և նրա բաժնին: Բաժնի միջոցով ԵՊԿ-ն փորձում է առավել լայն ծառայություններ մատուցել ոսանողներին, սովորեցնել՝ ինքնակենսագրություն (CV) լրացնելու, գործատուներին ներկայանալու, շուկան ուսումնասիրելու, կարիերան վարելու սկզբունքները և այլն: Սակայն այս գործընթացը կանոնակարգված չէ, բացակայում է այդ ուղղությամբ մատուցվող ծառայությունների պլան կամ ժամանակացույց, վիճակագրական տվյալներ (քանի ուսանող է ներգրավված եղել և այլն) և որքանով են ուսանողները բավարարված:

ԵՊԿ-ի կարիերային նպաստող ինստիտուցիոնալ ծառայությունների բացը որոշ չափով լրացվում է այն հանգամանքով, որ ԵՊԿ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մեջ ներառված են նաև գործատուներ, ովքեր հնարավորություն են ունենում իրենց աշխատակցին ընտրել անմիջապես ուսումնական գործընթացում, սակայն այս գործընթացը կանոնակարգված չէ:

ԵՊԿ-ն իր 2015թ. բարելավման պլանում, նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհդատվությունների հիման վրա, նախաձեռնել էր ստեղծել շրջանավարտների միություն, որը կիրականացներ նաև կարիերայի կենտրոնի գործառույթները, սակայն այդ

ուղղությամբ գործուն քայլերի մասին չի նշվել ոչ՝ ինքնավերլուծության մեջ, ո՛չ էլ այցի ընթացքում:

Միևնույն ժամանակ, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում գործում է կարիերայի կենտրոն, որը համագործակցելով տեղի դպրոցների և այլ կառույցների հետ, աշխատանքի հնարավորություններ է փորձում ստեղծել շրջանավարտների համար:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավմանը նպաստում է Ուսանողական գիտաստեղծագործական ընկերությունը, որը յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպում է գիտաժողովներ երաժշտագիտական և կատարողական բաժնի ուսանողների մասնակցությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների մեծ մասը այդ ընկերության գոյության մասին տեղեկացված չեն: Այցից պարզ դարձավ, որ գիտաժողովների ընթացքում ուսանողների լավագույն զեկուցումները տպագրվում են միայն «Երաժիշտ» թերթում, որը գիտական ամսագիր չէ: ԵՊԿ-ում հստակ ուղղվածություն և ֆինանսավորում ունեցող հետազոտություններն իրականացվում են ֆոկլորագիտության լաբորատորիայում, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ աշխատանքներում սակավ թվով ուսանողներ են ներգրավված:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՊԿ-ի ուսանողները ուսումնական պրոցեսում հաճախ գտնվում են հետազոտական գործընթացում, քանի որ ուսանողները ստեղծագործում են, համեմատում են տարբեր ստեղծագործություններ, փորձում են ստանալ այդ ստեղծագործությունների իրենց «տարբերակները» և այլն: Սակայն Կոնսերվատորիան դա որպես հետազոտություն չի դիտարկում: Արվեստի ոլորտում և մասնավորապես երաժշտության ուղղությամբ ուսանողական հետազոտությունների միջազգային փորձի ուսումնասիրություն չի կատարվել:

ԵՊԿ-ն հետազոտական և գիտահետազոտական գործընթացներում ուսանողների ներգրավվածության վերաբերյալ վիճակագրություն չի հավաքագրում:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵՊԿ-ի ինքնավերլուծության համաձայն ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմիններն են հանդիսանում՝ ուսանողական խորհուրդը և էթիկայի հանձնաժողովը:

ԵՊԿ-ի ուսանողական խորհուրդի ներկայացուցիչները ընդգրկված են Կոնսերվատորիայի կառավարման և գիտական խորհուրդներում և ռեկտորատում և ուսանողների շահերն են պաշտպանում կառավարման այդ մարմիններում: Կարևոր է նշել, որ ռեկտորի փոփոխության արդյունքում ուսանողական խորհուրդը վերակազմակերպվել է և ուսանողական խորհրդի նոր կազմ է ձևավորվել 2019 թվականի հոկտեմբերից: Ներկայումս ուսանողական խորհրդի և նրա առանձին ենթաբաժինների կազմում ընդգրկված է 40 ուսանող: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ նախկինում ուսանողական խորհրդի կուսակցականացվածության հետևանքով այն հիմնականում լավ համբավ չի վայելում

ուսանողության շրջանում: Ուսանողական խորհրդի նոր կազմը ակտիվ գործողություններ է ծավալում ուսանողական խորհրդի համբավի բարձրացման ուղղությամբ:

ԵՊԿ-ի էթիկայի հանձնաժողովը գործում է 2019 թվականի փետրվարից: Մշակված է էթիկայի մշտական հանձնաժողովի աշխատակարգ: Էթիկայի հանձնաժողովի ուղղություններից է ուսանող-դասախոս, դասախոս-դասախոս, ուսանող-ուսանող միջանձնային կոնֆլիկտների արդյունքում առաջացող իրավունքների խախտման դեպքերի քննումը և պաշտպանությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հանձնաժողովի գործառույթների մասին ուսանողները տեղեկացված են, ուսանողները նշեցին նաև, որ գիտեն էթիկայի հանձնաժողովի կողմից ուսանող-դասախոս կոնֆլիկտի մեկ դեպքի քննման մասին:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն ԵՊԿ-ի որակի ներքին ապահովման բաժինը հարցումների միջոցով ուսումնասիրություն է իրականացնում ուսանողների կրթական և այլ խնդիրների վերհանման, ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով: Հարցումները հնարավորություն են ընձեռում ուսանողին գնահատել վարչական կազմի, ֆակուլտետների և ամբիոնների, ուսումնաօժանդակ անձնակազմի և այլ ենթակառուցվածքների աշխատանքները, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրերի, դասընթացների վարման կարգերը, գործող գնահատման համակարգի և դասախոսների իրականացրած աշխատանքները:

Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ տեղեկատվությունը գնահատելու նպատակով ուսանողների շրջանում կիրառվում է ընհամենը մեկ ընդհանուր հարցաթերթ, որը բնականաբար շատ մակերեսային է անդրադառնում բոլոր նշված խնդիրներին: Ընդորում, վերջին չորս տարիների ընթացքում հարցումները իրականացվել են ընդամենը երկու նագամ՝ 2017 և 2019 թվականներին: Որոշակի հետազոտություն իրականացվել է նաև 2018 թվականին, սակայն ոչ հարցումների միջոցով: Ուսանողները պարզապես արաջարկվել է ներկայացնել իրենց առաջարկները Կոնսերվատորիայի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով: Վերոնշյալ ուսումնասիրությունների վերլուծությունները ԵՊԿ-ի ղեկավարության կողմից չեն քննարկվել:

Դատողություն

ԵՊԿ-ն իրականացնում է դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված մի շարք գործողություններ, սակայն դրանք համակարգված բնույթ չեն կրում և դրանց արդյունավետությունը գնահատված չէ: Կոնսերվատորիայի ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են համաձայն ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Սակայն այդ կարգը ԵՊԿ-ի ներբուհական մասնագիտական քննությունների անցկացման ընթացակարգը չի ներառում: Նույն իրավիճակն է նաև մագիստրոսական կրթական ծրագրերի ընդունելության տիրույթում: Ընդունելության ներքին կարգերի բացակայությունը վտանգում է ընդունելության գործընթացի համարժեքությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Միևնույն ժամանակ

բակալավրեատի մասնագիտական առարկաների ընդունելության քննական չափանիշները մշակվում են ԵՊԿ համապատասխան ամբիոնների կողմից: Իսկ 2019-2020 ուսումնական տարվա բակալավրեատի ընդունելության քննությունների ժամանակ թափանցիկության ապահովման նոր մեխանիզմներ են ներդրվել: Սակայն այդ բոլորը փաստաթղթավորման և հստակեցման կարիք ունի, ինչը կխոչընդոտի գործընթացի ժամանակ հավանական ընթացակարգային խնդիրների առաջացմանը և կնպաստի գործընթացի արդյունավետության մեծացմանը, ինչպես նաև կարող է հիմք հանդիսանալ որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակման և ներդրման համար:

ԵՊԿ-ում գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ, որոնք սակայն արդյունավետ չեն և բարելավման ու փաստաթղթավորման կարիք ունեն: Մասնավորապես կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների և Կոնսերվատորիայի ուսանողական համայնքի կապը չի ապահովվում, արդյունքում կառավարման մարմիններում ներգրավված ուսանողները կարող են բարձրաձայնել միայն սեփական կարիքները և ուսանողական համայնքը չեն ներկայացնում:

ԵՊԿ-ի մասնագիտական յուրահատկություններով պայմանավորված իր ուսանողներին շաբաթվա բոլոր օրերին ժամը 7^{00}-ից մինչև 23^{00}-ն հնարավորություն է ընձեռում Կոնսերվատորիայում լրացուցիչ պարապմունքներ անցկացնել, ինչը բավականին արդյունավետ է: Ուսումնական դասաժամերից դուրս լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու հետ կապված դժվարությունների մասին նշեցին միայն ցածր կուրսերի արտասահմանցի ուսանողները, ինը իրականում կապված է նրանց ներառվածությաքն ցածր մակարդակի հետ:

Ուսանողների համար վարչական աշխատակազմի հասանելիությունը ապահովվում է ոչ ֆորմալ գործող «բաց դռների» քաղաքականությամբ, որի արդյունքում ցածկացած ուսանող խնդիրների առաջացման դեպքում մշտապես կարող է դիմել ցանկացած վարչական աշխատակցի: Հաշվի առնելով Կոնսերվատորիայի ուսանողների փոքր թվաքանակը ԵՊԿ-ում այս մոտեցումը բավականին արդյունավետ է գործում:

ԵՊԿ-ում կարիերայի կենտրոն չի գործում, ինչը բացասական է ազդում շրջանավարտների զբաղվածության հնարավորությունների վրա: Պոտենցիալ գործատուների շրջանում շրջանավարտների վերաբերյալ և շրջանավարտներին նոր բացված կամ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մեծապես կնպաստեր շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացմանը և Կոնսերվատորիա-գործատու կապերի ամրապնդմանը: Ուսանողների շրջանում ինքնակենսագրություն (CV) լրացնելու, գործատուներին ներկայանալու, շուկան ուսումնասիրելու ուղղությամբ ծառայություններ մատուցելու միջոցով կարիերայի կենտրոնի գործառույթները որոշ չափով փորձում է իրականացնել միջազգային կապերի բաժինը, ինչը սակայն դրա գործառույթների մեջ չի մտնում և հստակ պլանավորված չէ: Դա նաև լրացուցիչ ծանրաբեռնվածություն է և կարող է խոչընդոտել բաժնի սահմանված գործառույթների իրականացմանը:

ԵՊԿ-ում հետազոտական և գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման, ինչպես նաև ուսումնական գործընթացի և հետազոտությունների փոխկապակցման քաղաքականություն և մեխանիզմներ չեն գործում: Այնուամենայնիվ, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվող հետազոտություններում ուսանողների ներգրավվածության դեպքեր առկա են: Հետազոտական աշխատանքներում

ուսանողների ներգրավման և ուսումնական գործընթացի և հետազոտությունների փոխկապակցման քաղաքականության և մեխանիզմների մշակմանը և ներդրմանը մեծապես կնպաստի Եվրոպայի երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետազոտական գործունեության փորձի ուսումնասիրությունը:

Ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմիններն են հանդիսանում՝ ուսանողական խորհուրդը և էթիկայի հանձնաժողովը: Միևնույն ժամանակ, ուսանողական խորհրդի համբավը ուսանողության շրջանում բացասական է: Ուսանողական խորհրդի նոր կազմը ակտիվ գործողություններ է ծավալում ուսանողական խորհրդի համբավի բարձրացման ուղղությամբ, սակայն դրանք դեռ զգալի արդյունքների չեն բերել: Իսկ էթիկայի հանձնաժողովի շուրջ մեկ տարվա գործունեությունը ուսանողության կողմից բավականին դրական է գնահատվում:

ԵՊԿ-ում որոշակի ուսումնասիրություն է իրականացնում ուսանողների կրթական և այլ խնդիրների վերհանման, ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման ուղղություններով: Սակայն ուսումնասիրությունների պարբերականությունը սահմանված չէ, կիրառվող մեխանիզմները և գործիքակազմը անհրաժեշտ խորության ուսումնասիրություններ ապահովել չեն կարող: Ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները լիարժեք չեն և իրենց նպատակներին չեն ծառայում:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր ստեղծելու նպատակով ԵՊԿ-ն գործողություններ է ծավալում՝ ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման, ուսանողներին լրացուցիչ պարապմունքներ հնարավորության ընձեռնման, ինչպես նաև ուսանողների իրավունքների պաշտպանության և ուսանողներին անհրաժեշտ աջակցության տրամադրման ուղղությամբ փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան չափանիշ 4-ի պահանջները բավարարում է :

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊԿ-ի Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը հիմնված է 2010 թվականին հաստատված «Պրոֆեսորադասախասական կազմի ձևավորման կանոնակարգ»-ի և 2012 թվականին հաստատված «Աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու կարգապահական տույժի ենթարկման ընթացակարգ»-ի վրա:
«Պրոֆեսորադասախասական կազմի ձևավորման կանոնակարգ»-ում նկարագրված են պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերի պաշտոններում տեղակալման և առաջքաշման չափանիշները, տարակարգերի բնութագրերը, ինչպես նաև նկարագրված են մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգերը: Սակայն, ինչպես պարզվեց այցի ժամանակ հանդիպումներից, փաստացի հայտարարված մրցույթները կրել են ձևական բնույթ նախկինում և հիմնականում ՊԴ կազմը վերընտրվել է իր պաշտոնում: ԵՊԿ-ն այս խնդիրը հաղթահարելու համար արդեն իսկ որդեգրել է նոր քաղաքականություն. հայտարարվել են նոր մրցույթներ 2019թ. դեկտեմբերից՝ ընդհանուր թվով մոտ 100 տեղի համար: Այս նոր քաղաքականությունը հետապնդում է նպատակ հաղթահարել նախկինում գործող ավանդույթը և ներգրավել նոր կադրեր: Միևնույն ժամանակ գործող կարգերը չեն գնահատվել և վերանայվել, նոր քաղաքականություն չի սահմանվել և լայն քննարկումներ չի անցել նախքան մրցույթը:

ԵՊԿ-ն իրականացնում է կրթական գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման քաղաքականություն, քանի որ ՊԴ կազմի միջին տարիքը բավականին բարձր է՝ 57 տարեկան: Նոր կադրերը համալրվում են հիմնականում ԵՊԿ-ի շրջանավարտներից: Սակայն միևնույն ժամանակ չկա փաստացի ՊԴ կազմի պլանավորման քաղաքականություն, ինչի անհրաժեշտությունը զգացվում է, քանի որ բավականին մեծ է ՊԴ կազմի թվականակը ուսանողների թվի համեմատ. ուսանող/դասախոս հարաբերակցության հաշվարկը ցույց տվեց, որ այն կազմում է 1/2:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմնվելով ԵՊԿ-ի ինքնավերլուծության և դրան կից ներկայացված տվյալների պետք է նշել, որ կրթական ծրագրերը մեծամասամբ սպասարկում են համապատասխան որակավորումներ, գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսներ և ոլորտի վաստակաշատ մասնագետներ: Համաձայն Կոնսերվատորիայի ներկայացված տվյալների դասախոսներից 6–ն ունեն գիտությունների դոկտորի, 35-ը՝ գիտությունների թեկնածուի աստիճան, 79-ը՝ ԽՍՀՄ Ժողովրդական արտիստի, ՀԽՍՀ և ՀՀ Ժողովրդական արտիստի և ՀԽՍՀ և ՀՀ Վաստակավոր արտիստի, Արվեստի վաստակավոր գործչի և Մշակույթի վաստակավոր գործչի կոչումներ: 140 աշխատակից արժանացել են ՀՀ պետական պարգևների և շքանշանների, ՀՀ վարչապետի պատվոգրերի, ՀՀ Մշակույթի նախարարության շքանշանների և պատվոգրերի: Դասախոսներից 110-ը միջազգային մրցույթների դափնեկիր են:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ համապատասխան ամբիոններում մշակվում են մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները: Սակայն, այցի ժամանակ

առկա չէին համապատասխան հիմքեր, որոնք կվկայեին այդ գործընթացի ինստիտուցիոնալիզացման մասին: Ըստ կրթական ծրագրերի՝ ՊԴ կազմին մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջների առկայությունը կնպաստի ՊԴ կազմի պլանավորման և հավաքագրման իրականացման արդյունավետությանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա մասնագիտական վերապատրաստման արդյունավետ գործընթացի կազմակերպման համար:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Ինքնավերլուծությունից և այցի ժամանակ հանդիպումներից պարզ դարձավ, որ ԵՊԿ-ում իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում, որոնք ուղղված են գնահատելու դասավանդման հմտությունները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետությունը: Սակայն այդ հարցումները իրականացվում են միայն ընդհանուր մասնագիտական դասընթացների շրջանակներում, իսկ «մասնագիտական դասարաններում» ուսանողների կողմից դասախոսների գնահատում չի իրականացվում: Ըստ Կոնսերվատորիայի ներկայացուցիչների այդպիսի հարցումները արդյունավետ չեն, քանի որ դասախոս-ուսանող անմիջական շփումը, մի կողմից դժվարեցնում է ուսանողի համար դասախոսի գնահատումը, իսկ մյուս կողմից՝ այդպիսի աշխատանքի ընթացքում դասախոսը ամիջապես տեղեկանում է ուսանողի կարծիքին: Միևնույն ժամանակ այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ այդ հարցումները ընդհանրական են և չեն կրում պարբերական բնույթ: Առկա չեն համապատասխան հիմքեր, որոնք թույլ կտան փորձագիտական խմբին հասկանալ, թե ինչպես են վերլուծվում, ինչ եզրակացություններ են արվում և ինչպես են օգտագործվում հարցումների արդյունքները, օրինակ՝ ՊԴ կազմի գնահատման, խրախուսման և առաջխաղացման համար: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խումբը խորհրդատվություն էր տվել արդյունավետ դարձնել ուսանողական հարցումները՝ արդյունքների կիրառման տեսանկյունից:

Բացի հարցումներից այլ միջոցառումներ ուղղակիորեն չեն իրականացվում ՊԴ կազմի գնահատման քաղաքականության տեսանկյունից: Դասախոսների կողմից ուսանողական համերգների կազմակերպումը, նրանց կատարողական և գիտահետազոտական գործունեության կարևորումը Կոնսերվատորիայի կողմից կարելի է համարել որպես դասախոսական կազմի գնահատման անուղղակի մեխանիզմ:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ իրականացվում են հետևյալ միջոցառումներ ուղղված դասախոսների կատարելագործմանը. վարպետության դասերի կազմակերպումը և անցկացումը՝ ԵՊԿ-ի ներուժի և արտասահմանյան առաջատար երաժիշտ-մասնագետների մասնակցությամբ, համերգների, փառատոնների, գիտաժողովների մասնակիցներին ստեղծագործական արձակուրդի տրամադրումը: Միևնույն ժամանակ, հիմնվելով ինքնավերլուծության մեջ ներկայացված տվյալների և այցի ժամանակ հնչեցրած կարծիքների վրա, կարելի է փաստել, որ ԵՊԿ-ն չունի համակարգված մոտեցում ՊԴ կազմի

մասնագիտական կատարելագործման ծրագրի իրականացման հարցում, որը կհիմնվեր բացահայտված կարիքների վրա: Այցի ժամանակ հանդիպումներից պարզ դարձավ, որ ներքին շահակիցներից շատերը նշում էին արտերկրում վերապատրաստման անհրաժեշտության մասին՝ հասկանալով միևնույն ժամանակ, որ Կոնսերվատորիան չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ աջակցելու նրանց այդ հարցում:

Այս կապակցությամբ պետք է հիշատակել, որ նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խումբը տվել էր հետևյալ խորհրդատվությունը. «անհրաժեշտ է ունենալ մասնագիտական զարգացման քաղաքականություն, կազմակերպել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ հատկապես մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ»: ԵՊԿ-ն հաշվի էր առել այս խորհրդատվությունը և 2015թ. իր բարելավման պլանում ամրագրել էր որպես գործողություն անձնակազմի վերապատրաստման ծրագրի մշակումը: Սակայն, փաստացի այդպիսի ծրագիր չի մշակվել և չի իրականացվել Կոնսերվատորիայի կողմից:

5.5 ՄՈՒՀ-ն երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ԵՊԿ-ի ՊԴ կազմի կայունության երաշխիքն է առաջին հերթին մինչև 5 տարի կնքվող պայմանագրերը հիմնական աշխատողների հետ: Մյուս կողմից, ՀՀ-ում այլ բարձրագույն երաժշտական կրթօջախի բացակայության փաստը ևս լրացուցիչ արտաքին գործոն է ՊԴ կազմի կայունության համար:

Դիտարկելով փորձագիտական խմբին ներկայացված փաստերը կարելի է ասել, որ ԵՊԿ-ն չունի կադրերի հոսունության խնդիր, հակառակը, ՊԴ կազմի թվաքանակը բավականին մեծ է ուսանողների թվի համեմատ: Ինքնավերլուծության մեջ ներկայացված տվյալների համաձայն հիմնական աշխատակիցները կազմում են 89%: Ըստ Կոնսերվատորիայի մեկնաբանության, ՊԴ կազմի այդպիսի մեծ թվաքանակը պայմանավորված է մասնագիտական դասարանների շրջանակներում անհատական պարապմունքների առկայությամբ:

Ըստ ինքնավերլուծության ԵՊԿ-ն իրականացնում է կրթական գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման քաղաքականություն, սակայն առայժմ տեսանելի արդյունքներ չեն արձանագրվում: 2019 թվականի փետրվարից 30%-ով բարձրացվել է ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը, ինչը կարող է գրավիչ գործոն լինել երիտասարդ կադրերի համար:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊԿ–ն ունի 2012 թվականին հաստատված «Աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու կարգապահական տույժի ենթարկման ընթացակարգ», որի համաձայն աշխատակիցները ներկայացվում են առաջխաղացման կարգապահական տույժեր չունենալու և մասնագիտական պարտականությունները պատշաճ որակով կատարելու դեպքում: Սակայն, առկա չեն տվյալներ, համեմատական վերլուծություններ, թե վերջին 5 տարիների ընթացքում փաստացի ինչ պատկեր է գրանցվում ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի վերաբերյալ: Մասնավորապես, առկա չեն

տվյալներ հասկանալու համար, թե ինչպես է աճել գիտական կոչում (դոցենտ, պրոֆեսոր) ունեցող դասախոսների քանակը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ ամբիոններում մեկ պաշտոնից մյուսին անցնելը հիմնականում փոխկապակցված է գիտական կոչումներ ստանալու հետ:

Հիմնվելով նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվությունների վրա՝ ԵՊԿ-ն 2015 թվականի իր բարելավման պլանում որպես գործողություն նշում է հետևյալը. «վերամշակել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգը»: Սակայն, փաստացի այս ուղղությամբ պլանավորված աշխատանքներ չեն իրականացվել: Թերևս պետք է փաստել, որ 2019 թվականի փետրվարից 30%-ով բարձրացվել է ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը:

Միևնույն ժամանակ կարելի է փաստել, որ ԵՊԿ-ն դասախոսներին մասնագիտական աճի հնարավորություններ է ընձեռում: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ կատարողական արվեստի դասախոսներին տրվում է հնարավորություն մենահամերգներ ունենալու, համերգներ և վարպետության դասեր կազմակերպելու ԵՊԿ դահլիճներում և լսարաններում անվճար, իսկ գիտական հետազոտություններով զբաղվող դասախոսներին հնարավորություն է տրվում անվճար հիմունքներով տպագրվել «Երաժշտական Հայաստան» գիտական հոդվածների պարբերականում, գիտամեթոդական և ուսումնամեթոդական ժողովածուներում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵՊԿ-ն ունի մասնագիտական պատրաստվածություն ունեցող վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, որը պատրաստակամ է և գործին նվիրված: Ուշագրավ է այն փաստը, որ ուսումնաօժանդակ կազմի բոլոր 11 անդամները ունեն պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում և բավականին մեծ, միջինում մոտավորապես 35 տարվա աշխատանքային ստաժ, իսկ ուսումնաօժանդակ կազմի միջին տարիքը՝ 64 է, ինչը վկայում է այն մասին, որ ուսումնաօժանդակ կազմի երիտասարդացում չի իրականացվում: Միևնույն ժամանակ վերջին տարիներին ընդգրկվել են ոլորտի երիտասարդ նորարարական մտածողությամբ մասնագետներ՝ օրինակ, օպերային ստուդիայի, ակուստիկ լաբորատորիայի ղեկավարները:

Հիմքեր չկան փաստելու համար, որ իրականացվել է վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանում: Իրականացված չէ նաև վերոնշյալ կազմերի կատարողականների գնահատում:

Դատողություն

ԵՊԿ-ն ունի համապատասխան կարգեր և ընթացակարգեր ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության և համալրման համար: Սակայն, այս մեխանիզմները գործել են ավանդական ֆորմալ ձևով. մրցույթները հայտարարվել են արդեն հայտնի թեկնածուների համար և փաստացի, կարելի է ասել, որ չի իրականացվել ընտրություն: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՊԿ-ի նոր ղեկավարության ջանքերը իրավիճակը փոխելու ուղղությամբ:

Հիմնականում, ԵՊԿ-ի ՊԴ կազմի համալրումը և երիտասարդացումը իրականացվում է ԵՊԿ-ի շրջանավարտներով: Այս հանգամանքը կարելի է գնահատել երկակի՝ դրական և բացասական առումներով: Մի կողմից, պահպանվում է կոնսերվատորիայում ձևավորված մասնագիտական ավանդույթը, սակայն, մյուս կողմից, կոնսերվատորիան դառնում է կարծես փակ համակարգ, այնինչ նոր փորձը կարող էր օգտակար լինել նորարարական զարգացումների առումով: Միևնույն ժամանակ, կարելի է ասել, որ ԵՊԿ-ի նոր ղեկավարությունը ընդունելի է համարում ՊԴ կազմի համալրումը այլ հաստատություններից դիմող մասնագետներով, ինչի մասին են վկայում հայտարարված մրցույթները: Սակայն փակ շրջան է ստացվում, քանի որ կոնսերվատորիան միակ բարձրագույն Կոնսերվատորիան է ՀՀ-ում, հետևաբար բարձրագույն կրթություն ունեցող երաժիշտ մասնագետների հիմնականում կոնսերվատորիայի շրջանավարտներն են: Լուծումներից մեկը կարող է դառնալ արտերկրում ուսանած մասնագետների ներգրավումը եթե ոչ հիմնական, ապա համատեղության հիմքունքներով:

ԵՊԿ-ում աշխատում են վաստակաշատ երաժիշտ մասնագետներ, որոնց զգալի մասը արվեստի վաստակավոր գործիչներ և միջազգային մրցույթների դափնեկիրներ են : Փորձագիտական խումբը տպավորված էր այդպիսի մասնգետների առկայությամբ: Միևնույն ժամանակ ԵՊԿ-ն չունի սահմանված մասնագիտական պահանջներ ՊԴ կազմի համար: ԵՊԿ-ում ներդրված չէ նաև ՊԴ կազմի գնահատման համակարգը, ինչը լուրջ բացթողում է: Գնահատման համակարգը հնարավորություն կտար օբյեկտիվացնելու ՊԴ կազմի մասնագիտական աճի պատկերը, միևնույն ժամանակ ԵՊԿ-ն կֆորմալիզացներ ՊԴ կազմի նկատմամբ իր պահանջները: Սա կարևոր մեխանիզմ է ՊԴ կազմի ընտրության քաղաքականության ապահովման, մասնագիտական առաջխաղացման և խրախուսման մեխանիզմների գործադրման տեսանկյունից:

ԵՊԿ-ն կարևորում է մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը, սակայն այս ուղղությամբ հատկացվող ռեսուրսները և կատարված աշխատանքները բավարար չեն: ԵՊԿ-ում ներդրված չէ նաև մասնագիտական զարգացման և վերապատրաստման համակարգված ծրագիր: Հիմնականում մասնագիտական զարգացման միջոցառումները իրականացվում են վարպետաց դասերի կամ արտերկրից մասնագետների հետ հանդիպումների միջոցով, որոնք իրականացվում են դասախոսական կազմի սեփական նախաձեռնության և կապերի շնորհիվ: Այդ միջոցառումները որպես այդպիսին հիմնված չեն ՊԴ կազմի կարիքների գնահատման, կատարված վերլուծությունների հիման վրա և չեն բխում ՌԾ-ից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԿ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի պլանավորման, հավաքագրման, ընտրության մեխանիզմների արդյունավետությունը բավարար վերլուծված և գնահատված չեն Կոնսերվատորիայի ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման տեսակետից:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ ԵՊԿ-ն ապահովված է համապատասխան որակավորումներ և մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով: ՊԴ կազմի բարձր մասնագիտական որակի մասին են վկայում դասախոսների բազմաթիվ համերգներն ու իրականացված վարպետության դասերը ՀՀ-ում և արտերկրում: Նրանցից շատերը միջազգային ճանաչում ունեցող արվեստի գործիչներ են: Միևնույն ժամանակ, մարդկային ռեսուրսների կառավարման լուրջ քայլերի անհրաժեշտություն է զգացվում ԵՊԿ-ում՝

պահպանելու և զարգացնելու ՊԴ կազմի մասնագիտական պատրաստվածությունը առկա կադրերի արտահոսքի պայմաններում և ժամանակակից մարտահրավերներին համապատասխան:

Եզրահանգում

ԵՊԿ-ն ունի ՊԴ կազմի ընտրության և համալրման ընդհանուր առմամբ բավարար գործող քաղաքականություն, սակայն ԵՊԿ-ում թերի է ՊԴ կազմի գնահատման, առաջխաղացման և խրախուսման քաղաքականության իրագործումը, մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականությունը: Միևնույն ժամանակ ԵՊԿ-ն ապահովված է համապատասխան որակավորումներ և մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԿ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԵՊԿ-ի հետազոտական գործունեության հավակնությունները և հետաքրքրությունները սահմանված են 2012-2017թթ. և 2019-2024թթ. ՌԾ-ներում, այն է՝ բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն: Մասնավորապես, ԵՊԿ-ն կարևորում է որպես խնդիրներ հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածությունն ապահովելու համար նախադրյալների ստեղծումը և գիտություն – դասավանդում – ուսումնառություն փոխկապակցության խթանումը: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ԵՊԿ-ի ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն ապահովվում է գիտական խորհրդի կողմից հաստատված գիտական ոլորտի զարգացման ռազմավարությամբ: Միևնույն ժամանակ փաստաթղթերում առկա չէր հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված առանձին ռազմավարական ծրագիր: Ինքնավերլուծությունից և հանդիպումներից ոլորտի պատասխանատուների հետ հստակ էր այն, որ Կոնսերվատորիան հետազոտական գործունեությունը կապում էր երաժշտագիտության ոլորտի հետ: Սակայն, հստակ չէր, թե ինչպես է Կոնսերվատորիան նախատեսում իրականացնել երաժշտական արվեստի ոլորտում կիրառական բնույթի հետազոտությունների զարգացումը: ՊԴ կազմի հետազոտությունների թեմաները կախված են տվյալ դասախոսի հետաքրքրությունից, միմյանց միջև փոխկապակցված չեն և միտված չեն

Կոնսերվատորիայի կողմից սահմանված կոնկրետ գիտական ուղղություններով առկա խնդիրների լուծմանը

Գիտահետազոտական գործունեության զարգացմանն ուղղված ֆինանսական հատկացումները գրեթե չկան ըստ բյուջեի: Սակայն, ինքնավերլուծությունից պարզ է դառնում, որ ԵՊԿ-ն որոշ ֆինանսական միջոցներ է հատկացնում գիտաժողովների, պարբերականների և ուսումնամեթոդական ժողովածուների հրատարակման համար:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում ԵՊԿ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարությունը սահմանված է ՌԾ-ում: Սակայն ՌԾ-ի երկրորդ խնդրում՝ բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն, չեն երևում Կոնսերվատորիայի հիմնական առաջնահերթությունները գիտական ուսումնասիրությունների ուղղությունների առումով: Թեպետ ինքնավերլուծության մեջ նշվում է, որ գիտահետազոտական գործունեությունը իրականացվում է հիմնականում «Երաժշտագիտություն» մասնագիտության շրջանակներում հետևյալ ուղղություններով՝ տեսություն, պատմություն, ֆոլկլորագիտություն, միջնադարագիտություն, ժամանակակից տեխնոլոգիաներ: Այս առումով, հստակ չէ, թե ինչպես են պլանավորվել և պլանավորվում վերոնշյալ ուղղություններով ուսումնասիրությունները, ելնելով ՌԾ-ի երկրորդ նպատակից:

Հարկ է նշել նաև, որ ամբիոնային հետազոտական ուղղությունները սահմանված չեն, բացառությամբ որոշ ամբիոների (օրինակ՝ Երաժշտական ֆոլկլորագիտության, Երաժշտության տեսության, Երաժշտության պատմության ամբիոնների), որոնք սպասարկում են «Երաժշտագիտություն» մասնագիտությունը: Սակայն, այս դեպքերում ևս հետազոտությունները հիմնականում իրականացվում են առանձին դասախոսների նախաձեռնությունների շրջանակներում: ԵՊԿ-ում գործում է Ֆոլկլորագիտության ամբիոնին կից «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» բազային լաբորատորիան: Առանձին դեպքերում պրոֆեսորադասախոսական կազմի անդամները ներգրավված են ամբիոնների և գիտական լաբորատորիայի մակարդակով իրականացվող հետազոտական թեմաների խմբերում: Այս իմաստով, որպես ՄՈՒՀ-ի կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր կարելի է դիտարկել առանձին դասախոսների գիտական գործունեությունը: Սակայն, այս պարագայում հստակ չէ ամբիոնների գիտական գործունեության պլանավորման գործընթացը ըստ ՌԾ-ի երկրորդ նպատակի:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Ինքնավերլուծությունից և հանդիպումներից փորձագիտական խումբը փաստում է, որ ԵՊԿ-ն չունի հստակ ձևակերպված քաղաքականություն և ընթացակարգեր գիտական գործունեության իրականացման և զարգացման համար: Այնուամենայնիվ, Կոնսերվատորիան ստեղծել է որոշ հնարավորություններ դասախոսների և ուսանողների գիտական գործունեության մեջ ներգրավվման համար: Օրինակ, ԵՊԿ-ում հրատարակվում է «Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականը, որը ներառված է ԲՈԿ-ի կողմից

ընդունված պարբերականների ցանկի մեջ: ԵՊԿ-ն նպատակ ունի նաև վերահրատարակել Բանբեր ուսումնամեթոդական հոդվածների ժողովածուն, որը տպագրվել է նախկինում: Այս պարբերականներում տպագրվում են ԵՊԿ-ի և՛ վաստակաշատ, և՛ երիտասարդ դասախոսների և ասպիրանտների հոդվածները ևս: ԵՊԿ–ում գործում է հրատարակչական-խմբագրական բաժին: ԵՊԿ-ի հրատարակչությունն ունի գիտական խորհուրդ, որը գրախոսում է և գնահատում է տպագրվող հոդվածները և աշխատանքները: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, որպես ուսումնական գործընթացի հաշվետու միջոցառում ԵՊԿ–ում կազմակերպվում է հանրապետական ուսանողական գիտաժողով, որին ԵՊԿ–ի երաժշտագիտական բաժնի ուսանողների մասնակցությունը պարտադիր է: Կազմակերպվում են նաև ամենամյան ներբուհական ուսումնամեթոդական գիտաժողովներ:

ԵՊԿ–ի հայ ֆոլկլորագիտության ամբիոնի հիմքի վրա գործում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» գիտական լաբորատորիան (Գիտության կոմիտեի բազային ֆինանսավորմամբ): Լաբորատորիան զբաղված է հավաքչական, վերծանման, հրատարակման, հավաքված բնօրինակների և գրառումների բազայի համալրմամբ: Լաբորատորիան ներկայացնում է տարեկան հաշվետվություններ, սակայն հաշվետվություններում ներկայացված են առանձին գիտաշխատողների կատարողականները, տպագրված աշխատանքները տարվա կտրվածքով, հաշվետվությունները չեն կրում վերլուծական բնույթ: Առկա չեն նաև առանձին դասախոսների և լաբորատորիայի կատարողականի արդյունավետության գնահատման հիմքեր:

2018-2019թթ-ին. մեկնարկել է Միջդիսցիպլինար առարկաների ծրագիրը, որը, ըստ կազմակերպիչների, հնարավորություն կստեղծի երաժիշտներին զբաղվել հետազոտական աշխատանքով: Ծրագրի շրջանակներում հրավիրվում են հարակից մասնագիտությունների ներկայացուցիչներ, որոնց հետ հանդիպումները բացահայտում են տվյալ մասնագիտության հնարավորություններն և շփման եզրերը երաժշտության հետ: Միևնույն ժամանակ ինքնավերլուծության մեջ նշված չէր, թե ինչպես են պլանավորվում հանդիպումները, կոնկրետ ինչ արդյունքներ է տվել այս ծրագիրը տարվա կտրվածքով և ինչ գիտական նախագծեր են մշակվել վերոնշյալ ծրագրի շրջանակներում:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԵՊԿ-ն փաստացի չունի առանձին հետազոտական գործունեության վերաբերյալ միջազգայնացման քաղաքականություն, թեպետ նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խումբը խորհրդատվություն էր տվել՝ քայլեր ձեռնարկել հետազոտական աշխատանքների արդյունքների միջազգայնացման ուղղությամբ: 2019-2024 թվականների ՌԾ-ի՝ բարձրորակ հետազոտություններ և նորարարություն նպատակից բխող գործողությունների մեջ թեև նշվում է երկու կետ գիտական գործունեության միջազգայնացման վերաբերյալ, մասնավորապես, որ Կոնսերվատորիան պլանավորում է աջակցել մասնագետներին և ուսանողներին միջազգային գիտական նախագծերի մեջ ներգրավման հարցում, ինչպես նաև հետազոտությունները գնահատել ըստ միջազգայնորեն ընդունված չափանիշների:

ՊԴ կազմը հիմնականում տպագրվում է տեղական պարբերականներում: Ինքնավերլուծության մեջ և կից փաստաթղթերում առկա չէ որևէ վիճակագրություն, որը

կվկայեր ՊԴ կազմի կողմից տպագրված աշխատանքների մասին արտերկրի ամսագրերում կամ մասնակցության մասին միջազգային գիտաժողովներին, աշխատաժողովներին:

ԵՊԿ-ում տպագրվող «Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականը հիմնականում հայերենով է լույս տեսնում (որոշ դեպքերում նաև ռուսերեն) և չի ապահովում ԵՊԿ-ի գիտական արդյունքների միջազգայնացումը: Միուս կողմից գրադարանը միջազգային գիտական ամսագրերի և այլ գիտական պարբերականների հասանելիություն չի ապահովում, որը լուրջ խոչընդոտ է միջազգայնացմանը:

ԵՊԿ-ն չի իրականացնում միջազգային համագործակցության շրջանակներում որևէ գիտահետազոտական նախագիծ: Բացակայում են նաև գիտական գործունեության գնահատման մեխանիզմներ:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմնվելով ինքնավերլուծության վրա՝ փորձագիտական խումբը փաստում է, որ հետազոտական բաղադրիչը ուսումնական գործընթացում կապված է հիմնականում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման հետ: Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաներն առաջադրվում են՝ հիմնականում հաշվի առնելով ամբիոնի դասախոսների գիտահետազոտական աշխատանքների ուղղվածությունը: Ընդ որում, երաժշտագիտություն և կոմպոզիցիա մասնագիտությունների թողարկող ամբիոնների պարագայում առկա էր «մագիստրոսական թեզի չափանիշներ» փաստաթուղթը, որտեղ նշված էին թեզի բովանդակության և ծավալի, գրագողության և հրապարակային պաշտպանությանը վերաբերող դրույթներ: Պատահական սկզբունքով ընտրած տարբեր մասնագիտությունների ավարտական և մագիստրոսական թեզերի ուսումնասիրումը ցույց տվեց, որ գիտահետազոտական աշխատանքների չափանիշներին են համապատասխանում հատկապես «երաժշտագիտություն» մասնագիտության աշխատանքները: Մնացած մասնագիտություններով դիտարկված աշխատանքները ունեին ռեֆերատիվ, և ոչ ինքնուրույն վերլուծական բնույթ և տարբերվում էին միմյանցից ծավալի, բովանդակության և այլ չափանիշներով:

ՄԿԾ-ների կառուցվածքի և բովանդակության ուսումնասիրություններից երևում է, որ քիչ են հետազոտական հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացները: Մագիստրոսական ծրագրում ներառված է "Գիտական ուսումնասիրության հիմունքներ" առարկան: Առարկայական ծրագրերի ուսումնասիրությունը և դասալսումները թույլ են տալիս փաստել, որ չեն կիրառվում այնպիսի դասավանդման և ուսումառության մեթոդներ, որոնք ուղղված կլինեին ներառելու ուսանողին հետազոտական աշխատանքի մեջ:

Ինտենսիվ կերպով չի իրականացվում դասախոսների հետազոտությունների ներդրումը դասընթացների բարելավման՝ լրամշակման, բովանդակության արդիականացման տեսանկյունից: Թերևս, բացառություն են կազմում «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» լաբորատորիայի գործունեության շրջանակներում տպագրվող մենագրությունները, դասագրքերը, գիտարշավների արդյունքնում կազմված մատենաշարերի ժողովածուները, որոնք ներառվում են դասընթացների մեջ:

Միևնույն ժամանակ պարզ չէ, թե ուսանողներին՝ հետազոտական գործունեության մեջ ներգրավվելը ինչպես է առնչվում կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ: Օրինակ, Հայ

ֆոլկլորագիտության ամբիոնին կից գործող լաբորատորիայի աշխատանքների շրջանակներում ուսանողները մասնակցում են գիտարշավների ՀՀ մարզեր, ինչպես նաև կամավորական սկզբունքով մասնակցում են լաբորատորիայի ընթացիկ աշխատանքներին: Սակայն, շատ քիչ թվով ուսանողներ են մասնակցում լաբորատորիայի աշխատանքներին, ինչպես նշվեց այցի ժամանակ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, որպես ուսումնական գործընթացի հաշվետու միջոցառում ԵՊԿ-ում կազմակերպվում է հանրապետական ուսանողական գիտաժողով, որին ԵՊԿ–ի երաժշտագիտական կրթական ծրագրի ուսանողների մասնակցությունը պարտադիր է: Սակայն պարզ չէ, թե ինչպես են գնահատվում ուսանողների կատարված աշխատանքները, ինչ կոմպետենցիաների ձևավորմանն են ուղղված և ինչպես են առնչվում կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:

Դատողություն

ԵՊԿ-ն, լինելով միակ բարձրագույն երաժշտական բուհ ՀՀ-ում, կարևորում է իր գիտական գործունեությունը, ինչը և արտահայտված է ՌԾ-ում որպես գերակա նպատակ: Միևնույն ժամանակ, գործողությունների պլանում նկարագրված չէ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման գործընթացը, նշված չեն գնահատման առանցքային ցուցանիշները: Հետևաբար, գործողությունների պլանավորման գործընթացի ոչ հստակ լինելը վտանգում է ՌԾ-ի երկրորդ՝ բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն նպատակի իրագործումը: Անհրաժեշտություն է զգացվում ձևակերպելու ԵՊԿ-ի գիտական գործունեության զարգացման առանձին քաղաքականություն, հստակ նախանշված գործողություններով, այդ գործողությունների գնահատման մեխանիզմներով, ինչի շնորհիվ կարելի է նոր թափ հաղորդել հետազոտությունների ընդլայնմանը և արդյունավետությանը:

ԵՊԿ-ի կարևոր ձեռքբերումներից է 2013 թվականին «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» լաբորատորայի հիմնումը: Սակայն այս միակ գիտական լաբորատորիայի առկայությունը բավական չէ կոնսերվատորիայում գիտական գործունեության ծավալման համար: Թեպետ երաժշտագիտություն մասնագիտության շրջանակներում ևս իրականացվում են առանձին գիտական ուսումնասիրություններ, այնուամենայնիվ չեն սահմանվել ԵՊԿ-ի առաջնահերթ գիտական ուղղությունները: Տպավորություն է ստեղծվում, որ ԵՊԿ-ն շարունակում է ավանդույթը և ուշադրություն է դարձնում միայն երաժշտագիտությանը որպես գերակա ուղղություն: Սակայն անհրաժեշտություն է զգացվում ուսումնասիրել միջազգային փորձը և գտնել հետազոտական գործունեության նոր ուղղություններ՝ սահմանելով երաժշտական արվեստում տեսական, կիրառական և միջառարկայական բնույթի հետազոտությունները հավասարապես և վերաիմաստավորել կոնսերվատորիայի հետազոտական գործունեության դերը այս տեսանկյունից: ԵՊԿ-ն առավել կարևորում և արժևորում է փառատոներին և մրցույթներին մասնակցությունը միջազգային փորձառության տեսանկյունից, այնինչ անհրաժեշտ է միջազգային գիտաժողովներին հաճախակի և պարբերական մասնակցությունը ևս:

Գիտական հետազոտությունների ընդլայնման տեսանկյունից խոստումնալից կարող է դառնալ Միջդիսցիպլինար առարկաների ծրագրի նախաձեռնությունը, սակայն այն արդյունավետ դեր կարող է ունենալ հնտնողական թիմային աշխատանքի և միջազգային փորձի լուրջ ուսումնասիրման, ինչպես նաև պլանավորման գործընթացի արդյունավետ կազմակերպման դեպքում:

Շոշափելի քայլեր չեն կատարվում հետազոտական գործունեության զարգացման նպատակով ֆինանսական ռեսուրսների հայթայթման տեսանկյունից: Այս իրողությունը ռիսկային է դարձնում ԵՊԿ-ի հետազոտական գործունեության զարգացումը առհասարակ: Անհրաժեշտություն է զգացվում ակտիվ կերպով ուսումնասիրելու հետազոտական թեմաների փոխադարձ հետաքրքրություններով պայմանավորված հնարավորությունները միջազգային համագործակցության շրջանակներում, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային հնարավորությունները:

Տպավորություն է ստեղծվում, որ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումը չի կարևորվում ՄԿԾ-երի մշակման համար: Ավելին, դասախոսների և ուսանողների կողմից կատարված հետազոտական աշխատանքները անկախ են մնում ուսումնական գործունեությունից: Խնդիրն ավելի ակնհայտ է կատարողական արվեստի մասնագիտությամբ կրթական ծրագրերում: Այս դեպքում կոնսերվատորիայի կատարողական արվեստի բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի ձևավորումը, ինչը ՌԾ-ում ամրագրված էր որպես խնդիր, ռիսկային է դառնում:

Եզրահանգում

ԵՊԿ-ն չի ձևակերպել հստակ քաղաքականություն և չի մշակել ընթացակարգեր խթանելու գիտահետազոտական գործունեության զարգացումը Կոնսերվատորիայում, ինչի հետևանքով ներդրված չեն հստակ մեխանիզմներ կապակցելու հետազոտական գործունեությունը ուսումնառության հետ: ԵՊԿ-ն չունի գիտական գործունեության միջազգայնացմանը նպաստող մշակված գործընթացներ և չի իրականացնում հետազոտական նախագծեր միջազգային համագործակցության շրջանակներում, ինչը հնարավորություն չի տալիս ընդլայնելու գիտահետազոտական գործունեության ուղղությունների շրջանակը: Գիտահետազոտական աշխատանքի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ չեն կիրառվում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԵՊԿ-ն իր գործունեությունն է ծավալում Երևանում և Գյումրու մասնաճյուղում, որի համար օգտագործում է իրեն անհատույց օգտագործման իրավունքով հատկացված Սայաթ-Նովա 1/ա հասցեով մասնաշենքը (9420 մ²) և Գյումրիում Անկախության հրապարակ 1

հասցեում հատկացված մեկ հարկը (1047.53 մ²): ԵՊԿ-ի ուսումնական միջավայրը Երևանում ներառում է՝ լսարաններ, դահլիճներ, գրադարան, բուժկետ, սննդի սպասարկման կետ, օպերային ստուդիա, ձայնադարան, ֆոլկլորագիտության և ակուստիկ լաբորատորիաներ, իսկ Գյումրիում՝ լսարաններ, դահլիճ, գրադարան, բուժկետ, սննդի սպասարկման կետ: ԵՊԿ-ի ակուստիկ լաբորատորիան ստեղծվել է Համաշխարհային բանկի ծրագրի միջոցներով և կահավորված է նորագույն տեխնիկայով և գործիքներով:

ԵՊԿ-ի գրադարանում կենտրոնացված է ընդհանուր և մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով): ԵՊԿ-ի և մասնաճյուղերի գրադարանային ֆոնդը կազմում է 185 125 միավոր, որից 173 170-ը՝ նոտային գրականություն է, իսկ 10 584 դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, հանդեսներ և այլ գրականություն: Կոնսերվատորիայի ձայնադարաններում ներառված են ավելի քան 2 500 ձայներիզ, 8 870 ձայնասկավառակ և 167 տեսանյութ: Սակայն գրադարանում առկա դասագրքերը և մասնագիտական գրականությունը հիմնականում ռուսերեն լեզվով են: Նոր գրքերով գրադարանի համալրմանը հատկացվող ֆինանսավորումը բացակայում է: ԵՊԿ-ի գրադարանը էլեկտրոնային աղբյուրների հասանելիություն չի ապահովում:

Այցի ընթացքում պարզվեց, որ Կոնսերվատորիան զգալի խնդիրներ ունի կապված առկա երաժշտական գործիքների քանակի և վիճակի հետ: Առկա երաժշտական գործիքները հիմնականում պահպանվել են ԽՍՀՄ ժամանակաշրջանից: Շատերը բազմիցս վերանորոգվել են և այլևս վերանորոգման ենթակա չեն: Ներքին շահակիցների կարծիքով ԵՊԿ-ի երաժշտական գործիքների բազան նոր գործիքներով համալրելու կարիք ունի:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ֆինանսական ներդրումների զարգացումը ԵՊԿ-ի 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրի 4-րդ նպատակն է: Որի խնդիրներն են.

- Համակարգել ֆինանսների օգտագործման արդյունավետությունը՝ պլանավորման բարեփոխումների միջոցով
- Ստեղծել կոնսերվատորիայի ֆինանսական աջակցության հիմնադրամ:

Սահմանված են նաև խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ: Սակայն ինքնավերլուծությունից, ինչպես նաև այցի ընթացքում պարզվեց, որ ԵՊԿ-ն իր տարեկան ֆինանսական բյուջեի նախահաշիվը կազմում է ելնելով նախորդ տարվա փաստացի կատարված բյուջեի վերլուծությունից: Յուրաքանչյուր տարվա վերջում կազմվում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը հաստատվում է ԵՊԿ-ի Խորհրդի կողմից:

Վերջին 4 տարիների համար տոկոսներով արտահայտված Կոնսերվատորիայի ֆինանսական մուտքերը ըստ աղբյուրների հետևյալն են.

- Պետության կողմից ֆինանսավորում՝ 69.5% - 73.8%
- Պետական դրամաշնորհներ՝ 0 - 3.4%
- Վճարովի ծառայությունների մատուցում՝ 22.1% - 30.6%
- Այլ աղբյուրներ՝ 0 - 0.7%:

Ձևավորվող բյուջեի բաշխում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների չի իրականացվում: Կոնսերվատորիայի ծախսերի հիմնական հոդվածը աշխատավարձն է,

վերջին 4 տարիների համար այն կազմել է 77 - 85 %: Տարեկան բյուջեյում Կոնսերվատորիայի գործունեության (ներառյալ ուսումնական գործընթացի) ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պահպանման և նյութերի ձեռքբերման համար նախատեսվող ծախսերը 1%-ից ցածր են: Ընթացիկ վերանորոգումների համար վերջին չորս տարիների հատկացված ֆինանսավորումը տատանվել է 00.5 - 0.15 %-ի տիրույթում:

ԵՊԿ-ի պետական ֆինանսավորումը ուսումնական միջավայրի բարելավման և մասնավորապես նոր երաժշտական գործիքների ձեռք բերման համար բավարար չէ, իսկ այլ աղբյուրներից ստացվող ֆինանսավորման ծավալները ցածր են: Լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով Կոնսերվատորիան գործողություններ է ձեռնարկում «Կոնսերվատորիայի ընկերներ» հիմնադրամ հիմնելու ուղղությամբ:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսների բաշխման պրակտիկան ԵՊԿ-ում բացակայում է: Ֆինանսների բաշխումը ըստ կրթական ծրագրերի կարիքների հիմնականում կատարվում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի աշխատավարձերի և հիմնական ընթացիկ կազմակերպչական ծախսերի մասով: Վերջին 3 տարիների համար դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի աշխատավարձը Կոնսերվատորիայի ամբողջ աշխատավարձային ֆոնդի նկատմամբ կազմել է 75.5-77 %: Կարևոր է նշել, որ 2019 թվականի փետրվարից ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը բարձրացվել է 30%-ով:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԵՊԿ-ի 2012-2017 թվականների և 2019-2024 թվականների ռազմավարական ծրագրերի «Բարձրորակ կրթություն» 1-ին նպատակի համաձայն ՄԿԾ-ներն իրականացնելու համար ԵՊԿ-ում առկա է լսարանային, լաբորատոր, ստուդիային, գրադարանային բազա, ներառյալ՝ օպերային ստուդիա, ձայնադարան, ֆոլկլորագիտության և ակուստիկ լաբորատորիաներ, սակայն դրանք վերանորոգման և ձայնամեկուսացման կարիք ունեն: Լաբորատորիաների սարքավորումները հին են և՛ ֆիզիկապես և՛ ժամանակի պահանջների տեսակետից (կասետային մագնիտաֆոններ, CD նվագիչներ և այլն):

ԵՊԿ-ի 2012-2017 թվականների և 2019-2024 թվականների ռազմավարական ծրագրերի «բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն» 2-րդ նպատակի համաձայն Կոնսերվատորիայում որպես հետազոտություններ իրականացնելու համար դրական ռեսուրս կարելի է դիտարկել ԵՊԿ-ի «Երաժշտական Հայաստան» գիտական հոդվածների պարբերականը, որտեղ հիմնականում տպագրվում են Կոնսերվատորիայի դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունները: Սակայն պարբերականը տպագրվում է միայն հայերենով և հասանելի չէ միջազգային գիտական լայն հանրությանը, ինչը սահմանափակում է Կոնսերվատորիայի գիտական մտքի տարածման շրջանակը:

ԵՊԿ-ի գրադարանը երաժշտական և երաժշտագիտական ոլորտում ժամանակակից համաշխարհային գիտական և գիտամեթոդական աշխատանքներին և տենդենցներին ծանոթանալու հնարավորություն չի ապահովում: Գրադարանը չունի համապատասխան գիտական պարբերականների հասանելիություն ո՛չ թղթային, ո՛չ օնլայն ձևերով:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Ինքնավերլուծության համաձայն ԵՊԿ-ում տեղեկատվություան և փաստաթղթավորման համար պատասխանատու մարմինը գրասենյակն է: Սակայն, տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականությունը փաստաթղթային ձևով սահմանված չէ: Տեղեկատվության կառավարման հստակ գործընթացը և գործիքակազմը (տեղեկատվության կառավարման համակարգ) բացակայում են:

Mulberry փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը ապահովում է Կոնսերվատորիայի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջև փաստաթղթաշրջանառությունը: ԵՊԿ-ի ստորաբաժանումների մակարդակով (ստորաբաժանումներ, դեկանատներ, ամբիոններ և այլն) չի գործում:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԵՊԿ ներքին շահակիցների առողջության պահպանմանն ուղղված ծառայությունները մատուցվում են բուժկետի միջոցով: Բուժկետը ապահովված է առաջին բուժօգնության դեղորայքով և բժշկական գործիքներով: Այցի ընթացքում պարզվեց, որ շաբաթեկան մեկ անգամ «Վոկալ արվեստ» մասնագիտության ուսանողների համար ձայնալարերի պահպանման և անհրաժեշտության դեպքում, բուժման նպատակով բուժկետը անվճար մատուցվում է լորինգոլոգի նեղ մասնագիտական խորհրդատվություն:

Անվտանգությունը ԵՊԿ-ում ապահովվում է անվտանգության կառույցի միջոցով: Ներառականության ապահովման քաղաքականությունը ԵՊԿ-ում սահմանված չէ: Ստեղծված չէ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ներառումը հաշվի առնող միջավայր: Մասնավորապես բացակայում են թեքահարթակները, հաշմանդամներին հարմարեցված զուգարանները և վերելակը, հարմարեցված չեն գրադարանը, սննդի կետը և այլն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ինքնավերլուծության համաձայն ԵՊԿ-ի որակի ներքին ապահովման բաժնի կողմից կազմակերպվում են հանդիպումներ դասախոսների և ուսանողների, ամբիոնների վարիչների և դեկանների հետ: Սակայն այցի ընթացքում պարզվեց, որ հանդիպումները պարբերական բնույթ չեն կրում, իսկ հանդիպումներից դուրս բերված խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր դեռևս չեն ձեռնարկվում, Կոնսերվատորիան համապատասխան ֆինանսական ռեսուրսներ չունի:

Դատողություն

ԵՊԿ-ն ապահովված է ուսումնական և հետազոտական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ տարածքով Երևանում և Գյումրիում, որը ներառում է՝ լսարաններ, լաբորատորիաներ, ստուդիաներ, ձայնադարան, գրադարաններ: ԵՊԿ-ի ակուստիկ լաբորատորիան կահավորված է նորագույն տեխնիկայով և գործիքներով, սակայն մնացած լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունը հնացած է: Ուսումնական գործընթացի *արդյունավետության* բարձրացման և լրացուցիչ ֆինանսական հոսքերի ավելացման տեսակետներից մեծ կարևորություն ունեցող ԵՊԿ-ի օպերային ստուդիան հիմնովի վերակառուցման կարիք ունի:

ԵՊԿ-ն զգալի խնդիրներ ունի կապված առկա երաժշտական գործիքների քանակի և վիճակի հետ: Անհրաժեշտ քանակի և որակի գործիքների բացակայությունը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ուսումնական գործընթացը արդյունավետ իրականացնելու համար: Դա զգալի է բոլոր գործիքային կատարողական մասնագիտությունների և հատկապես նվագախմբային ֆակուլտետի համար: Ընդհանուր առմամբ ԵՊԿ-ի ռեսուրսային բազան տվյալ պահին, դեռ հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար, սակայն խնդրին շտապ լուծում չտալու դեպքում ուսումնական գործընթացը վտանգված կլինի:

Ֆինանսական բյուջեի նախահաշիվը յուրաքանչյուր տարի հաստատվում է ԵՊԿ-ի Խորհրդի կողմից, սակայն ձևավորվող բյուջեյի բաշխում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների չի իրականացվում, իսկ ծախսերի հիմնական հոդվածը աշխատավարձն է: Ֆինանսական բյուջեյի այդպիսի կառավարումը արդյունավետ չէ և վտանգում է Կոնսերվատորիայի ռազմավարական նպատակների և խնդիրների հավասարակշրված իրականացումը:

Ֆինանսների բաշխումը ըստ կրթական ծրագրերի կարիքների հիմնականում կատարվում է դասախոսական կազմի աշխատավարձերի և հիմնական ընթացիկ կազմակերպչական ծախսերի մասով, ուստի մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը լրամշակման կարիք ունի: Ուսումնական գործընթացի պատասխանատուները և/կամ որակի ապահովման բաժինը ռեսուրսային բազայի համապատասխանությունը կրթական ծրագրերին և ՌԾ-ին անհրաժեշտ ծավալով չի ուսումնասիրում: Ուստի որակի շարունակական բարելավումը և կայունությունը երաշխավորված չեն:

Տեղեկատվության կառավարման գործընթացը (տեղեկատվության կառավարման համակարգ) փաստաթղթավորված չէ: Կոնսերվատորիաի ստորաբաժանումների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ներդրված չէ: Ինչի առկայությունը կմեծացներ փաստաթղթաշրջանառության արդյունավետությունը:

Առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ԵՊԿ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր, սակայն կրթական միջավայրի ներառականությունը ապահովված չէ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները չեն գործում:

Բացասական է, որ նախորդ հավատարմագրման արդյունքում չափանիշ 7-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից Կոնսերվատորիային տրամադրված և ԵՊԿ-ի բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված՝ Կոնսերվատորիայի ռեսուրսային բազայի արդյունավետությունը գնահատելուն, Գյումրու մասնաճյուղի ռեսուրսային բազայի բարելավման ծրագրի մշակմանը, համերգասրահի կառուցման համար ՀՀ կառավարությանը դիմելուն վերաբերող խորհրդատվությունները չեն կատարվել:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ սահմանված առաքելության ու նպատակների և մասնավորապես ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար Կոնսերվատորիայի ռեսուրսները բավարար չեն, բյուջեյի բաշխում ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների չի իրականացվում, ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները չեն գործում փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան չի բավարարում չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀՀ կառավարության ներկայացուցիչների և ներքին շահակիցների նկատմամբ ԵՊԿ-ի հաշվետվողականությունը ապահովվում է Կառավարման և Գիտական խորհուրդներում Կոնսերվատորիայի գործունեության ամենամյա հաշվետվության ներկայացման միջոցով: Գիտական խորհրդում հաշվետվությունը ներկայացվում է ռեկտորի և պրոռեկտորների կողմից: Յուրաքանչյուր պրոռեկտոր ներկայացնում է իր պատասխանատվության ներքո գտնվող ոլորտներում կատարված աշխատանքների արդյունքները: Կառավարման խորհրդի գնահատմանը ԵՊԿ-ի տարեկան հաշվետվությունը ներկայացնում է ռեկտորը: Կառավարման խորհրդում ռեկտորի տարեկան հաշվետվությունների միջոցով հաշվետվողականության իրականացումը սահմանվում է ԵՊԿ-ի կանոնադրությամբ: Սակայն Կոնսերվատորիայում բացակայում է ստորաբաժանումների հաշվետվողականության ապահովման միասնական կարգ: Սահմանված չեն հաշվետվությունների միասնական ձևաչափերը և հաշվետվողականության ապահովման ժամանակացույցը:

Ինքնավերլուծության համաձայն հանրության արջև ԵՊԿ-ի հաշվետվողականությունը ապահովվում է Կոնսերվատորիայի պաշտոնական կայքէջի և սոցիալական ցանցերում ԵՊԿ-ի բազմաթիվ էջերի, ԶԼՄ-ների և ԵՊԿ-ի «Երաժիշտ» համացանցային թերթի միջոցով: Պաշտոնական կայքէջի, սոցիալական ցանցերի և թերթի միջոցով հանրությանը հասանելի է դառնում Կոնսերվատորիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Սակայն

ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում Կոնսերվատորիայի պաշտոնական կայքէջը վերակառուցման հետևանքով չեր գործում: Հետևաբար, չի ապահովվում նաև հանրությանը ռեկտորի տարեկան հաշվետվությունների հասանելիությունը: Կոնսերվատորիայում կրթական, գիտական և այլ գործունեության վերաբերյալ ամբողջական հաշվետվողականության ապահովման այլ մեխանիզմներ չեն գործում:

ԵՊԿ-ի գիտական գործունեության հաշվետվողականությունը իրականացվում է Կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» պարբերականի միջոցով, որտեղ հիմնականում տպագրվում են Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների գիտական հետազոտությունները: Սակայն ինքնավերլուծության համաձայն օնլայն հարթակում Կոնսերվատորիայի հետազոտական գործունեության արդյունքները հասանելի չեն:

Հանրության առջև ԵՊԿ-ի հաշվետվողականության ապահովման կարևորագույն ձևերից են Հայաստանում և դրա սահմաններից դուրս Կոնսերվատորիայի ուսանողների, շրջանավարտների և դասախոսների բազմաթիվ համերգները: Այսօր ՀՀ-ում իրականավող դասական, ազգային և Կոնսերվատորիայի գործունեության ուղղություններին համապատասխանող այլ համերգային միջոցառումներում ներգրավված են Կոնսերվատորիայի ներքին շահակիցները կամ շրջանավարտները:

ՀՀ կառավարության արջև ԵՊԿ-ն իր հաշվետվողականությունը ապահովում է նաև ֆինանսական և լիազոր մարմնի կողմից սահմանված այլ հաշվետվությունների միջոցով:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Ինքնավերլուծության համաձայն Կոնսերվատորիայի ընթացակարգերի, գորրծընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը ապահովվում է՝

- ԵՊԿ-ի միջազգային կապերի բաժնի վերակառուցման արդյունքում Կոնսերվատորիա-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովման ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատման նպատակով «Հասարակայնության հետ կապերի և լրատվության համակարգող»-ի հաստիքի ստեղծման,
- Կոնսերվատորիայի գործնեության վերաբերյալ տեղեկատվությունը և համակարգող փաստաթղթերը պաշտոնական կայքէջում հրապարակելու,
- ինչպես նաև ֆեյսբուքի միջոցներով տեղեկատվություն տարածելու միջոցով:

Սակայն այցի ընթացքում պարզվեց, որ «Հասարակայնության հետ կապերի և լրատվության համակարգող»-ի հաստիքը ստեղծվել է ընդհամենը մեկ տարի առաջ և այժմ զբաղեցված է 0.5 դրույքով: Կոնսերվատորիայի պաշտոնական կայքէջը չի գործում և հետևաբար ԵՊԿ-ի տարբեր գործընթացները նկարագրող և սահմանող կարգերը, կանոնակարգերը և այլ համակարգող փաստաթղթերը հանրությանը հասանելի չեն: Կոնսերվատորիայի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը ապահովող մեխանիզմներ չեն գործում: Սոցիալական ցանցերում ԵՊԿ-ի էջերը կանոնակարգային տեղեկատվություն չեն պարունակում և այս ուղղությամբ ներդրում չունեն:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵՊԿ-ի ինքնավերլուծության համաձայն հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի իրականացման հիմնական ձևերն են՝ բանավոր խոսքը և էլեկտրոնային փոստի, ֆեյսբուքյան և թղթային նամակագրությունը: ԵՊԿ-ի վարչական աշխատակիցները՝ ռեկտոր, պրոռեկտորներ, դեկաններ, ամբիոնների վարիչներ յուրաքանչյուր օր պատրաստ են ընդունել բոլոր ցանկացողներին: Ցանկացած խնդրի առաջացման դեպքում հարցատուն հնարավորություն է ունենում դիմելու համապատասխան ստորաբաժանման ղեկավարին և անձամբ ռեկտորին: Փոստային նամակները շրջանառության մեջ է դնում ԵՊԿ-ի գրասենյակը: Սակայն բացակայում է ԵՊԿ-ի ներքին փաստաթղթաշրջանառության կարգը, սահմանված չեն կատարվող հարցումներին պատասխանելու և խնդիրները լուծելու/մերժելու ժամկետները: Պաշտոնական կայքէջի չգործելու հետևանքով հասարակությանը հասանելի չեն ԵՊԿ-ի պաշտոնական և տարբեր ստորաբաժանումների էլեկտրոնային փոստերի հասցեները: Սահմանված չէ սոցիալական ցանցերի միջոցով հարցումներ կամ խնդիրների լուծման նպատակով դիմումներ ներկայացնելու մեխանիզմները: Հետադարձ կապի միջոցներով ստացվող տեղեկատվության վիճակագրության հավաքագրում և վերլուծություն չի իրականացվում:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵՊԿ-ն ունի հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման ձևավորված ավանդույթներ: Պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և շրջանավարտների կողմից կազմակերպվող և իրականացվող բազմաթիվ երաժշտական միջոցառումների շնորհիվ ԵՊԿ-ն ուղղակի և անուղղակի ձևերով հանրության լայն շրջանակներում կատարում է ազգային, հոգևոր, դասական և ժամանակակից երաժշտության ոլորտներում գիտելիքի և ճաշակի զարգացմանն ուղղված ծառայություններ, ապահովում է ազգային երաժշտական արվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս: Սակայն այս գործունեությունը հիմնված է միայն ավանդույթների վրա և հաճախ դասախոսների, ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումները Կոնսերվատորիայի նախաձեռնությամբ չեն կազմակերպվում, գործընթացների պլանավորում չի իրականացվում:

Երաժշտագիտական մտքի տարածումը հիմնականում իրականացվում է ԵՊԿ-ի «Երաժշտական Հայաստան» պարբերականի միջոցով, ուր տպագրվում են Կոնսերվատորիայի դասախոսների և այլ գիտնականների գիտական հոդվածները երաժշտագիտության և երաժշտության դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

ԵՊԿ-ն ՀՀ ու օտարերկրյա քաղաքացիների համար նաև լրացուցիչ և նախապատրաստական դասընթացներ է իրականացնում է, որոնց սահմաններում հանրության ներկայացուցիչներին ծանոթացնում են երաժշտական գործիքներին և դրանց տիրապետման վարպետությանը, ինչպես նաև ապագա դիմորդներին պատրաստում են ընդունելության քննություններին: Դիմորդներին Կոնսերվատորիայի գործունեությանը ծանոթացնելու նպատակով 2019 թվականից ԵՊԿ-ում կազմակերպվում են «Բաց դռների օր»-

եր: Սփյուռքահայ հանրությանը ծառայությունների մատուցման համար ԵՊԿ-ն Հայկական բարեգործական ընդհանուր միության (AGBU) հետ համատեղ կազմակերպել է ամառային դպրոց:

Դատողություն

ԵՊԿ-ում գործում է կրթական, հետազոտական գործունեության և օգտագործված ռեսուրսների վերաբերյալ ՀՀ կառավարության ներկայացուցիչներին և ներքին շահակիցներին հաշվետվողականություն ապահովելու քաղաքականություն, սակայն մեխանիզմները սահմանափակվում են ԵՊԿ-ի Կառավարման և Գիտական խորհուրդներում Կոնսերվատորիայի գործունեության տարեկան հաշվետվություններով: Ուսումնական, գիտական և այլ գործունեության վերաբերյալ հաշվետվողականության այլ մեխանիզմներ չկան: Պաշտոնական կայքէջի չգործելու հետևանքով ԵՊԿ ռեկտորի տարեկան հաշվետվությունները հասարակության լայն շերտերին հասանելի չէ: Այս հանգամանքները խոչընդոտում են հասարակության առջև Կոնսերվատորիայի հաշվետվողականության ապահովմանը: ԵՊԿ-ի պաշտոնական կայքէջի գործունեության դադարեցումը խոչընդոտում է նաև Կոնսերվատորիայի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկության ապահովմանը:

Կոնսերվատորիայի վարչական կազմի «բաց դռներ»-ի քաղաքականության միջոցով ԵՊԿ-ն ապահովում է հետադարձ կապը հասարակության և հատկապես ներքին շահակիցների հետ, սակայն հաստատված ներքին փաստաթղթավորման կարգի բացակայությունը, պաշտոնական կայքէջից պաշտոնական անձանց էլեկտրոնային փոստերի հասցեները ճշտելու անհնարությունը, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ստացվող դիմումների հաշվառման մեխանիզմների բացակայությունը խախտում են հետադարձ կապի ապահովման ամբողջականությունը:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման ձևավորված ավանդույթների միջոցով ԵՊԿ-ն նշանակալի ներդրում ունի հանրության լայն շերտերում ազգային, հոգևոր, դասական և ժամանակակից երաժշտության ոլորտներում գիտելիքի և ճաշակի զարգացման, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանում ազգային երաժշտական արվեստի պահպանման, զարգացման և տարածման գործում: Երաժշտագիտական հետազոտությունների տարածմանը նպաստում է ԵՊԿ-ի «Երաժշտական Հայաստան» պարբերականը:

Բացասական է, որ նախորդ հավատարմագրման արդյունքում չափանիշ 10-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից ԵՊԿ-ին տրամադրված և ԵՊԿ-ի բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված՝ Կոնսերվատորիայի և շրջանավարտների միջև կապի ֆորմալացման նպատակով շրջանավարտների միության ստեղծմանը վերաբերող խորհրդատվությունը Կոնսերվատորիայի կողմից չի կատարվել:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԵՊԿ-ում գործում է կրթական, հետազոտական գործունեության և օգտագործված ռեսուրսների վերաբերյալ ՀՀ կառավարության ներկայացուցիչներին և ներքին շահակիցներին հաշվետվողականություն ապահովելու քաղաքականություն, նշանակալի ներդրում ունի հանրության լայն շերտերում ազգային, հոգևոր, դասական և ժամանակակից

երաժշտության ոլորտներում գիտելիքի և ճաշակի զարգացման, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանում ազգային երաժշտական արվեստի պահպանման, զարգացման և տարածման գործում, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ԵՊԿ-ի արտաքին կապերի համակողմանի զարգացման և միջազգայնացման ուղղությունները արտահայտված են Կոնսերվատորիայի 2012-2017 և 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրերում: Սակայն, 2012-2017թթ. ՌԾ-ում միջազգայնացումը դիտվում է որպես ընթացիկ գերակայություն, որում բացակայում են հստակ նշված գործողություններ: Այս պարագայում դժվար է գնահատել ՌԾ-ի կատարողականը: 2019-2024թթ. ՌԾ-ում միջազգայնացմանն ուղղված առանձին նպատակ ձևակերպված չէ, սակայն միջազգայնացմանն ուղղված խնդիրներ արտացոլված են բարձրորակ կրթություն (1թ խնդիր) և հանրային ներգրավվում և ծառայություններ նպատակներում (3.9 խնդիրներ), ինպես նաև այդ խնդիրների գործողություններում: Սակայն ՌԾ-ի գործողություններից բխող ընթացակարգեր առկա չէ:

Հաշվի առնելով նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագետների խորհրդատվությունը և 2019-2024թթ. ՌԾ-ում նախանշված գործողությունները միջազգայնացմանն ուղղված՝ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժինը իր գործունեության համար մշակել է առանձին ռազմավարական ծրագրի նախագիծ 2019-2024թթ.-ի համար՝ դնելով իր առջև հետևյալ նպատակները.

- բարձրացնել ԵՊԿ-ի վարկանիշը միջազգային ասպարեզում՝ խթանելով միջազգայնացումը ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում,
- զարգացնել և ընդլայնել հանրային ներգրավվման և տրամադրվող ծառայությունների համակարգը:

Առկա է նաև գործողությունների պլանավորում ըստ խնդիրների, որում նշված են պատասխանատուները, ժամկետացուցը և գործողությունների գնահատման ցուցիչները: Վերոնշյալ ռազմավարական ծրագիրը դեռ հաստատված չէ գիտխորհրդի կողմից:

Հարկ է նաև նշել, որ ԵՊԿ-ն մասնակցում է ERASMUS+ BOOST ծրագրին, որի նպատակն է նպաստել միջազգայնացման քաղաքականության ձևաչափի, գործիքակազմի մշակմանը ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում: Ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ՝

դրամաշնորհային ծրագրի շրջանակում կազմակերպվող վերպատրաստումները նպաստել են անձնակազմի մոտ Կոնսերվատորիայի միջազգայնացման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը: 2018թ.-ին ծրագրի շրջանակներում ԵՊԿ-ում կազմակերպվեց միջազգային գիտաժողով «Հայաստանի բուհերի միջազգայնացման ռազմավարության ձևավորումը» խորագրով:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԵՊԿ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման պատասխանատու կառույցն է Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որը ենթարկվում է Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին, ով հաշվետու է ԵՊԿ ռեկտորին:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի հիմնական գործառույթներն են՝ օտարերկրյա մասնագետների և պատվիրակությունների հրավերների անհրաժեշտ փաստաթղթերի և վիզաների ձևակերպումը, նրանց ընդունելության կազմակերպումը, օտարերկրյա հյուրերի գրանցումը, ուսանողների ակադեմիական տեղեկանքների, փաստաթղթերի թարգմանությունը և պաշտոնական վավերացումը, օտարերկրյա ուսանողների աջակցությունը ուսումնառության ընթացքում, սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին հատկացվող կրթաթոշակների բաշխման կազմակերպումը: Ուսանողների և դասախոսների շարժունության աջակցության համար ուսումնասիրում է արտերկրի բուհերի գիտակրթական ծրագրերը, դրամանորհները՝ իրազեկելով ԵՊԿ-ի ստորաբաանումների ղեկավարներին և ուսանողական կառույցներին: Բաժինը նաև աջակցում է տարբեր ստորաբաանումներին դրամաշնորհային ծրագրերի փաթեթի պատրաստման և համակարգման հարցում: Միևնույն ժամանակ առկա չեն հիմքեր, փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս բաժնի գործունեության պլանավորման գործընթացը և կատարողականի արդյունավետությունը:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ բաժնի կարգը մշակման փուլում է: Այցի ընթացքում փորձագիտական խմբին ներկայացվեց բաժնի գործունեության կանոնակարգի նախագիծը: Կանոնակարգում սահմանված են բաժնի գործունեության ուղղությունները, գործառույթները, ստորաբաժանման աշխատանքի կազմակերպման սկզբունքները, պատասխանատուները, ինչպես նաև նկարագրված է պրոռեկտորի իրավասությունները և պատասխանատվության շրջանակը:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵՊԿ-ն ունի բազմաթիվ միջազգային պայմանագրեր նախկին ԽՍՀՄ և եվրոպական պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի երաժշտության, մշակույթի և արվեստի տարբեր բուհերի հետ: Ընդորում, պայմանագրերի թիվը աճել է. ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ ԵՊԿ-ն վերջին 3 տարիների ընթացքում վերանայել է և կնքել է համագործակցության տասնյակ նոր պայմանագրեր Մոսկվայի պետական կոնսերվատորիայի, Սանկտ Պետերբուրգի պետական կոնսերվատորիայի, Ղազախստանի արվեստների ազգային

համալսարանի, Տրոմսոյի (Արկտիկ) համալսարանի, Մոնղոլիայի երաժշտության և պարի քոլեջ և այլն:

Ինքնավերլուծությունում նշվում է նաև այլ համագործակցությունների մասին՝ Orchestral Academy (Գերմանիա) և Verbier Festival Orchestra (Գերմանիա), Ադամ Միցկևիչի մշակույթի ինստիտուտի, Culture Orchestra (Լեհաստան), ԱՊՀ երկրների երիտասարդական սիմֆոնիկ նվագախումբ: Համագործակցությունը շարունակվում է նաև Hans Gabor Belveder (Ավստրիա) մեներգիչների միջազգային մրցույթի կազմկոմիտեի հետ: Վերջին 2 տարիների ընթացքում մրցույթի նախնական փուլը կազմակերպվել է Կոնսերվատորիայի Օպերային ստուդիայի դահլիճում:

ԵՊԿ-ում անցկացվում են վարպետության դասեր արտասահմանից եկած պրոֆեսորների կամ երաժիշտների կողմից, գրեթե բոլոր մասնագիտացումներով՝ երգեցողություն, դաշնամուր, ջութակ, թավջութակ, կիթառ, փողային գործիքներ, խմբավարություն, կոմպոզիցիա և այլն:

Կոնսերվատորիան համագործակցում է տեղական բոլոր երաժշտական կրթական հաստատությունների (քոլեջների, դպրոցների և այլն), ինչպես նաև գիտական, հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ: ԵՊԿ-ի ներկայացված ինքնավերլուծությունում չի նշվում ՀՀ մշակութային բուհերի միջև կնքված պայմանագրի և դրա սահմաններում կազմակերպված միջոցառումների մասին:

Կոնսերվատորիան շարունակում է համագործակցել Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիների (AEC) հետ և հանդիսանում է այդ ասոցիացիայի անդամ՝ տարեկան անդամավճարներ կատարելով:

Միևնույն ժամանակ ինքնավերլուծության մեջ առկա չէին վերլուծություններ, իսկ հանդիպումների ժամանակ չհնչեցին կարծիքներ այն մասին, թէ որքանով են այսպիսի համագործակցությունները արդյունավետ եղել ՄԿԾ-երի վերանայման, ՊԴ կազմի վերապատրաստման, գիտահետազոտական գործունեության ընդլայման տեսանկյունից, և որքանով են դրանք բխում և համահունչ ՌԾ-ում նշված՝ միջազգայնացման ուղղությամբ գործողություններին:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵՊԿ-ում ՊԴ կազմի, ինչպես նաև ուսումնաօժանդակ և վարչական կազմերի օտար լեզվի, մասնավորապես, անգլերենի իմացությունը թույլ է: Ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ վարչական կազմի գրեթե 90% տիրապետում է ռուսերեն, և միայն 40% տիրապետում է անգլերենի: Միևնույն ժամանակ ՊԴ կազմի 60%-ը ընդհանրապես չի տիրապետում անգլերեն լեզվին, 15%-ը՝ թույլ է տիրապետում, և 10%-ի լեզվի իմացությունը միջին մակարդակի է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս ԵՊԿ-ն կազմակերպել է անգլերենի դասընթացներ աշխատակազմի համար:

ԵՊԿ-ի օտարերկրյա ուսանողներն անցնում են հայերեն լեզվի նախապատրաստական դասընթացներ, ինչով և պայմանավորված է այն, որ դասախոսներին անգլերենի իմացությունը այնքան էլ անհրաժեշտ չէ դասավանդման ընթացքում: Բացի դրանից օտարերկրյա ուսանողների մեծ մասը սփյուռքահայեր են, ովքեր որոշ չափով տիրապետում են հայերեն: Ինչպես պարզվեց հանդիպումներից, դասախոսների մեծ մասը դասավանդում է

հայերեն կամ ռուսերեն՝ կախված նրանից, թե լսարանի մեծամասնությունը որ լեզվին է տիրապետում: Սակայն, սա լուրջ դժվարություններ է առաջացնում այն քիչ թվով ուսանողների ուսումնառության ընթացքում, ովքեր չեն տիրապետում հայերեն կամ ռուսերեն լեզուներին:

Ինքնավերլուծության մեջ առկա չեն ուսանողների օտար լեզվի իմացության վերաբերյալ տվյալներ: Միևնույն ժամանակ ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանցից շատերը տիրապետում են անգլերեն լեզվին, սակայն իրենց իմացությունը պայմանավորված չէ ԵՊԿ-ում իրենց անցած դասընթացներից: Ուսանողները նշեցին, որ անգլերեն լեզվի դասընթացները արդյունավետ չեն, քանի որ խմբերը մեծ են և առարկայական ծրագիրը նույն է տարբեր մակարդակներում լեզուն տիրապետող ուսանողների համար:

Դատողություն

Դիտարկելով առկա փաստերը պարզ է դառնում, որ ԵՊԿ-ն ունի ձևակերպված հավակնություններ Կոնսերվատորիայի միջազգայնացման առումով: 2019-2024 թթ. ՌԾ-ում միջազգայնացման վերաբերյալ գործողությունները արտացոլված են առաջին երեք գերակա նպատակների մեջ: Նախորդ փուլի հավատարմագրման արդյունքնում փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա մշակվել է միջազգայնացմանն ուղղված ռազմավարական ծրագիրը: Սա ցույց է տալիս, որ Կոնսերվատորիան հետևողական է այս հարցում և ունի իր տեսլականը: Սակայն, անհրաժեշտ է, որ գործողությունների իրականացման հետ հանդերձ Կոնսերվատորիան մշակի գնահատման մեխանիզմներ, որի շնորհիվ կարելի է գործընթացը դարձնել կառավարելի:

ԵՊԿ-ում հաստատված է միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ենթակառուցվածք, ինչը ևս վկայում է այն մասին, որ միջազգայնացումը Կոնսերվատորիայի գործունեության գերակա ուղղություններից է: Այցի ժամանակ հանդիպումներից պարզ դարձավ, որ բաժինը փաստացի ավելի շատ իրականացնում է տեխնիկական բնույթի գործառույթ բոլոր այն դեպքերում, ինչը կապված է միջազգային համագործակցության, շարժունության և օտարերկրյա ուսանողների հյուրընկալման հետ: Սակայն, մշակվել է միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի նոր կանոնակարգի նախագիծը, որտեղ ընդգրկված է գործառույթների լայն շրջանակ:

ԵՊԿ-ն համագործակցում է բազմաթիվ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ, ինչի մասին են վկայում ներկայացված համագործակցության պայմանագրերը: Սակայն միևնույն ժամանակ փորձագիտական խմբի մոտ տպավորություն է ստեղծվել, որ որոշ պայմանագրեր ֆորմալ բնույթ են կրում: Արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է նպատակային և շարունակական պայմանագրերի կնքում, ինչը կնպաստի աշխատանքների հետևողական և շարունակական իրականացմանը, չի վտանգի նախաձեռնությունները և կապահովի գործունեության կայունությունը: Միևնույն ժամանակ կարելի է ասել, որ առավել արդյունավետ են վարպետաց դասերի կազմակերպումը անվանի օտարերկրյա մասնագետների կողմից, ինչը շատ հաճախ հիմնված չէ որևէ պայմանագրային հիմքի վրա: Միջազգայնացման անուղղակի, սակայն դրական արդյունք կարելի է համարել ԵՊԿ դասախոսական կազմի և ուսանողների միջազգային մրցույթներին մասնակցությունը:

ԵՊԿ-ի անձնակազմի և ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ լուրջ աշխատանքների անհրաժեշտություն է զգացվում: Օտար լեզվի ոչ

բավարար իմացությունը լուրջ խոչընդոտ է շարժունության, համատեղ նախագծերի, և ընդհանրապես, ցանկացած բնույթի համագործակցության համար միջազգայնորեն բարձր ճանաչում վայելող բուհերի հետ:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԵՊԿ-ն մշակվել է առանձին միջազգայնացմանն ուղղված քաղաքականություն հստակ պլանավորված գործողությունների առկայությամբ, միջազգային համագործակցության և հասարակայնության կապերի հետ գործող նթակառուցվածք, որը ոչ բոլոր ուղղություններով, սակայն ապահովում է կանոնակարգված գործընթաց, ինչպես նաև միջազգային համագործակցության առումով որոշակի ձեռքբերումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Եվրոպական չափանիշների պահանջներին համապատասխան որակի ներքին հավաստման համակարգի ներդրումը սահմանված է ԵՊԿ-ի 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրում որպես՝ բարձրորակ կրթություն նպատակի 2-րդ խնդիր: Իսկ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան դասախոսական կազմի համալերումը և բարելավումը որպես Որակյալ կադրային ներուժ նպատակի 1-ին խնդիր: 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրում բավականին մանրամասն նկարագրված են նաև նշված խնդիրների լուծելու համար պլանավորված գործողությունները, սակայն դրանք մեծամասամբ չեն իրականացվել: Կրթության որակի ապահովման համակարգի հետևողական զարգացումը սահմանված է նաև 2019-2024 թվականների ռազմավարական ծրագրում կրկին որպես՝ բարձրորակ կրթություն նպատակի 2-րդ խնդիր: Ռազմավարական ծրագրում սահմանված են նաև խնդրի լուծմանն ուղղված գործողություններ:

ԵՊԿ-ի գործունեության բոլոր ուղղությունների որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը որևէ այլ տեղ սահմանված չեն: Բացակայում են գործընթացների իրականացման ժամանակացույցը և պատասխանատուները: Ժամանակ առ ժամանակ Կոնսերվատորիայում իրականացվում են հարցումներ ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում, սակայն այդ հարցումները ընդհանրական են և ուղղված չեն որևէ կոնկրետ գործընթացի ուսումնասիրությանը:

ԵՊԿ-ի որակի ներքին ապահովման ընթացակարգերը սահմանված չեն: 2014 թվականին լրամշակված ԵՊԿ կրթության որակի ներքին ապահովման բաժնի կանոնակարգում, որպես բաժնի գործառույթներ նշվում են.

- յուրաքանչյուր կիսամյակ ներքին աուդիտի անցկացումը,
- մշտական մոնիթորինգի արդյունքում ստացված արդյունքների հիման վրա ԵՊԿ-ի դիագնոստիկայի անցկացումը,
- սահմանված կարգով կրթության որակի ներքին ապահովման հետ կապված այլ գործընթացների իրականացումը:

Սակայն, որակի ապահովման այլ գործընթացները, ինչպես նաև ներքին աուդիտ, մշտական մոնիթորինգ, ԵՊԿ-ի դիագնոստիկա հասկացողությունները ոչ մի փաստաթղթում չեն սահմանվում: ԵՊԿ-ն որակի ներքին ապահովման ձեռնարկ կամ որակի ապահովման գործընթացները, գործիքները և ժամանակացույցը սահմանող այլ փաստաթուղթ չունի:

Ինքնավերլուծության համաձայն կրթության որակի ներքին ապահովման բաժնի գործառույթները բավարար հիմքեր չեն ապահովում որակի գնահատման և ապահովման գործընթացներ իրականացնելու համար:

Ինքնավերլուծությունում նշված են նաև կրթության որակի ներքին ապահովման բաժնի կողմից վերջին 5 տարիների ընթացքում իրականացված քայլերը, որոնց կեսը բաժնի գործառույթների մեջ չեն մտնում, մասնավորապես՝

- դրամաշնորհային ծրագրերի հայտերի պատրաստում
- Կոնսերվատորիայում գործող ՀՀ և միջազգային ծրագրերի համակարգում
- ԵՊԿ-ի 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի նախագծի մշակում
- ՄԿԾ-ների մշակման ձեռնարկի մշակում
- ԵՊԿ ուսանողի տեղեկատվական բրոշուրների պատրաստում:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կրթության որակի ներքին ապահովման բաժինը ստեղծվել է 2012 թվականին և այժմ ունի 3 հաստիք՝ 1 բաժնի վարիչ և 2 տեսուչ: Սակայն մինչ 2019 թվականի կեսը զբաղեցված է եղել միայն բաժնի վարիչի պաշտոնը: Կոնսերվատորիան կրթության որակի ներքին ապահովման բաժնին տրամադրում է նյութական ռեսուրսներ՝ թուղթ, գրենական պիտույքներ և այլն: Բաժինը տեղակայված է բոլոր անհրաժեշտ գրասենյակային պարագաներով և տեխնիկայով ապահովված սենյակում:

Այցի ընթացքում պարզվեց, որ ֆակուլտետներում որակի ապահովման պատասխանատուներ կան, սակայն դա որևէ տեղ փաստաթղթավորված չէ, իսկ այդ պատասխանատուների ֆունկցիաները սահմանափակվում են հարցումների ընթացքում տեխնիկական աջակցության տրամադրմամբ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Ներքին և արտաքին շահակիցները բավարար չափով ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: Շահակիցների մասնակցությունը սահմանափակվում է հստակ պարբերականություն չունեցող հարցումներում և ֆոկուս խմբային հանդիպումներում

նրանց մասնակցությամբ: ԵՊԿ-ի կրթության որակի ներքին ապահովման բաժինը որոշակի հարցումներ է իրականացնում Կոնսերվատորիայի ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում: Սակայն այդ բոլորը իրականացվել է ուսանողներին, դասախոսներին և շրջանավարտներին ուղղված մեկական թերթիկներով, ինչը չի կարող անհրաժեշտ խորության ուսումնասիրություն ապահովել: Կոնսերվատորիայում իրականացվող գործընթացների գնահատման մեխանիզմները, գործիքները և ժամանակացույցը բացակայում են:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԵՊԿ-ի 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրում որպես խնդիրներ և դրանց հասնելու համար նախատեսվող գործընթացներ սահմանված են եղել.

ԻԲ. Ներդնել որակի հավաստման համակարգ՝ եվրոպական չափանիշների պահանջներին համապատասխան

1. աջակցել կրթության որակի ներքին ապահովման աշխատանքներին՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպչական կառուցվածքի ընդգրկմամբ և կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականությունների և գործառույթների սահմանմամբ
2. մշակել Կոնսերվատորիայի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափանիշերը
3. նախաձեռնել և իրականացնել Կոնսերվատորիայի կրթական գործունեության ինքնաուսումնասիրման, ինքնավերլուծության, ինքնագնահատման գործընթացները՝ համապատասխան ձեռնարկի հրատարակմամբ, որը հիմք կծառայի ինչպես որակի արտաքին հավատարմագրման գործընթացների իրականացման, այնպես էլ կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար
4. իրականացնել Կոնսերվատորիայի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումը հանրապետական և միջազգային մակարդակով
5. մշակել և ներդնել ուսուցման ելքային արդյունքների վրա հիմնված նոր կրթական չափորոշիչներ բակալավրի և մագիստրոսի աստիճանների հիմնական ծրագրերի (որակավորումների) համար՝ հիմք ընդունելով որակավորումների եվրոպական ձևը և տարբեր առարկայական ոլորտների համար լայնորեն կիրառվող միջազգային «համադրության եզրերի բնորոշումները»
6. ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար
7. ստեղծել և հրապարակել ուղեցույցեր ինստիտուցիոնալ չափանիշներով, կանոնակարգեր և ընթացակարգեր, ապահովելով դրանց հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը

8. ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը Կոնսերվատորիայի ներքին և արտաքին շահակիցների համար, աշխատակազմի և ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում

IVԱ. Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան

9. վերամշակել Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական աշխատանքային կարգը՝ սահմանելով մանկավարժական, գիտաստեղծագործական աշխատանքների փորձը և տարիքային չափանիշները
10. ապահովել դասախոսական կազմի ձևավորումը մրցույթային հիմունքներով՝ կատարելագործելով դասախոսական պաշտոնների բաշխման չափանիշները
11. իրականացնել դասախոսական կազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի
12. մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր
13. մշակել դասախոսների որակավորման կրթական ծրագիրը՝ ապահովելով հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը
14. խրախուսել դասախոսների ինքնակրթությունը, գիտական ու մանկավարժական շարժունությունը
15. կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝ իրականացնելու էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և դասավանդելու օտար լեզվով
16. մշակել վերապատրաստման ծրագրեր՝ համագործակցելով միջազգային համապատասխան հաստատությունների հետ

Սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ գործողությունները մեծամասամբ չեն իրականացվել, մասնավորապես որակի ներքին համակարգի ձևավորմանը ուղղված՝

- որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի սահմանում,
- ինքնագնահատման չափանիշների մշակում,
- որակի ապահովման ձեռնարկի մշակում,
- ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման ներքին չափանիշների և ընթացակարգերի ստեղծում,
- որակի ապահովման գործընթացներում ներքին ու արտաքին շահակիցների մասնակցության, հետադարձ կապի և թափանցիկության ապահովում

գործողությունների ուղղությամբ աշխատանքներ չեն տարվել: Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ձևավորված չէ և հետևաբար վերանայվել չի կարող:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Կոնսերվատորիայի արտաքին գնահատման նպատակով ԵՊԿ-ն պատրաստել է ինքնավերլուծության զեկույց: Սակայն զեկույցում ներկայացված տեղեկատվությունը հիմնականում վերլուծական չէ և հիմնված է գործընթացների նկարագրման վրա: Վերլուծությունում հաճախ բացակայում են ձևաչափով պահանջվող վիճակագրական տվյալները: Չափորոշիչներում ներկայացված տեղեկատվությունը տվյալ չափորոշչի պահանջներին որոշ դեպքերում չի վերաբերում: Կցված փաստաթղթերի հաստատման հետ կապված տեղեկատվությունը՝ հաստատման ամսաթիվը, հաստատող մարմինը և այլն տեսանելի չէ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ որակի ապահովման արտաքին գնահատման համար իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու քաղաքականություն Կոնսերվատորիան չունի: Որակի ապահովման ներքին համակարգը արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքեր չի ապահովում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԵՊԿ-ի 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրի խնդիրների լուծման գործողություններում, որպես ԻԲ. Ներդնել որակի հավաստման համակարգ՝ եվրոպական չափանիշների պահանջներին համապատասխան խնդրի գործողություն սահմանված էր՝

- ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը Կոնսերվատորիայի ներքին և արտաքին շահակիցների համար, աշխատակազմի և ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում:

Սակայն այս գործողությունները չեն իրականացվել: ԵՊԿ-ի պաշտոնական կայքէջը ինքնավերլուծության և փորձագիտական այցի ընթացքում վերակառուցման պատճառով չեր աշխատում: Ուստի փորձագիտական խումբը արձանագրում է, որ Կոնսերվատորիայի գործունեության որակի մասնի վերլուծություններ կամ այլ տեղեկատվություն շահակիցներին հասանելի չէ: Որակի ապահովման ներքին համակարգը ներքին և արտաքին շահակիցներին Կոնսերվատորիայի գործունեության որակի մասին տեղեկատվություն չի տրամադրում:

Դատողություն

ԵՊԿ-ի կրթության որակի ներքին ապահովման բաժինը ստեղծվել է դեռևս 2012 թվականին, սակայն ԵՊԿ-ի 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրով որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ նախատեսված գործողությունները չեն իրականացվել և որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորված չէ: Որակի ապահովումը որպես Կոնսերվատորիայի կառավարման համակարգի անբաժան մաս չի դիտարկվում: Կոնսերվատորիայի գործունեության բոլոր ուղղությունների որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպված չէ, սահմանված չեն ներքին որակի ապահովման ընթացակարգերը և գործիքակազմը: Այս ամենը ռիսկի տակ է դնում

Կոնսերվատորիայի գործունեության նպատակաուղղվածությունը, արդյունավետությունը և շարունակական բարելավումը:

ԵՊԿ-ի ներքին և արտաքին շահակիցները բավարար չափով չեն մասնակցում որակի ապահովման գործընթացներին և Կոնսերվատորիայի կողմից կազմակերպվող, հստակ նպատակաուղղվածություն և պարբերականություն չունեցող հարցումները և ֆոկուս խմբային հանդիպումները ըստ էության, վեր չեն հանում ԵՊԿ-ի առանցքային հիմնախնդիրները: Իրականացվող բազմաթիվ գործընթացների գնահատման համար մեխանիզմներ ու գործիքներ չկան: Որակի ապահովման ներքին համակարգը արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքեր չի ապահովում: ԵՊԿ-ում ՊԻԳԲ շրջափուլը չի գործում և որակի մշակույթը ձևավորված չէ: Որակի ապահովման ներքին համակարգը որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն չի տրամադրում և Կոնսերվատորիայի գործունեության թափանցիկությունը չի ապահովում:

Բացասական է նաև այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրման արդյունքում չափանիշ 10-ի բարելավման նպատակով փորձագիտական խմբի կողմից ԵՊԿ-ին տրամադրված և ԵՊԿ-ի բարելավման միջոցառումների ծրագրի ժամանակացույցում ներառված՝ Կոնսերվատորիայի գործունեության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների ձևավորմանը, որակի ապահովմանը հատկացվող ռեսուրսների ընդլայնմանը, որակի ապահովման քաղաքականության մշակմանը, որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման ու հետադարձ կապի մեխանիզմների մշակմանը, կառավարման և վարչարարության որակի ապահվման ընթացակարգի մշակմանը վերաբերող խորհրդատվությունները Կոնսերվատորիայի կողմից չեն կատարվել:

Եզրահանգում

Փորձագիտական խումբը գտնում է, որ Կոնսերվատորիան չափանիշ 10-ի պահանջները չի բավարարում, քանի որ, ԵՊԿ-ի բոլոր գործընթացների որակի ապահովմանն ուղղված քաղաքականությունը, որակի ապահովման ներքին համակարգը՝ գործընթացները, մեխանիզմները և գործիքները բացակայում են, որակի մշակույթի ձևավորմանը ոչ ինչ չի նպաստում:

Եզրակացություն

ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Մկրտիչ Այվազյան

01.02.2020
09.03.2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Մկրտիչ Այվազյան** - 2000թ ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 2003թ ստացել է ֆիզ, մաթ գիտությունների թեկնածուի աստիճան: 2009-2013 թ աշխատել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում որպես Մշակումների և զարգացման բաժնի մասնագետ,Քարտուղարության ղեկավար, Ինստիտուիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավա: 2012թ-ից մինչ օրս Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում նախ որպես ուսումնական վարչության պետ, այնուհետև՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր: Բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ:
2. **Նարինե Խաչատրյան** -1999 թ ավարտել է ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժինը: 2008թ ստացել է դոցենտի աստիճան: 2011թ-ից ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ է: 2011թ-ից ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի գիտական ղեկավար:
3. **Մարգուս Պարտլաս** - 2004 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում, Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիայում: 2003 թվականից Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիայի Գիտական գործերի և հետազոտությունների պռոռեկտոր: 2014 թվականից Էեստի համերգների պետական ինստիտուտի խորհրդի անդամ է:
4. **Ցան Ռադեմակերս** - Մաստրիխտի երաժշտության ակադեմիայի նախկին ռեկտոր, Նիդերլանդներ, 2017 թվականից նույն ակադեմայի դեկան
5. **Անահիտ Տերտերյան** - 2018թ-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիալական մանկավարժության բաժինը: 2018-2020 թ սովորում է ԵՊՀ Կրթության կազմակերպում բաժնում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

09.12.2019–13.12.2019թ.

	09.10.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ԵՊԿ ռեկտորի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում ուսումնական գծով, գիտական գծով, միջազգային համագ. և հասարակ. Կապերի հետ գծով, ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորների հետ	10:25	11:25	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:35	12:20	45 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	13:40	14:25	45 րոպե
6	Հանդիպում Կառավարման խորհրդի ներկայացուցիչների հետ	14:35	15:20	45 րոպե
7	Հանդիպում ԵՊԿ գործատուների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	15:30	16:30	60 րոպե
8	Հանդիպում Ուսումնական մասի ներկայացուցիչների հետ	16:40	17:40	60 րոպե
9	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	18:40	50 րոպե
	10.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Ռեսուրսների դիտարկում (ժող. Ստեղծագ. Ուսումնասիր. լաբորատորիա, ակուստիկ լաբորատորիա, համակարգչային սրահներ, գրասենյակ, օպերային ստուդիա, կաբինետներ, գրադարան, բուժկետ, բուֆետ և այլն):	9:30	10:15	45 րոպե
2	Դասալսում – ժող. Գործիքների անսամբլ	10:30	11:00	30 րոպե
3	Հանդիպում ԵՊԿ շրջանավարտների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:00	12:00	60 րոպե
4	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ (8-10 հոգի)	12:10	13:10	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	14:20	14:40	80 րոպե
7	Այց ամբիոններ, դեկանատներ, փաստաթղթերի ուսումնասիրություն	14:45	16:45	120 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:55	18:25	90 րոպե
	11.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում բակալավրիատի, մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12 հոգի)	10:25	11:55	90 րոպե
3	Հանդիպում միջազգային ուսանողների հետ (8-10 հոգի)	12:05	12:35	30 րոպե
4	Կամերային երաժշտության դեկանատի ներկայացում	12:45	13:00	15 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Բաց հանդիպում	14:10	14:50	40 րոպե

7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:00	16:20	80 րոպե
8	Դասալսում – Փողային նվագախումբ	16:30	16:45	15 րոպե
9	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:00	60 րոպե
	12.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի տնօրենի հետ	09:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում մասնաճյուղի վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների հետ	10:25	11:10	45 րոպե
3	Հանդիպում մասնաճյուղի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	11:15	12:00	45 րոպե
4	Հանդիպում մասնաճյուղի ուսանողների ներկայացուցիչների հետ (բակալավր, մագիստրատուրա) (8-10 հոգի)	12:10	12:55	45 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Հանդիպում ԵՊԿ ստորաբաժանումներում (Կադրերի բաժին, գլխավոր իրավախորհրդատու, հաշվապահություն, միջազգային համագ. և հասարկ. Կապերի բաժին, գիտական քարտուղար)	14:00	15:00	60 րոպե
7	Հաշվետու համերգ կամերային երաժշտության տանը	15:00	16:00	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	18:10	120 րոպե
	13.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրած կազմի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:10	60 րոպե
6	ԵՊԿ ռեկտորի հետ հանդիպում	15:20	16:00	80 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ քննարկում	16:00	18:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	ԵՊԿ պրոռեկտորների կատարած հաշվետվություն նախորդ 2012-2017 թթ ՌԾ	2
2.	Ներքին ու արտաքին շահակիցների հետ հանդիպումները և քննարկումները փաստող հիմքեր	8
3.	ՌԾ-ով սահմանված խնդիրների և գործողությունների իրականացումը և մշտադիտարկումը գնահատող համապատասխան հիմքերի ձևաչափ (իրականացվել է ՈՆԱ բաժնի կողմից)	10
4.	Ռեկտորի վերջին 4 տարիների տարեկան հաշվետվություններ, Գիտական խորհրդի և Կառավարման խորհրդի այն նիստերի արձանագրությունները, որի ժամանակ ռեկտորը ներկայացրել է տարեկան հաշվետվություն, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունների օրինակներ	2
5.	Ներկայիս Գիտական խորհրդի կազմը և հրամանը	2
6.	Կառավարման խորհրդի որոշումների արձանագրություններ, քաղվածքներ վերջին 3 տարիների:	2
7.	2012- 2017թթ. Ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույց	1
8.	2014-2016 թթ-ին կատարված ՄԿԾ-ների համեմատական վերլուծությունը, որի ընթացքում համադրվել են ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմի, շահակիցների կարծիքներն ու առաջարկները:	3
9.	«Երաժշտական կատարողական արվեստ» կրթական ծրագիրը	3
10.	Ուսանողի գիտելիքների ստուգման կարգ	2
11.	3 մասնագիտություններ դասընթացների գործող նկարագրերը	3
12.	Կամընտրական առարկաների ընտրության ցանկ	2
13.	Ուսանողների համար /մի կուրս/ բազմաբաղադրիչ գնահատման լրացված օրինակ՝ բաղադրիչների միջոցով վերջնական գնահատականի ձևավորումը:	4
14.	Ավարտական աշխատանքների /մագիստրատուրա/ օրինակներ	3
15.	Թեզերի և ավարտական աշխատանքների, պրակտիկայի գնահատման չափանիշներ, դրանց վերաբերյալ կանոնակարգ	3
16.	Վերջին տարիների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների կարծիքներ	2
17.	ԵՊԿ-ի ամենամյա ներբուհական մեթոդական գիտաժողովի տպագրած նյութերը (հոդվածների ժողովածու, ամսագիր և այլն), որտեղ քննարկվում են ՄԿԾ-ները, առարկայական ծրագրերը, դասավանդման մեթոդաբանությունը և ներկայացվում են նորությունները:	3
18.	ՈՒսանողների, շրջանավարտների ՄԿԾ-ներից գոհունակությունն արտահայտող հարցման արդյունքներ	4
19.	Ուսանողների շրջանում անցկացվող հարցումների հարցաթերթերի նմուշներ	4
20.	ՈՒԽ վերջին տարիների հաշվետվություններ	4

21.	Հարցաշար, վերլուծության արդյունքներ, որտեղ ուսանողները գնահատել են դասավանդման հմտությունները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետությունը:	10
22.	Դասախոսներին հավելավճարների տրման կարգ/հրաման, գիտխորհրդի արձանագրություններ	5
23.	Դասախոսների տարեկան ծանրաբեռնվածության հաշվարկման նորմատիվ փաստաթուղթ	5
24.	«Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականի և ուսումնամեթոդական աշխատանքների ժողովածուի օրինակներ	3
25.	«Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» գիտական լաբորատորիայի հաշվետվություններ	2
26.	Օտարերկրյա տարբեր ուսումնական հաստատությունների հետ կնքված համաձայնագրեր, պայմանագրեր	9
27.	ԵՊԿ ֆինանսական մուտքեր ելքեր, Աշխատավարձերի բաշխում	7
28.	Արտաքին կապերի զարգացման հայեցակարգ	9
29.	Պայմանագրերը որոնք կնքվել են համաեվրոպական՝ Պորտուգալիայի, Իտալիայի, Ավստրիայի, Հոլանդիայի, Ֆինլանդիայի, ինչպես նաև Շոտլանդիայի երաժշտական բուհերի հետ, ինչպես նաև հաշվետվությունները և շարժունությունը փաստող տվյալներ	9
30.	ԵԿԱ-ի շրջանակներում վերջին տարիներին իրականացված շարժունությունը փաստող տվյալներ	9
31.	ԵՊԿ-ի վերջին 3 տարիների ընթացքում վերանայված և նոր կնքված պայմանագրերը Մոսկվայի պետական կոնսերվատորիայի, Սանկտ Պետերբուրգի պետական կոնսերվատորիայի, Ղազախստանի արվեստների ազգային համալսարանի, Տրոմսոյի /Արկտիկ/ համալսարանի, Մոնղոլիայի երաժշտության և պարի քոլեջի հետ	9
32.	ՈԱ բաժնի կանոնակարգի հաստատված տարբերակ	10
33.	Գյումրում մասնաճյուղի կառուցվածքը	2
34.	ՊԴԿ-ի միջին տարիք	5
35.	Ուսանող-դասախոս հարաբերակցություն, ուսումնաօժանդակ	5
36.	Արտագնա, ներգնա ուսանողների, դասախոսների պայմանագրերի օրինակներ	5
37.	Բյուջեի բաշխում – բացված, աշխատավարձի տոկոսային բաշխումը ըստ ՊԴԿ-ի, վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի	7
38.	ԵՊԿ ԿԾ-ների հանձնաժողովի հաշվետվություն	3
39.	ԵՊԿ Կոմպոզիցիայի ամբիոնի հաշվետվություն	2
40.	Ընդունելության քննությունների ծրագրեր	4

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Օպերային ստուդիա
2. Գրադարան, ընթերցասրահ
3. Համակարգչային լսարան
4. Ֆակուլտետներ
5. Ամբիոններ
6. Ֆոլկլորագիտության լաբորատորիա
7. Զայնադարան
8. Բուժկետ
9. Ինովացիոն ակուստիկ լսարան
10. Երաժշտագիտական կենտրոն

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԳԱՑ** – գնահատման առանցքային ցուցանիշների
2. **ԵԲԿՏ** _ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
3. **ԵԿԿՓՀ** _ եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
4. **ԵՊԿ - Երևանի պետական Կոնսերվատորիա**
5. **ՄԿԾ** _ մասնագիտության կրթական ծրագիր
6. **ՄՈՒՀ** - Մասնագիտական ուսումնական հաստատություն
7. **ՈԱ** _ Որակի ապահովում
8. **ՈԱԱԿ**_«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
9. **ՈԱԵՉՈՒ** _ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
10. **ՈԱՇ** _ որակավորումների ազգային շրջանակ
11. **ՊԴԿ** _ Պրոֆեսորադասախոսական կազմ
12. **ՊԻԳԲ** _ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
13. **ՌԾ** _ Ռազմավարական ծրագիր
14. **ՌՊ** _ Ռազմավարական պլան
15. **ՈՒԽ** _Ուսանողական խորհուրդ
16. **ՈՒԳԸ**- Ուսանողական գիտական ընկերություն